Ընդ որում, ամենուրեք կոլորադյան բզեզի ձմեռումից դուրս եկած չափահաս ձևերը բարենպաստ ջերմաստիճանի դեպքում անմիջապես կան շուտով բարձրանում են կարտոֆիլի տերևների վրա, և շուրջ 3—7 օրերի ընթացքում որոշ չափով սնվելուց և կազդուրվելուց հետո գտնում են իրենց հակառակ սեռին, բեղմնավորվում են և սկսում զարգացման ցիկլը: Անբարենպաստ ջերմաստիճանի և շարունակաբար ընթացող տեղումների պատճառով ձմեռումից դուրս եկած չափահաս այդ ձևերը բավականին երկար ժամանակ (3—10 օր) դեռ մնում են հողի մակերևույթին կամ նրա 1—2 սմ խորություններում: Սկզբում կարտոֆիլի տերևների վրա շատ են լինում արուները, որոնք էգերի թվաքանակին գերազանցում են շուրջ 10 անգամ, մինչդեռ ապրիլի վերջերին և մայիսի սկզբներին արուների և էգերի քանակը հավասարվում է, իսկ մայիսի վերջերից մինչև ամբողջ կենսացիկլի վերջը, որը այստեղ ավարտվում է հոկտեմբերի կեսերին, էգերը արուներին գերազանցում են 10—15 անգամ:

Էգ բզեզների բեղմնավորությունը կատարվում է արևոտ օրերին և այդ պրոցեսը իր մաքսիմում չափերին է հասնում ժամը 12—15 ընկած ժամանակահատվածում:

ԼՂՀ միջին լեռնային գոտում կոլորադյան բզեզը տալիս է 3 սերունդ, բարձր լեռնային շրջաններում 2 սերունդ, բոլորն էլ գերազանցապես կարտոֆիլի վրա, թեկուզ առանձին դեպքերում նա 3-րդ սերունդը առաջացնում է նաև բադրիջանի վրա: Ձվադրությունից 5—6 օր հետո դուրս են գալիս առաջին աստիճանի թրթուրները (աղյուսակ 3), որին գրեթե նույն տևականությամբ իրար հաջորդում են 2-րդ, 3-րդ և 4-րդ աստիճանի թրթուրների առաջացում: Այնուհետև 4-րդ աստիճանի թրթուրները անցնում են հող և շուրջ 7 օրվա ընթացքում, դառնում են 1-ին գեներացիայի չափահաս բզեզ, որոնք էլ բարձրանում են կարտոֆիլի կամ բադրիջանի տերևների վրա, բեղմնավորվում և շարունակում են իրենց կենսացիկլը նույն կարգով՝ առաջացնելով 2-րդ և 3-րդ սերունդը: 4-րդ սերնդի չափահաս ձևերը որոշ տեղերում կոլորադյան բզեզը առաջացնում է բադրիջանի վրա: Կախված ջերմաստիճանից և տեղումներից՝ բզեզի կենսացիկլի առանձին շրջանները կարող են երկարաձգվել 1—2 օրով:

Աղյուսակ 3

Կոլորադյան բզեզի ծնեռող ձևերի և I և II սերնդի զարգացման առանձնահատկությունները ԼՂՀ մախալենային, միջին և բարձր լեռնային գոտիներում 1997—98 թթ.:

Զարգացման աստիճանը և հասակը	Ընակյալայական գոտու անվանումը					
	մախալենային		միջին լեռնային		բարձր լեռնային	
	1997	1998	1997	1998	1997	1998
Ծնեռած ձևերի հողից դուրս գալու սկիզբը	10-14/IV	8-12/IV	27-30/IV	18-22/IV	10-14/V	8-12/V
Բեղմնավորման շրջանի սկիզբը	18-22/IV	16-20/IV	27-30/IV	1-4/V	15-19/V	14-18/V
I ձվադրության սկիզբը	25-29/IV	22-26/IV	2-6/V	1-4/V	15-19/V	13-17/V
I աստիճանի թրթուրների առաջացումը	1-4/V	29/IV-3/V	8-12/V	6-10/V	23-27/V	19-23/V
II աստիճանի թրթուրների առաջացումը	3-7/V	2-6/V	11-15/V	9-13/V	26-30/V	23-27/V
III աստիճանի թրթուրների առաջացումը	8-12/V	7-11/V	16-20/V	13-17/V	30/V-4/VI	27-30/V
IV աստիճանի թրթուրների առաջացումը	13-17/V	12-16/V	21-25/V	18-22/V	6-10/VI	5-9/VI
հալունյակագույացում	20-24/V	19-23/V	28/IV-2/V	25-29/V	13-17/VI	12-16/VI
I գեներացիայի չափահաս ձևերի գոյացումը և բեղմնավորությունը	28/IV-2/V	27/V-1/VI	6-10/VI	5-9/VI	21-25/VI	20-24/VI
I աստիճանի թրթուրների գոյացումը	1-5/VI	30/V-4/VI	9-13/VI	8-12/VI	25-29/VI	24-28/VI
II աստիճանի թրթուրների գոյացումը	5-9/VI	4-8/VI	11-15/VI	10-14/VI	27-30/VI	26-30/VI
III աստիճանի թրթուրների գոյացումը	9-13/VI	8-12/VI	15-19/VI	14-18/VI	1-5/VII	1-4/VII
IV աստիճանի թրթուրների գոյացումը	13-17/VI	12-16/VI	20-24/VI	19-23/VI	6-10/VII	5-9/VII
Յարունյակագույացում	19-23/VI	18-22/VI	26-30/VI	25-29/VI	12-16/VII	13-17/VII
II աստիճանի չափահաս ձևերի առաջացում և բեղմնավորություն	25-29/VI	24-28/VI	3-7/VII	2-6/VII	21-24/VII	19-23/VII

Ծանոթություն— Յուրաքանչյուր գոտում հետազոտությունները կատարվել են 4 տարբեր տնտեսություններում (կետերում):

Կոլորադյան բզեզի տարբեր գեներացիայի բեղունությունը՝ մեկ ձվադրության ժամանակ արտադրած ձվերի քանակը, լինում է տարբեր և սովորաբար լինում է 300—1200-ի սահմաններում: Այն ամենաբիչն է լինում ծնեռումից դուրս եկած էգե-

րի մոտ, ամենաշատը՝ 1-ին զեներացիայի չափահաս էգերի մոտ: Բացի դրանից միջին լեռնային գոտում ձվերի քանակը ավելի շատ է լինում (800—900), քան բարձր լեռնային շրջաններում (250—500):

Չափահաս բզեզները միջին, բարձր լեռնային գոտում հողում ծնեման են անցնում հոկտեմբերի սկզբներին, ընդ որում առաջին գոտում դա նրանց հավանաբար ստիպում է սննդի տևական պակասը, երկրորդում՝ ցածր ջերմաստիճանը: Սակայն դա կատարվում է ոչ միանգամից, շուրջ 7—10 օրերի ընթացքում նրանք քափատում են տարբեր բույսերի (մոլախոտերի) արանքում և հողի մակերևույթին:

Մեր դիտարկումները ցույց են տվել, որ կողորայան բզեզի ծնեող ձևերը պահպանվում են հողի վարելահողային շերտում մինչև 50—60 սմ խորության վրա, ընդ որում հոկտեմբերի վերջերին նրանք գտնվում են 5—10 սմ խորության վրա, նոյեմբերի վերջերին՝ 20—30 սմ խորության վրա, դեկտեմբերի կեսերին՝ մինչև 40—60 սմ խորության վրա:

Նախալեռնային գոտում նրանք տեղակայված են լինում հիմնականում 25—30 սմ խորության վրա (75 %), միջին լեռնային գոտում՝ 35—40 սմ վրա, բարձր լեռնային շրջաններում՝ 45—50 սմ վրա: 50—60 սմ խորություններում հանդիպում են նրանց սակավաթիվ առանձնյակներ՝ 10—15 %: Դա կապված է հավանաբար այն երևույթի հետ, որ հողը այդ շրջաններում ծմռանը տևական շրջանով չի սառչում: Հետևապես կարելի է նաև ենթադրել, որ նրանց մեծ մասը ցածր ջերմաստիճանից չեն մահանում և հաջորդ գարնանը դուրս են գալիս հողի մակերևույթ ու շարունակում են իրենց բնորոշ զարգացման ցիկլը:

Հանրագումարի բերելով թիվ 3 աղյուսակի տվյալները, մենք կարող ենք նշել, որ ԼՂՀ-ի նախալեռնային գոտում ծնեած ձևերի հողից դուրս գալը տեղի է ունենում ապրիլի 10—12-ի ժամանակահատվածում, բեղմնավորությունը՝ ապրիլի 18—20-ի ժամանակահատվածում, ձվադրությունը՝ ապրիլի 24—27-ը, 1-ին սերնդի (զեներացիան) չափահաս ձևերի գոյացումը՝ մայիսի 29—30-ը, 2-րդ աստիճանի չափահաս ձևերի գոյացումը՝ հունիսի 26—27-ը ընկած ժամանակահատվածում: Միջին լեռնային գոտում կողորայան բզեզի ծնեած ձևերի հողից դուրս գալը տեղի է ունենում ապրիլի 20—23-ի ժամանակահատվածում, բեղմնավորությունը՝ ապրիլի 29-ից մայիսի 2-ը ընկած ժամանակահատվածում, ձվադրությունը՝ մայիսի 2-ից 4-ը, 1-ին սերնդի (զեներացիան) չափահաս ձևերի գոյացումը՝ հունիսի 7—8-ը, 2-րդ աստիճանի չափահաս ձևերի գոյացումը՝ հուլիսի 4—5-ը ընկած ժամանակահատվածում: Բարձր լեռնային գոտում ծնեած ձևերի հողից դուրս գալը տեղի է ունենում մայիսի 10-12-ը, բեղմնավորությունը՝ մայիսի 16—17-ը, ձվադրությունը՝ մայիսի 15—17-ը, 1-ին սերնդի (զեներացիան) չափահաս ձևերի գոյացումը՝ հունիսի 22—23-ը, 2-րդ աստիճանի չափահաս ձևերի գոյացումը՝ հուլիսի 21—22-ը ընկած ժամանակահատվածում:

Առաջիկայում մենք մտադիր ենք շարունակել այդ կարգի հետազոտությունները և դրանց հիման վրա ներկայացնել ավելի ընդգրկուն տեղեկություններ, որոնք եկարելի կլինի օգտագործել կողորայան բզեզի դեմ տարվող պայքարի համապատասխան ծրագրում:

*ԱրՊՀ գյուղատնտեսության ամբիոն
ԱրՊՀ բժշկա-կենսաբանական գիտությունների և քիմիայի ամբիոն*

1. Герасимов Б. А., Осницкая Е. А. - Вредители и болезни овощных культур, М., 1995.
2. Դաճիկյան Մ. Ե. — Պայքարի համալիր միջոցառումներ վնասատուների ու հիվանդությունների դեմ: Երևան, 1998 թ.:
3. Крыжановский О. Л., Мамаев В. М. - Жестокрылые или жуки. В книге: Жизнь животных. Под ред. Л. А. Зенкевича, т. 3, 1969, стр. 354-355.
4. Кузнецов Б. А., Чернов А. З. - Курс зоологии. М., 1978, стр. 171.
5. Под ред. Чувашина В. С. - Пособие по борьбе с вредителями и болезнями сельскохозяйственных культур. М., 1955.
6. Справочник по климату СССР.- Вып. 15, часть III, Температура воздуха и почвы. М., 1970.
7. Справочник по климату СССР - Вып. 15, часть IV, Влажность воздуха, атмосферные осадки и снежный покров. Л., 1971.

Ա. Ա. ԹՐՕՏՅԱՆ, Դ. Ա. ԱԿՕՊՅԱՆ, Ա. Բ. ԱԳԱՏՅԱՆ, Տ. Ա. ԱԳԱՏՅԱՆ

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ БИОЛОГИЧЕСКОГО РАЗВИТИЯ КОЛОРАДСКОГО ЖУКА (*LEPTINOTARSA DESEMLINEATA*) В РАЗНЫХ ПРИРОДНО- КЛИМАТИЧЕСКИХ ЗОНАХ НАГОРНОГО КАРАБАХА

Резюме

В 1997-1998 гг. в разных природно-климатических зонах Нагорно-Карабахской республики, находящихся над уровнем моря 550-1900 м, изучены циклы развития колорадского жука (*Leptinotarsa deeseilineata*) и установлены некоторые особенности сроков выхода из почвы половозрелых зимовавших форм, сроков образования личинок, куколок и половозрелых форм I и II генерации.

A. A. TOROSIAN, G. A. AKOPIAN, A. B. AGASIAN, S. A. AGASIAN

SOME PECULARITIES OF COLORADO BEETLE (*LEPTINOTARSA DECEMLINEATA*) BIOLOGICAL DEVELOPMENT IN DIFFERENT CLIMATIC ZONES OF NAGORNO KARABAKH.

Resume

The article deals with some data of Colorado beetle (*Leptinotarsa deeseilineata*) biological development in different natural-climatic zones of NKRR, cultivating potato.

Ս. Ա. ԱՐԱՍՅԱՆ, Ա. Բ. ԱՐԱՍՅԱՆ, Գ. Վ. ԱՐԲԱՆՅԱՆ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԿՆԵՐ ԵՐԵՆԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԺԱՄՆԱԿԱՇԻՐՋԱՆՈՒՄ

Աշխատանքում ներկայացված են Լեոնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՀՀ) նորածին հայ երեխաների ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշները (զանգված, հասակ) արցախյան պատերազմի նախօրյակին (1987 թ.), շրջափակումների և պատերազմի ժամանակ (1989–1994 թթ.), ու հետպատերազմյան շրջանում:

Հետազոտությունների արդյունքների կենսաչափական (քիմոմետրիա) վերլուծության հիման վրա պարզարանվել է, որ նորածին երեխաների զանգվածը և հասակը խաղաղ ժամանակաշրջանում եղել են բարձր, քան շրջափակումների և պատերազմի ժամանակ: Դրանք լրիվ չեն վերականգնվել հետպատերազմյան 4 տարիների ընթացքում (1994, 1997 թթ.): Ընդ որում, զանգվածի փոքր չափը ամբողջ շրջանում մինչպատերազմյան ժամանակաշրջանի համեմատ եղել է հավաստի (>3), որը վկայում է, որ շրջափակումների և պատերազմի տարիներին իրող տեղի է ունեցել նորածին երեխաների զանգվածի զգալի պակասեցում (ռեփառացիա): Սակայն վերջինս միշտ չէ, որ ուղեկցվել է երեխաների հասակի նշանակալի կրճատմամբ (փոքրացմամբ): Այսպես, եթե երեխաների հասակի տարբերության հավաստիությունը 1991 թվականին 1987 թ-ի համեմատ կազմել է 3,8—3,9, ապա մյուս տարիներին այն տատանվել է 1,4—2,9 սահմաններում:

Երեխաների ընդհանուր առողջության հիմնական ցուցանիշներից մեկը հանդիսացող ֆիզիկական զարգացումը ԼՀՀ-ում մինչև վերջերս չի ուսումնասիրվել: Մինչդեռ դրա ուսումնասիրությունը, մեր կարծիքով, կարող է ունենալ որոշ գործնական և տեսական նշանակություն, քանի որ մի կողմից կպարզաբանվեն երեխաների բնականոն զարգացումը բնութագրող ինչ որ նորմեր, մյուս կողմից դրանք համեմատելով շրջափակումների և պատերազմի ու հետպատերազմյան ժամանակաշրջանի համեմատն ցուցանիշների հետ՝ կբացահայտվեն այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել այդ տարիներին երեխաների առանձին սեռահասակային խմբերի ֆիզիկական զարգացման ցուցանիշներում:

Ի դեպ հարկ է նշել, որ եթե մասնագիտական գրականության մեջ բավականին շատ աշխատանքներ կան երեխաների, դեռահասների և պատանիների ֆիզիկական զարգացման խնդրի շուրջը, որոնք վկայում են նրանց նորմերի և կրած փոփոխությունների մասին՝ կապված տարիքի, սեռի, հասարակական կյանքի բարեկեցիկ ընթացքի, կամ էլ դրա վատթարացման ու այլ գործոնների հետ [1, 2, 3, 4, 5, 6, 7], ապա նորածինների մասին նոր հետազոտություններ չկան, չնայած Հայաստանի Հանրապետությունում երեխաների ֆիզիկական զարգացումը համազանադրեն

ուսումնասիրված է:

Ելնելով վերոհիշյալից, ինչպես նաև այն հանգամանքից, որ շրջափակումների և պատերազմի ժամանակ ծնված երեխաների ֆիզիկական զարգացման խնդիրը մասնագիտական գրականության մեջ նոր հետազոտությունների չի արժանացել, մենք դրանք ուսումնասիրել ենք ինչպես խաղաղ ժամանակաշրջանում (1987 թ.), այնպես էլ Ադրբեյջանի կողմից ԼՂՀ ժողովրդի վրին փաթաթված շրջափակումների (1989—1990 թթ.), պատերազմի (1991—1994 թթ.) ժամանակ և հետպատերազմյան հրադադարի շրջանում (1994—1997 թթ.):

Ուսումնասիրությունները կատարվել են հիմնականում հանրապետական ծննդատանը ծննդաբերած կանանց և նրանց երեխաների բժշկական քարտերի վերլուծության հիման վրա: Հետազոտվել է 3000-ից ավելի նորածին երեխաների (տղա, աղջիկ) մարմնի զանգվածը և հասակը, որոնք ներկայացնում են հանրապետության բոլոր շրջանները և բնակիչմայական գոտիները:

Ստացված տվյալները ենթարկվել են կենսաչափական (քիմետրիա) մշակման՝ յուրաքանչյուր ցուցանիշի համար որոշելով համակշռված միջինը (M), միջինի քառակուսային շեղումը (Տ), համակշռված միջինի սխալը (m), վարիացիայի գործակիցը (C) և տարբերության հավաստիությունը (t):

Խաղաղ ժամանակ (1987 թ.) ծնված երեխաների ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշների վերլուծությունը (աղյուսակ 1), ցույց է տալիս, որ տղաների մարմնի զանգվածը կազմել է միջինում 3500 գ, հասակը՝ 51 սմ: Աղջիկների մոտ դրանք կազմել են համապատասխանաբար 3360 գ և 50,6 սմ: Ընդ որում, տղաների մարմնի զանգվածի և հասակի տարբերությունը (մեծ չափը) աղջիկների համեմատ եղել է հավաստի (>3), որը վկայում է, որ նորածին տղաները իրենց մարմնի զանգվածի և հասակի ցուցանիշով իրոք նշանակալի գերազանցում են աղջիկներին:

Աղյուսակ 1

Նորածին երեխաների մարմնի զանգվածը (գ) և հասակը (սմ)

ցուցանիշ	հետազոտված երեխա (n)	տղա			աղջիկ			
		M	±σ	±m	M	±σ	±m	t
Մարմնի կշիռը (կգ)	360	3500	490	25,80	3360	330	17,39	4,50
Մարմնի երկարությունը (սմ)	360	51,0	1,60	0,08	50,60	1,40	0,07	3,76

մինչպատերազմյան ժամանակաշրջանում (1987 թ.):

Բացի դրանից պարզվել է, որ գյուղաբնակ կանանց նորածին երեխաների մարմնի զանգվածը (կշիռ) և հասակը (երկարություն) քաղաքաբնակների համեմատ եղել է որոշ ավելին և տղաների համար կազմել է միջինում 3650 գ և 51,5 սմ, իսկ քաղաքաբնակների համար դրանք կազմել են համապատասխանաբար 3490 գ և 50,4 սմ (>3): Գյուղաբնակ կանանց աղջիկ երեխաների մարմնի զանգվածը կազմել է միջինում 3460 գ, հասակը՝ 50,5 սմ: Քաղաքաբնակների համար դրանք եղել են 3210 գ և 50,3 սմ (>3):

Հետազոտված երեխաների խմբում մարմնի զանգվածի միմիումը կազմել է 2400 գ, իսկ հասակինը՝ 44 սմ: Չանգվածի և հասակի մաքսիմումը արձանագրվել է 2—3-րդ ծննդաբերությունից ծնված տղա և աղջիկ երեխայի մոտ և երկու դեպքում կազմել է 5300 գ և 56 սմ: Ընդ որում, աղջկա մոտ այդ ցուցանիշը արձանագրվել է 3-րդ ծննդաբերության ժամանակ, տղայի մոտ՝ 2-րդ ծննդաբերության ժամանակ: Հասակի և զանգվածի միմիումը (44 սմ և 2400 գ) արձանագրվել է ինչպես առա-

ջին, այնպես էլ 2—6-րդ և ավելի ծննդաբերությունների ժամանակ: Դրանից կարելի է եզրակացնել, որ ուղղակի կապ չկա նորածին երեխաների ֆիզիկական զարգացման (զանգված, հասակ) միմիայն ցուցանիշների և նրանց մայրերի հաջորդական ծննդաբերության միջև, այդ այն դեպքում, երբ մաքսիմումները արձանագրվեն միայն 2-րդ և 3-րդ ծննդաբերության ժամանակ:

Աղյուսակ 2

ԼՂՀ հարթավայրային, նախալեռնային, միջին լեռնային և բարձր լեռնային

Գոտու անվանումը	բարձր. ծովի մակերևույթից (մ)	հետազոտվել է երեխա (n)	զանգված (գ)		հասակ (սմ)	
			միջին	տատանում	միջին	տատանում
Հարթավայրային	175—350	140	3200	2200—3800	50,1	44—54
Նախալեռնային	360—600	140	3275	2400—4200	50,3	47—53
Միջին լեռնային	750—1000	140	3496	2500—5300	51,1	44—56
Բարձր լեռնային	1200—1800	140	3712	2400—4200	51,5	45—55

գոտում ապրող կանանց նորածին երեխաների զանգվածը և հասակը:

Գյուղաբնակ կանանց նորածին երեխաների ֆիզիկական զարգացման այսպիսի բարձր ցուցանիշները մենք, ինչպես նախկինում շատ հետազոտողներ, հավելած ենք բացատրել առաջին հերթին նրանց մայրերի հղիության շրջանում ստացած առավել բավարար և լիարժեք սննդով, ինչպես նաև նրանց այդ շրջանում վարած ավելի շարժուն կենսակերպով:

ԼՂՀ բնակլիմայական գոտիների կարվածքով նորածին երեխաների մարմնի զանգվածի և հասակի ուսումնասիրությունը ցույց է տալիս (աղյուսակ 2), որ հարթավայրային գոտու բնակավայրերում (գ. գ. Լենինավան, Մարաղա, Սեյսուլան, Կարմիրավան և այլն) ծնված նորածին երեխաները ունեն ավելի փոքր զանգված (3200 գ) և հասակ (50,1 սմ), քան նախալեռնային, միջին և բարձր լեռնային գոտիների բնակավայրերում մշտապես բնակվող կանանց նորածինները, չնայած նախալեռնային բնակավայրերում (գ. գ. Մաղավուզ, Մոխրաթաղ, Խրամոթք, ավան Մարտունի, Հաղորթ և այլն) ծնվածների մարմնի զանգվածի և հասակի տարբերությունները ցածրադիր հարթավայրային շրջանում ծնվածների համեմատ եղել է ոչ մեծ և կազմել է միջինում 3275 գ և 50,3 սմ ($t < 3$):

Միջին և բարձր լեռնային գոտիների գյուղերում ծնված երեխաների ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշները (զանգված, հասակ) նշանակալի բարձր են եղել նախորդ երկու շրջաններում (գոտի) ծնվածների համեմատ և այդ տարբերությունները եղել են հավաստի ($t > 3$): Միջին լեռնային գոտում (որը իր մեջ ներառում է Ստեփանակերտի շրջանի Նորագյուղ, Խնձրիստան, Սեյդիշեն, Մեղրաձոր, Մարտակերտի շրջանի Հաթեք, Մոստ, Վաղուհաս, Մարտունու շրջանի Հեփեք, Կարմիր շուկա և այլ բնակավայրերը) նորածին երեխաների մարմնի զանգվածը կազմել է միջինում 3496 գ, հասակը՝ 51,1 սմ:

Երեխաների առավել մեծ զանգվածը և հասակը արձանագրվել է Շուշիի և Մարտակերտի շրջանի բարձր լեռնային գոտում գտնվող բնակավայրերում և նրանց միջինը կազմել է 3712 գ և 51,5 սմ, իսկ միջին լեռնային գոտում դրանք կազմել են համապատասխանաբար 3496 գ և 51,1 սմ:

Ակնհայտ է, որ ԼՂՀ միջին և բարձր լեռնային բնակավայրերում ծնված երեխաների ֆիզիկական զարգացման առավել բարձր ցուցանիշները նույնպես պետք է բացատրվեն առաջին հերթին նրանց մայրերի հղիության շրջանում ընդունած բավարար և լիարժեք, հատկապես վիտամիններով հարուստ սննդով և մեծ շարժունությամբ:

ԼՂՀ նորածին երեխաների մարմնի զանգվածի (զ) և հասակի (սմ) ամսական և սեզոնային փոփոխությունները (1987 թ.)

ամիսը և սեզոնը	հետազոտվող երեխա (n)	Տղամարդիկ						Աղջիկ					
		Զանգված			Հասակ			Զանգված			Հասակ		
		M	$\pm m$	$\pm \sigma$	M	$\pm m$	$\pm \sigma$	M	$\pm m$	$\pm \sigma$	M	$\pm m$	$\pm \sigma$
XII	30	3400	88	480	50.6	0.28	1.56	3400	90	500	50.4	0.24	1.30
I	30	3650	130	700	51.0	0.25	1.40	3200	90	500	51.3	0.45	2.50
II	30	3500	80	440	51.0	0.50	2.70	3300	90	500	50.4	0.25	1.40
Ձմեռ	90	3516	99	540	50.9	0.34	1.89	3300	90	500	50.7	0.31	1.70
III	30	3400	90	340	50.7	0.27	1.50	3300	70	400	50.5	0.27	1.50
IV	30	3600	100	360	51.0	0.45	2.50	3400	100	500	50.9	0.50	2.70
V	30	3500	80	350	51.3	0.27	1.50	3400	90	500	50.5	0.26	1.40
Փարուն	90	3500	90	350	51.0	0.33	1.83	3367	90	500	50.6	0.34	1.90
VI	30	3390	70	339	50.8	0.22	1.20	3200	90	500	49.9	0.33	1.80
VII	30	3500	90	350	51.0	0.40	2.00	3400	120	600	50.5	0.30	1.70
VIII	30	3420	70	342	50.6	0.23	1.25	3350	78	430	50.3	0.27	1.50
Ամառ	90	3436	70	343	50.8	0.28	1.48	3317	96	510	50.2	0.30	1.70
IX	30	3400	60	340	50.7	0.21	1.15	3300	70	380	50.4	0.19	1.10
X	30	3400	90	340	51.0	0.66	3.35	3300	100	600	50.5	0.25	1.40
XI	30	3420	80	342	50.7	0.27	1.50	3310	70	420	50.6	0.26	1.20
Աշուն	90	3423	80	340	50.8	0.38	2.00	3303	80	500	50.5	0.23	1.20

ԼՂՀ նորածին երեխաների մարմնի զանգվածը և հասակը խաղաղ ժամանակաշրջանում (1987 թ.), շրջափակման տարիներին (1989—1990 թթ.), պատերազմի ժամանակ (1991—1994 թթ.) և հետպատերազմյան շրջանում (1994—1997)

թիվ	Ռեստավորացիայի երեխա	զանգված (գ)					հասակ (սմ)				
		<i>M</i>	$\pm \sigma$	$\pm m$	<i>CV</i>	<i>t</i>	<i>M</i>	$\pm \sigma$	$\pm m$	<i>CV</i>	<i>t</i>
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
ա/տղա											
1987	360	3500	490	25.80	14.0	-	51.0	1.6	0.08	3.14	-
1989	120	3369	369	33.70	11.0	3.1	-	-	-	-	-
1990	120	3345	337	30.70	10.0	4.1	-	-	-	-	-
1991	120	3350	340	31.10	10.0	3.7	50.4	1.4	0.13	2.78	3.9
1992	120	3234	402	36.60	12.0	5.9	-	-	-	-	-
1993	120	3347	420	38.30	12.0	3.3	-	-	-	-	-
1994	120	3310	470	42.80	14.0	3.8	50.6	1.5	0.14	2.96	2.5
1995	120	3320	450	41.00	14.0	4.9	-	-	-	-	-
1996	120	3252	414	37.70	13.0	5.3	50.6	1.4	0.13	2.76	2.6
1997	120	3362	362	36.20	12.0	3.1	50.8	1.3	0.12	2.60	1.4
բ/աղջիկ											
1987	360	3160	330	17.39	9.8	-	50.6	1.4	0.07	2.78	-
1989	120	3250	327	29.86	10.4	3.2	-	-	-	-	-
1990	120	3091	366	33.42	11.8	7.1	-	-	-	-	-
1991	120	3248	330	30.14	10.2	4.8	50.1	1.3	0.12	3.05	3.8
1992	120	3231	391	35.70	12.1	3.5	-	-	-	-	-
1993	120	3232	386	35.25	11.9	3.8	-	-	-	-	-
1994	120	3192	470	42.92	14.7	3.6	50.3	1.5	0.14	2.98	1.9
1995	120	3200	390	35.62	12.2	6.6	-	-	-	-	-
1996	120	3220	354	32.33	11.0	3.8	50.3	1.5	0.14	2.98	1.9
1997	120	3214	400	36.53	12.4	3.6	50.3	1.2	0.12	2.39	2.1

Ծանոթություն: 1. Արցախյան պատերազմի տվյալները 1994 թ. գտնվում:

2. Համեմատությունը կատարված են 1987 թ. ցուցանիշների հետ:

Նորածին երեխաների մարմնի զանգվածի և հասակի բազմակի ուսումնասիրությունը ըստ տարվա ամիսների և սեզոնի (աղյուսակ 3) ցույց է տվել, որ այդ փոփոխությունները նշանակալի չեն, կամ ուրիշ ձևով ասած հավաստի չեն ($t < 3$), չնայած ծնունդի և զարման ամիսներին դրանք որոշ բարձր են եղել, քան ամռան և աշնան ամիսներին: Դրանցում գլխավոր նշանակություն ունեցող գործոնները նույնպես սնունդը և շարժունություններն են:

Շրջափակումների, պատերազմի և հետպատերազմյան հրադադարի շրջանում երեխաների ֆիզիկական զարգացման փոփոխությունները ներկայացված են թիվ 4 աղյուսակում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 1987 թ. խաղաղ ժամանակաշրջանի համեմատ 1989—1997 թթ. (շրջափակում, պատերազմ և հրադադար) նորածին տղա և աղջիկ երեխաների զանգվածը միշտ եղել է բավականին փոքր (ցածր) և այդ տարբերությունները (աղյուսակ 4) բոլոր տարիներին եղել են հավաստի ($t > 3$), իսկ հասակի ցուցանիշների տարբերությունները, բացառությամբ 1991 թվականին (պատերազմ) եղել են ոչ հավաստի ($t < 3$): 1991 թ. երեխաների ցածր հասակը 1987 թ. համեմատ և ս եղել է հավաստի, որը վկայում է այն մասին, որ այդ շրջանում (պատերազմ) երեխաների ֆիզիկական զարգացման ցուցանիշները շատ ավելի մեծ չափով են հետ ընկել, քան մյուս տարիներին ($t > 3$):

ԼՂՀ-ում նորածին տղաների և աղջիկների զանգվածի և հասակի ցածր ցուցանիշները շրջափակումների, պատերազմի և հետպատերազմյան հրադադարի շրջանում դարձյալ կարող է բացատրվել հղիության շրջանում նրանց մայրերի ոչ բավարար ու լիարժեք սնմամբ, չնայած չի բացառվում, որ որոշ բացասական նշանակություն ունեցել են մահ բացասական հույզերը (վիշտ, տառապանք, վախ, նյարդային գերլարություններ և այլն):

Շրջափակումների և պատերազմի ժամանակ, ինչպես նաև հրադադարի 4 տարիներին նորածին երեխաների զանգվածի և հասակի դինամիկայի ուսումնասիրությունը հիմք է տալիս նշելու, որ այդ տարիներին հղի կանանց թերսնման հետևանքով արգանդում զարգացող սաղմի և պտղի մոտ ավելի շատ չափով տուժել է մկանային հյուսվածքի աճը, որի արդյունքում նորածինները ունեցել են անհամեմատ փոքր զանգված ($t > 3$), այն դեպքում, երբ հասակի նվազման ցուցանիշները եղել են ոչ հավաստի ($t < 3$):

Բժշկականաբանական գիտությունների և քիմիայի ամբիոն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Агасян А. Б., Агасян С. А., Манасян В. III. - Показатели физического развития младших школьников Нагорного Карабаха. Ж. Гигиена и санитария, 1987, с. 87-88.
2. Антропова М. В. - Гигиена детей и подростков, М., 1982, с. 45-70.
3. Ермалова Ю. А. - Возрастная физиология, М., 1985, с. 5-10.
4. Կարապետյան Մ. Շ., Շախբերդյան Մ. Ա. — Տարիքային ֆիզիոլոգիա, 1981 թ., էջ 21—48:
5. Никитюк Б. А. - Факторы роста морфофункционального созревания организма (анализ наследственных и средовых влияний на постнатальный онтогенез), М., 1978.
6. Маркосян А. А. - Вопросы возрастной физиологии, М., 1974.
7. Мятюшонок М. Т. - Анатомия и гигиена младшего школьного возраста, М., 1970.

С. А. АГАСЯН, А. Б. АГАСЯН, Г. В. АБРААМЯН

ОСНОВНЫЕ ПОКАЗАТЕЛИ ФИЗИЧЕСКОГО РАЗВИТИЯ НОВОРОЖДЕННЫХ ДЕТЕЙ НКР В МИРНОЕ ВРЕМЯ И ИХ ИЗМЕНЕНИЯ В ЭКСТРЕМАЛЬНЫХ УСЛОВИЯХ

Резюме

В работе представлены основные показатели физического развития (масса, рост) новорожденных мальчиков и девочек Нагорно-Карабахской республики в период мира (1987), блокады, войны и перемирия (1989-1997 гг.). Установлено, что в период блокады, войны и перемирия вес новорожденных детей стал заметно уменьшаться ($t > 3$), тогда как низкие показатели роста не всегда оказывались достоверными ($t < 3$). Кроме того выявлены некоторые особенности физиологического развития детей, родившихся от матерей, постоянно проживающих в разных природно-климатических условиях республики. Помесячные и сезонные изменения массы и роста детей оказались недостоверными ($t < 3$).

S. A. AGASIAN, A. B. AGASIAN, G. B. ABRAHAMIAN

THE MAIN SIGNS OF PHYSICAL DEVELOPMENT OF NEW-BORN CHILDREN IN NKR IN PEACEFUL TIME AND THEIR CHANGES IN EXTREMAL CONDITIONS.

Resume

In the work are represented fundamental models of mental, physical development of new-born boys and girls of Nagorno-Karabakh Republic in the period of peace (1987), blockade, war and armistice (1989—1997 years).

It is established, that in the period of blockade, war and armistice the mass of new-born children became less ($t > 3$), when the low models of growth are not always trustworthy, or beyond all doubt. Besides it there are revealed some peculiarities of physiological growth of the children born from mothers who constantly lived in different natural-climatic conditions of the Republic.

Monthly and seasonal changes of mass and growth of children had been unauthentic ($t < 3$).

ՅՈՒ. Ա. ՍՈՒՄԵԼՅԱՆ, Գ. Հ. ԲԵԳԼԱՐՅԱՆ, Ռ. Խ. ԳԱԳԻՆՅԱՆ

**ԱՐՑԱՆԻ ԳԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՅՆԱԿԻ ԿՏՐՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝
ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԸՄԲՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ**

Վերջին տարիներին հրատարակվել են մի շարք աշխատանքներ [3, 5, 7, 10, 11], որոնցում մանրամասն հիմնավորվում են նորագույն տեկտոնական շարժումների բացահայտման և մորֆոստրուկտուրային վերլուծության համար գետերի թափվեզների թեքությունների ուսումնասիրության արդյունքների օգտագործման հնարավորությունները, ոչ միայն որակական, այլև քանակական առումներով: Մեթոդի օգտագործումը սերտորեն կապված է գետի նորմալ կտրվածք հասկացության հետ, որը լուսաբանված է Կ. Կ. Մարկովի, Ն. Ի. Մակավեևի աշխատություններում [8, 9]:

Գրականության մեջ նորմալ է համարվում գետի այն կտրվածքը, որն առաջանում է «գետի տվյալ հատվածում հունային պրոցեսների կողմից ներծին շարժումների առավել հնարավոր հավասարակշռման պայմաններում» (10, էջ 111):

Հայտնի է, որ գետերի թափվեզները հստակ և արագ կերպով են արձագանքում երկրակեղևի յուրաքանչյուր շարժմանը, ձևափոխելով իրենց երկայնակի կտրվածքները: Վերջիններիս ձևավորումը պայմանավորված է գետերի ջրաերկրաբանական ռեժիմով, ապարների լիթոգիական և պետրոգրաֆիական կազմով, երկրաբանական կառույցներով, ինչպես նաև ձևավորող մորֆոստրուկտուրաների նորագույն տեկտոնական շարժումներով: Երիտասարդ լեռնային շրջաններում գետերի երկայնակի կտրվածքների ձևավորման գործում վերջինիս դերը առավել զգալի է:

Սուբստրատի և երկայնակի կտրվածքների կապը բացահայտելու չափանիշները ոչ թե նրանց ձևախախտման բացարձակ մեծություններն են, այլ անոմալային տեղամասերի բացահայտումը: Յու. Ա. Մեշչերյակովը [10] և այլ հեղինակներ անոմալային են համարում գետերի երկայնակի կտրվածքների այն հատվածները, որի սահմաններում անկումը ավելի մեծ է, քան հոսանքով նրանից վեր ընկած հարակից հատվածում, այսինքն առանձնացվում են դրական անոմալիաներ: Ըստ որոշ հեղինակների [2, 5], գետերի թափվեզների անկման հաշվարկի առանձին դեպքերում հանդիպում են այնպիսի հատվածներ, որտեղ անկումը 2—3 անգամ փոքր է, քան հոսանքի ուղղությամբ նրանից ցած ընկած տեղամասում, որոնք համարվում են բացասական անոմալիաների տեղամասեր:

Անոմալային տեղամասեր առանձնացնելու նպատակով մեր կողմից կառուցվել են Արցախի և հարակից շրջանների մի շարք գետերի թափվեզների անկման անկյունների գրաֆիկներ (գծ. 1): Ի տարբերություն գետերի երկայնակի կտրվածքների կառուցման ավանդական մեթոդի, ուղղահայաց առանցքի վրա տրվում են ոչ թե բացարձակ բարձրությունները, այլ գետերի թափվեզների անկման անկյունների մեծությունները՝ աստիճաններով: Այն հնարավորություն է տալիս բացահայտելու գե-

PROBATION DEPARTMENT

տերի թալվեզներում տեղի ունեցող անճշան փոփոխությունները [5]: Կառուցվել են Թարթառ, Հագարու, Ալավնո, Իշխանագետ, Կառկառ, Խաչեն, Սևջուր գետերի թալվեզների անկման անկյունների գրաֆիկները և առանձնացվել դրական ու բացասական անոմալային տեղամասերը: Դրանց համադրումը երկրաբանական կտրվածքների հետ բացահայտեց, որ թալվեզային անկման անկյունների ձևափոխման պատճառները պայմանավորված են սուբստրատի տարատեսակ կառույցներով և տեկտոնական շարժումներով, ֆացիաների լիթոլոգիական հերթափոխմամբ:

Թարթառ գետի վերին հոսանքում, մինչև Քարվաճառ քաղաքը, անոմալային տեղամասերը առաջացել են պլիոցեն-պլեստոցենյան տարատեսակ լավային հոսքերի հետևանքով: Այնուհետև մինչև Վաղուհաս գյուղը գետը հոսում է նստվածքային ապարների վրայով և անոմալային տեղամասային առկայությունը պայմանավորված է ապարների լիթոլոգիական կազմի կտրուկ փոփոխություններով և տեկտոնական շարժումների բնույթով: Հոսանքով ցած մինչև Մաղաուզ գյուղը այն անցնում է Հաթեքի գոգավորության միջով, որտեղ բացասական անոմալային տեղամասի առաջացումը պայմանավորված է սինկլինալային կառույցով: Մատաղիս գյուղից ցած գետը հոսում է հզոր արտաբերման կոնի վրայով, որտեղ առաջացել են մի քանի դրական անոմալիաներ: Իշխանագետ, Խաչեն, Կառկառ գետերի վերին հոսանքներում անոմալային տեղամասերի բարձր խտությունը պայմանավորված է բեկվածքային տեկտոնական գոտով: Նշված գետերի միջին հոսանքներում դրական և բացասական անոմալային հատվածները կապված են տեկտոնական խզումների և անտիկլինալային ու սինկլինալային կառույցների հերթափոխման հետ:

Հագարու գետը վերին հոսանքում, մինչև Փչանիս վտակի ընդունելը հոսում է տարբեր կազմի լավային հոսքերի վրայով, մինչև Գոչաջուր վտակն ընդունելը այն անցնում է Փիրջանի սինկլինալային գոգավորության միջով, իսկ Լաչին քաղաքից ցած գետը հոսում է երկարածված սինկլինալային գոգավորությամբ [6]: Դրանք էլ պայմանավորել են տարբեր մեծության և ամպլիտուդայի տեղամասերի առաջացումը:

Անոմալային տեղամասերի սահմանները անցկացվել են քարտեզի վրա և այն դրական անոմալիաները, որոնք կապված են տեկտոնական շարժումների հետ, միացվել են զոնաներով (զծ. 2): Սրանք արտացոլում են հիմնական մորֆոտեկտոնական բեկորների սահմանները, որոնք նորագույն զարգացման փուլում ենթարկվել են տարբեր բնույթի տեկտոնական շարժումների ազդեցությանը: Խզվածքային գոտիների մի մասը մախկնուս բացահայտված է երկրաբանական մեթոդներով, իսկ մյուս մասը առաջին անգամ է առանձնացվում մեր կողմից:

Դրական անոմալային տեղամասային շրջանում անկման անկյունների մեծությամբ կարելի է որոշել նաև տեկտոնական բարձրացման աստիճանը և բնույթը: Թալվեզային անկման մեծ անկյունները համապատասխանում են առավել բարձրացող զոնաներին: Արցախի գետերի դրական անոմալային տեղամասերի գզալի մասի հարավ-արևմտյան հատվածները ռենն ալելի մեծ անկման անկյուններ, հետևաբար, բարձրացման զոնաները բնութագրվում են անհամաչափ կառուցվածքով կտրուկ բարձրացված հարավ-արևելյան թևով: Անոմալային զոնաների այդպիսի անհամաչափությունը և դասավորվածությունը ապացուցվում է քարտեզի սալերի տեկտոնիկայի տեսանկյունից:

Տեկտոնական կառուցվածքի տեսակետից Արցախի (Ղարաբաղի) անտիկլինորիտը մտնում է Վիրահայոց-Ղարաբաղի անտիկլինորիտային զոնայի կազմում և բաղկացած է յուրայի, կավճի ու պալեոգենի ապարներից [5]: Ջոնան ունի տեկտոնական տարրերի (բրախիանտիկլինորիտների ու բրախիսինկլինորիտների) կուլիսածև դասավորություն և ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ընդհանուր կովկասյան ուղղությամբ: Սակայն Շամքոր գետից հարավ զոնայի հարավ-արևելյան հատվածն ընդունում է մերձմիջօրեականի ուղղություն:

1. Бальян С. П. - Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей. Ереван, Изд. ЕГУ, 1969, 330 с.
2. Бобок Н. А. - Морфометрический анализ Северной Молдавии. Кишинев, Изд. «Штиница», 1980, 96 с.
3. Волков Н. Г. - К методике неотектонического анализа продольных профилей рек. Изд. АН СССР, сер. геогр. 1964, N 2, с. 125-132.
4. Габриелян А. А., Саркисян О. А., Симонян Г. П. - Сейсмоструктура Арм. ССР, Ереван, ЕГУ, 1981, 276 с.
5. Гагинян Р. Х. - Опыт анализа аномальных изменений продольных профилей рек Сюникского нагорья в целях изучения тектонических движений. - Изд. АН Арм. ССР. Научки о Земле, 1989, N 6, с. 55-58.
6. Геоморфология Азербайджана - Баку. Изд. АН СССР, 1969, 369 с.
7. Жуковский Ю. С. - Анализ падения продольного профиля рек и его значение при поисках тектонических структурных форм. Вестник ЛГУ, сер. геол. и геогр., 1965, вып. 1, N 6, с. 33-38.
8. Маккавеев П. И. - Русло реки и эрозия в ее бассейне. М., Изд. АН СССР, 1955, 346 с.
9. Марков К. К. - Основные проблемы геоморфологии. М., ОГИЗ, 1948, 343с.
10. Мещеряков В. А. - Избранные труды. Рельеф и современная геодинамика, М., Наука, 1981, 278 с.
11. Сетунская Л. Е. - Карты уклонов гидросети. - В кн.: Применение геоморфологических методов в структурно-геологических исследованиях. М., Недра, 19, с. 53-58.

Ю. А. АРАКЕЛЯН, К. А. БЕГЛАРЯН, Р. Х. ГАГИНЯН

АНАЛИЗ ПРОФИЛЕЙ ДЛИН РЕК АРЦАХА ДЛЯ ПРОЯВЛЕНИЯ ТЕКТОНИЧЕСКИХ ДВИЖЕНИЙ

Резюме

Профили длин рек, как морфометрический метод для изучения современных тектонических движений, широко используется многими исследователями. В противоположность традиционным составлением таблиц профилей длин рек, здесь мы имеем дело с углом падения реки (по градусам), отмеченным на вертикальной оси графы вместо высот, которые позволяют открыть наиболее незначительные изменения и деформации тальвеги. Таким образом, площади положительных и отрицательных движений морфоструктур или изменений литологии и их границы ясно указаны. Некоторые части этих положительных аномалий, связанных с тектоникой, объединяются в зону. Они обозначают границы основных морфотектонических блоков, претерпевших различные дифференцированные тектонические движения в течение последних стадий развития.

YURI A. ARAKELIAN, K. A. BEGLARYAN, R. KH. GAGINIAN

ANALYSIS OF THE LONGITUDINAL PROFILES OF ARTSAKH RIVERS TO FIND OUT TECTONIC MOVEMENTS

Summary

Longitudinal profiles of rivers, as a morphometric for studying the latest and present tectonics, is widely used by many investigators. In contrast to the traditional table-making of the longitudinal profiles, here we have the angle of river inclination (in degrees) marked on the vertical axis of the graph, instead of altitudes, which allows to reveal the most insignificant changes and deformations in talvegs. In this way areas of positive and negative motions of morphostructures or change of lithophasy and their bounds get clearly marked. Some part of these positive anomalies, connected with tectonics, are united into zones. They mark bounds of the main morphotectonic blocks undergone various differential tectonic motions during the latest stage of development.

К. О. ЕСАЯН

ОБЩИЕ ЧЕРТЫ И ОСОБЕННОСТИ ПРИВАТИЗАЦИИ В НОВООБРАЗОВАННЫХ СТРАНАХ (НА ПРИМЕРЕ НКР)

В настоящей статье автором делается попытка рассмотреть приватизацию как экономический процесс переходного периода, определить ее некоторые наиболее общие черты и особенности проявления в новообразованных странах, а также произвести небольшой анализ происходящего процесса разгосударствления государственной и кооперативной собственности на примере Нагорно-Карабахской Республики.

Переход от планово-административной экономики к рыночной сам по себе исключительно сложный и многогранный процесс, сердцевиной которого является приватизация. Кроме прочих факторов этот процесс осложняется еще и тем, что несмотря на определенный научно-теоретический задел созданный в этом направлении за последние годы учеными и специалистами разных стран постсоциалистического пространства, в целом отсутствует полноценная теоретическая база, особенно в новообразованных и еще официально непризнанных странах, к числу которых относится также и НКР.

Дело также в том, что в процессе перехода к новой системе общественно-экономических отношений непризнанные государства имеют отличные от бывших союзных республик исходные позиции. Кроме того переходный период в этих странах заметно осложнен военно-политической ситуацией, что в свою очередь, существенно сказывается на проведении экономических реформ, и прежде всего на выборе путей и методов приватизации, соответствующей данной ситуации.

Исходя из этого, мы полагаем, что любая разработка особенностей перехода к рынку в целом и процесса приватизации в частности, с учетом специфических условий в странах вышеназванной категории, может иметь определенную практическую и теоретическую значимость для формирования соответствующей, национальной модели рыночной экономики, являющейся основой их суверенитета и государственной независимости.

Все страны пережившие распад социалистической модели, экономически ощутившие непрогрессивность подобной формы хозяйствования и избравшие рыночную экономику встали перед тяжелой и неизбежной проблемой - реконструкции общества, необходимостью создания нового

из старого, т. е. практически из того, что необходимо изменить, переделать, воссоздать.

Не вдаваясь в подробности анализа процесса перехода от одного социально-экономического и историко-правового состояния общества в другое, лишь отметим, что по сравнению с традиционными формами и способом перерастания простого товарного производства в развитое рыночное хозяйство, нынешний переход предполагает специфические формы и методы формирования новых экономических отношений.

Центральным звеном в этом сложном процессе как и в любом другом историко-экономическом переходе является реформирование экономического базиса, способа производства-господствующей формы собственности на средства производства, т. е. отношение собственности.

Если абстрагироваться от малосущественных различий, то организационно-экономический процесс, в результате которого формируются новые отношения собственности, в экономической литературе и в официальных документах характеризуется (определяется) как приватизация.

Кстати заметим, что поскольку она выражает объективно существующие отношения в экономике переходного периода стран постсоциалистического пространства, то ее можно определить как экономическую категорию переходного периода.

В связи с этим мы полагаем, что приватизацию следует рассмотреть как организационно-экономический процесс, т. е. средство для достижения цели - формирования рыночной экономики, и как экономическую категорию, являющуюся теоретическим выражением реально существующих экономических отношений. В настоящей работе мы рассматриваем приватизацию как средство достижения цели, поэтому ее можно определить как: *процесс перехода государственной формы собственности на средства производства к многоформенной, с обязательным доминированием частной собственности.*

В данном определении приватизационный процесс нужно условно разделить на три момента: первый - разгосударствление т. е. расформирование (реформирование) государственной (общественной) собственности, второе - образование многоформенной собственности и возникновение многоукладной экономики переходного периода, третье - доминирование частной собственности особенно на основные средства производства.

Теоретическое расчленение процесса приватизации на три взаимосвязанные и взаимообусловленные моменты позволяет наиболее наглядно проследивать причинно-следственные связи между ними.

Важность последних определяется необходимостью теоретического осмысления особенностей каждого этапа в данной стране; а также в интересах реализации эффективного механизма управления процессом приватизации.

Каждое общество в лице его государства выбирая формы и методы приватизации стремится пройти ее с наименьшими потерями (времени, средств, экономических потрясений, социальной напряженности и т. д.), сделать переход к рынку наиболее безболезненным.

Как известно эффективность приватизации зависит от многих экономических, политических, геополитических и других факторов. Однако выбор форм и методов приватизации с учетом особенностей проявления указанных факторов в конкретных национальных условиях является одним из важнейших задач государства, составляющий стержень его поли-

тики по экономическому управлению обществом.

Ведь не случайно, что в ряде стран этот процесс сопровождается социально-экономическим спадом различной продолжительности, а в других - непосредственным оживлением экономического роста. Поэтому удачный опыт приватизационных реформ реализованных и реализуемых в одних странах, в перспективе могут не увенчаться успехом в других.

На наш взгляд, определенный опыт перехода к рынку стран Центральной и Восточной Европы и новых независимых государств в целом приемлем и к нашей молодой республике - НКР.

Обобщая опыт приватизации в ряде стран (Польша, Чехословакия, Россия, Армения и др.) неизбежно приходим к выводу, что ее эффективность, помимо вышеуказанных факторов, зависит также от экономической и политической стабильности в обществе и что особенно важно - от принятых государством соответствующих законов и их соблюдения.

Общезвестно, что правильный выбор наиболее коротких и удобных путей продвижения к желаемой цели во многом зависит от наиболее точного определения местонахождения, т. е. исходного положения движущего субъекта.

Поэтому прежде чем рассмотреть процесс приватизации в НКР необходимо хотя бы в общих чертах охарактеризовать экономику и политическую обстановку республики накануне экономических реформ.

Во-первых: до 1990 г. народное хозяйство НКР выражало собою все основные черты экономики СССР. Ее экономика десятилетиями сформировалась в результате проведенной Азербайджаном целенаправленной государственной политики. В итоге достигнутая отраслевая структура экономического потенциала, размещение производительных сил, экономическая загрузка единицы территории несоответствовали естественно-экономическим условиям НК. Несмотря на заметные объемы выпускаемой областью промышленной и сельскохозяйственной продукции вся экономика функционировала в режиме внешней экономической и внешнеэкономической зависимости. Сказанное безусловно является предметом отдельного анализа, однако в настоящей работе мы касаемся к ней лишь с целью общей характеристики экономической ситуации доприватизационного периода.

Во-вторых: длительная блокада и война почти полностью разорили экономику. Достаточно отметить, что было уничтожено и парализовано 90% промышленности, 85-90% всех основных средств, 60% многолетних насаждений, 65-70% посевных площадей осталось вне сельскохозяйственного оборота, в десятки раз сократился объем товарооборота и многое другое.

Третье: Как правило в экстремальных ситуациях основные рычаги экономического и административного управления обществом концентрируются в руках государства, что имело место в НКР с 1990 по 1994 год. Это позволило государству решить проблемы обеспечения минимального жизненного уровня населения и снабжения армии в годы Азербайджанской агрессии. С другой стороны это обстоятельство в известной степени препятствовало процессу подготовки соответствующих условий для проведения приватизации.

Четвертое: начиная с 1988 года НКР находится в полной транспортной и коммуникационной блокаде, без перспектив ее ближайшего преодоления. Более того относительная блокада на наш взгляд будет

продолжаться долго. Поэтому это обстоятельство неизбежно накладывает свои отпечатки на весь процесс проведения экономических реформ и формирования рыночной экономики. Роль государства в управлении этим процессом в наших условиях должна быть более заметна чем в других странах переживающих процесс перехода от командно-административной экономики к рыночной.

Пятос: опыт показывает, что ни одна страна бывшего союза не может на должном уровне решить задачи формирования национальной, независимой экономики без хотя бы частичного восстановления прежних торгово-экономических связей с другими республиками или новых межгосударственных отношений аналогичного характера (таможенные союзы, координация основных принципов налоговой политики и т. д.).

В этом плане в наиболее сложной ситуации оказались новообразованные государства в том числе и НКР, экономика которых в условиях единого народнохозяйственного комплекса СССР носила исключительно открытый характер и функционирующих в двойном режиме внешней зависимости (от союзного и республиканских центров).

Поэтому ориентация НКР на Армению и прежде всего в области экономики (в самом широком смысле этой ориентации) обусловлена не только историческим стремлением двух частей одного народа к объединению, но и неизбежностью сложившейся экономической и политической ситуации.

Это обстоятельство в свою очередь предопределяет идентичность общих черт приватизации и других экономических реформ в РА и НКР.

Шестос: любой регулируемый экономический процесс, в том числе приватизация, предполагает наличие соответствующего законодательного поля, что в наших условиях стало возможным лишь начиная со второй половины 1994 года, после установления перемирия и режима относительного мира. За четыре последующих года Парламентом НКР были приняты сотни законов экономического блока, что позволило государству наряду с восстановлением народного хозяйства решить проблему создания прочных основ независимой экономики с преобладающим рыночным механизмом управления. Центральным звеном этого процесса безусловно стала приватизация во всех основных формах своего проявления с учетом особенностей конкретных условий НКР.

Изучение опыта, приватизационных реформ в республиках бывшего союза и прежде всего в Армении позволяет определить не только характерные, необходимые экономические, политические и другие предпосылки этого процесса, но и вычислить все то негативное и малоэффективное, что имело и зачастую имеет место в процессе приватизации в этих странах. Например, опыт показывает, что глобальный процесс разгосударствления и приватизации государственной собственности на средства производства в целом проходит три этапа (малая, средняя и большая приватизация), каждый из которых имеет свои особенности проявления в тех или иных странах (темпы, формы и т. д.). Вместе с тем, не трудно заметить, что отсутствие исторического преемства перехода к рыночной экономике от социалистического товарного хозяйства, отсутствие теоретической обоснованности многих экономических решений, а также историческое совпадение этого перехода с распадом единой страны (с единым народнохозяйственным комплексом) и провозглашением государственного суверенитета серьезно осложнили этот процесс. Практически одновре-

менно пришлось решить две сложнейшие задачи: создание национальной экономики в широком смысле этого слова и обеспечение ее перехода к рынку.

ЛИТЕРАТУРА

1. Отчет в мировом развитии.- 1997 г. Всемирный банк США. Вашингтон.
2. От плана к рынку. Всемирный банк США. Вашингтон.
3. Приватизация в РФ. (Нижегородская модель). Ежегодные издания правительства РФ. 1992-95 гг.
4. Теория и практика антикризисного управления. Высшая школа приватизации и предпринимательства.
5. Научные публикации Российской академии гуманитарных наук по теме "Экономика переходного периода", Москва, 1995 г.
6. Законы и законодательные акты НКР и РА.
7. Большой экономический словарь. Институт новой экономики. Москва, 1997 г.

Կ. Օ. ԵՍԱՅԱՆ

ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՆՈՐԱՍՏԵՂԾ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ (ԼՂՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ամփոփում

Սույն հոդվածում հեղինակը փորձում է դիտարկել սեփականաշնորհումը որպես անցումային ժամանակաշրջանի տնտեսական գործընթաց, բացահայտել նրա ընդհանուր դրույթները և առանձնահատկությունների արտահայտումը նորաստեղծ պետություններում, ինչպես նաև կատարել շարունակվող պետական ունեցվածքի ապապետականացման գործընթացի վերլուծություն և եռնային ղարաբաղի Հանրապետության օրինակով:

K. O. ESAYAN

GENERAL OUTLINES AND PEKYLIARITIES OF PRIVATISATION IN NEW FORMATED REPUTLIES (FOR RUSTANCE NKR)

Summary

In the article the author makes an attempt to consider privatisation as economical process of transitional period, to determine its some more general outlines and reculiarities of manifestation in new-formated countries, and also to execute some analise of current process of denationalisation of state and cooperative properti (For instance NKR).

Շ. Մ. ԱՔԱՆԱՅԱՆ

**ՂԱՐԱՔԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՏԵՄԱՆԿՅՈՒՆՈՎ**

Հայ ժողովրդի դարաքաղյան հատվածի համար մեր օրերում ամենակենսական պրոբլեմը աղյուսակա-դարաքաղյան կոնֆլիկտի լուծումն է, որը բնականաբար տեղիք է տալիս տարբեր վարկածների, կարծիքների ու վեճերի, ընդհուպ մինչև միջազգային ատյանները: Ներկա հողվածում չանդրադառնալով կոնֆլիկտի պատմական պատճառներին, որոնց մասին գրվել է բազմաթիվ անգամ, հեղինակը փորձել է անձնական տեսանկյունով անդրադառնալ հատկապես այն կարծիքին, որը հնչում է Աղյուսակի պրեզիդենտի ելույթներում և Արևմուտքի որոշ քաղաքական գործիչների առաջարկություններում:

Ամենից առաջ նշենք, որ տեսական քաղաքագիտության մեջ երաշխավորվող դրույթների համաձայն առաջօր վերոհիշյալ կոնֆլիկտի լուծման նպատակով օգտագործվել են համարյա բոլոր մեթոդները, որոնք նշանակալի արդյունքներ չեն տվել: Ուստի կոնֆլիկտի երկու կողմերը հանգել են այն եզրակացությանը, որ կոնֆլիկտի լուծման միակ և վերջնական միջոցը կարող է լինել բանակցությունների եղանակը: Ըստ որում, չեն բացառվում փոխզիջումները: Աղյուսակի պրեզիդենտ Հ. Ալիևի ելույթներում հնչում են հատկապես Աղյուսակի տերիտորիալ ամբողջականության պահպանման և ԼՂՀ-ին լայն ինքնավարության տրամադրման գաղափարները: Հ. Ալիևի կարծիքով Աղյուսակի կողմից կատարվող փոխզիջումը ըստ երևույթին հանդիսանում է ԼՂՀ-ին լայն ինքնավարության տրամադրումը: Փորձենք սակայն «լայն ինքնավարության» կապակցությամբ իրական փաստերով ու տվյալներով հսկիչը ներկայացնել այն քաղաքականությունը, որը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ վարել են Հ. Ալիևի նախորդները և որդեգրվել է հենց իր՝ Ալիևի կողմից դեռևս 60-ական թվականների վերջերին:

Հայտնի է, որ ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշման մեջ գրված էր. «... Ելնելով աղյուսակների ու հայերի միջև ազգամիջյան խաղաղությունից և վերին և ներքին Ղարաբաղի տնտեսական կապից, Լեռնային Ղարաբաղը թողնել Ադր. ԽՍՀ-ի շրջանակներում, նրան տրամադրելով մարզային լայն ինքնավարություն»¹:

Ուրեմն, Հ. Ալիևի խոստացած «լայն ինքնավարությունը», նրա նախորդները Ղարաբաղին տրամադրել են դեռևս 1921 թվականին: Իսկ ի՞նչ է հետևել իրականում վերոհիշյալ որոշմանը, ինչպե՞ս է իրականացվել ԼՂԽՄ-ին տրված ինքնավարությունը: Բերենք մի քանի տվյալներ՝ եզրակացությունները շատ դեպքերում թողնելով ընթերցողին: 1918—20 թվականներին աղյուսակների ձեռքով ավերվել էին Շուշի քաղաքը և 59 հայկական գյուղեր: Անօթևան էին մնացել 37 հազար գյուղա-

¹ Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ» թերթ, 23-ին մարտի, 1975 թ., հ. 69:

ցիներ²։ Ընդամենը երեք տարվա ընթացքում Ղարաբաղի հայ բնակչության ընդհանուր թիվը կրճատվել էր 42 հազար մարդով³։ «Լայն ինքնավարության հենց առաջին տարում Ղարաբաղի անօթևան գյուղացիությունը մարզգործկոմի միջոցով խնդրում է Ադրբեջանի իշխանություններին՝ իրավունք տալ Ղարաբաղի անտառներից փայտամյուր օգտագործել ավերված տները վերականգնելու համար։ Ի պատասխան այս խնդրանքի, մարզխորհրդի 4-րդ համագումարում մարզգործկոմի նախագահ Արմենակ Ղարաբյոկյանը հայտարարել է, թե հանրապետության ղեկավարությունը անօթևան հայ գյուղացիությանը ընդառաջելով, առաջարկում է Ղարաբաղում իրենց ավերված տները վերականգնելու փոխարեն տեղափոխվել Միրիի և Մուղանի հարթավայրերը, այնտեղ հաստատել վերաբնակություն, օգտվել կառավարության աջակցությունից և ակտիվորեն մասնակցել ցրանցքների շինարարությանը⁴։ Ադրբեջանի իշխանությունները համոզված էին, որ հայ գյուղացիները հազիվ թե մասսայական տեղափոխվեն հարթավայրեր, բայց միաժամանակ գիտեին, որ անօթևան մարդիկ մասսայաբար կհեռանան իրենց օջախներից, Աստված գիտե, թե ինչ ուղղությամբ։ Սկսվեց հորհրդային Ղարաբաղի հայ բնակչության առաջին ստվար արտահոսքը՝ 1921 թվականի համեմատությամբ 1926 թվականին մարզի հայ բնակչությունը կրճատվեց 32,5 հազարով⁵։ Մինչդեռ նույն ժամանակաշրջանում Ղարաբաղի թուրք բնակչությունը ընդհանուր թվաքանակով աճեց 4 %-ով⁶։ Բանն այն է, որ Ադրբեջանի իշխանությունները մարզի հայ բնակչության արտագաղթի կազմակերպմամբ հանդերձ, զուգահեռաբար մշակեցին նաև մարզի տարածքում քոչվոր թուրք բնակչությանը նստակյաց կյանքի փոխադրելու և վերաբնակություն հաստատելու խորամանկ քաղաքականություն։ Այս քաղաքականությունը մարզգործկոմի փաստաթղթերում ստացավ թուրք բնակչության նկատմամբ «հատուկ ինտերնացիոնալիստական մոտեցում ցուցաբերելու» անունը։ Ահա մի փաստ՝ 1926 թվականին ԼՂԻՄ-ի դպրոցաշինարարությանը հատկացված ֆինանսական միջոցների 40 %-ը հատկացվում էր թուրքական դպրոցներին։ Դա այն դեպքում, որ թուրք սովորողների թիվը կազմում էր ընդհանուր թվի միայն 10 %-ը⁷։ 1929 թվականին մարզային խորհրդի 5-րդ համագումարում մարզգործկոմի նախագահ Երեմ Գրիգորյանի զեկուցման մեջ ընդգծվում էր, որ ժողովրդական կրթությանը հատկացված պետական միջոցներից հատկացումները մարզի յուրաքանչյուր թուրք բնակչի բաժինը 38,8 %-ով գերազանցում է մարզի հայ բնակչի բաժնին⁸։ Մարզգործկոմի նախագահը այսպիսի փաստը համարում էր լեւինյան ազգային քաղաքականության ուսանելի օրինակ, որը չէր ուզում տեսնել «շովինիստական տրամադրությամբ սնանկացած հայ մտավորականությունը»⁹։

Առաջ մղելով ԼՂԻՄ-ում հայակործան քաղաքականությունը, Ադրբեջանի Կենտգործկոմը 1929 թվականին մշակեց և առանց դարաբաղցիների կարծիքը հարցնելու գործողության մեջ դրեց ԼՂԻՄ-ի կարգավիճակի վերաբերյալ նոր կանոնակարգ։ Ո՞րն էր այդ նոր կանոնակարգի առանձնահատկությունը։ Եթե 1921 թվականի Կովկասյան բյուրոյի որոշման մեջ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում թողնելու գլխավոր պատճառ էր համարվում հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության պահպանումն ու տնտեսական կապերը, ապա այս նոր կանոնակարգում ուղղակի ընդգծվում էր, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի տերիտորիայի անբաժանելի մասն է, որտեղ ապրում են հայեր։ Ելնելով ինտերնա-

² См. Госархив НКАО, Ф-2, оп. 1, ед. хр., 329, Л-2.

³ См. Госархив НКАО, Ф-2, оп. 1, ед. хр., 175, Л-3.

⁴ См. Госархив НКАО, Ф-2, оп. 1, ед. хр., 206, Л-3.

⁵ См. Там же, ед. хр., 175, Л-2.

⁶ См. Там же, ед. хр., 141, Л-10.

⁷ См. Там же, ед. хр., 354, Л-5.

⁸ См. Госархив НКАО, Ф-2, оп. 1, ед. хр., 354, Л-5.

⁹ См. Там же.

ցիտնալիզմի սկզբունքներից, Ղարաբաղին տրվում է ինքնավարություն¹⁰՝ գործավարությունը, դատարանը և դպրոցներում ուսուցումը հայերեն վարելու իրավունք¹⁰։ 1933 թվականին Ադրբեջանի իշխանությունները ԼՂԻՄ-ի տարածքում կուլակության լիկվիդացման հետ մեկտեղ, մարզում «... Հայտնաբերեցին նաև դաշնակցական կազմակերպություններ, մացիոնալիստական խմբավորումներ, որոնք թափանցել էին հարևան Հայաստանից»¹¹։ Ղարաբաղյան մացիոնալիզմի «ջախջախման հարցը» դարձավ Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի պլենումի քննարկման առարկա։ Այս պլենումում ուղղակի հայտարարվեց, որ ԼՂԻՄ-ի ինքնավարությունը ձևական խմատ ունի, մարզային ղեկավար մարմինները ինքնուրույն հարցեր լուծելու իրավունք չունեն։ ԼՂԻՄ-ի համար օրենքն այն է, ինչ կարգադրվում է Բաքվից¹²։

Այսպիսով, ԼՂԻՄ-ի նոր կարգավիճակի հաստատումը, մացիոնալիստական հոսանքների և դաշնակցական խմբավորումների պարբերական բացահայտումները արդարացուցիչ հանգամանքներ դարձան Ղարաբաղի հայ մտավորականության գլխատման և բնակչության նոր արտագաղթի համար։ Սակայն այսքանով դեռևս չէին բավարարվում Հ. Ալիևի նախորդները, 30-ական թվականների կեսից ձեռնարկեցին ԼՂԻՄ-ի հայ երիտասարդության բռնի արտագաղթի եղանակ, որը շարունակվեց մինչև 50-ական թվականների վերջերը։ Ավելորդ աշխատուժի անվան տակ այդ տարիներին ԼՂԻՄ-ից Բաքվի և Սումգայիթի կառույցները բռնի կերպով ուղարկվեցին հազարավոր հայ երիտասարդներ։ Դիմենք դարձյալ փաստերի։ Այսպես, 1933 թվականի օգոստոսի 12-ի «Խորհրդային Ղարաբաղ» թերթի առաջնորդող հոդվածում ասված է, որ երեք օրվա ընթացքում ԼՂԻՄ-ից Բաքու պետք է ուղարկվեն 1300 երիտասարդներ Ագնեֆտում աշխատելու համար, նույն երեք օրում պետք է լրացուցիչ հավաքագրել նաև 100 երիտասարդներ ֆաբրիկոմատումնարանների համար։ Դատապարտում էին գյուղերի այն ղեկավարներին, որոնք ընդդիմանում էին վերևից տրված ցուցումներին¹³։ ԼՂԻՄ-ի պետական արխիվում պահպանված մի տեղեկատվության մեջ ասված է, որ 1941 թ. հունիսի 6-ին Բաքու են ուղարկվել 133 հոգի, հունիսի 7-ին՝ 350 հոգի, հունիսի 9-ին՝ 453 հոգի, հունիսի 12-ին՝ 608 հոգի, հունիսի 14-ին՝ 674 հոգի¹⁴։

Բռնի արտագաղթի քաղաքականության հետևանքով զգալիորեն կրճատվեց հայ ազգաբնակչության թվական կազմը։ Այսպես, 1939—59 թթ. ժամանակաընթացքում մարզի հայ բնակչության թիվը նվազեց 23 հազարով, իսկ ադրբեջանցիների թիվը աճեց 4 հազարով¹⁵։ Ղարաբաղի փոքր գյուղերից շատերում փակվեցին դպրոցները, շատ գյուղեր պարզապես նմանվում էին ծերանոցների։ Այդ տարիներին կարելի էր լսել այսպիսի խոսքեր՝ այսինչ գյուղում մահացել են վերջին բնակիչները, այսինչ գյուղում ապրում են ընդամենը 10 մարդ։

Չնայած Ադրբեջանի իշխանությունների բազմապիսի ջանքերին, ԼՂԻՄ-ում այնուհանդերձ շարունակում էր պահպանվել հայկական ոգին, մարդիկ ամուր էին կպած իրենց մայր հողին, հետևաբար, 1969 թվականին, երբ Հ. Ալիևը ընտրվեց Ադր. Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, իր նախորդներից իբրև ժառանգություն ստացավ Լեոնային Ղարաբաղի չլուծված հիմնահարց։ Սակայն ի տարբերություն իր նախորդների, Հ. Ալիևը մեր կարծիքով ավելի խորամանկ դիվանագետ էր, ավելի չրջահայաց քաղաքագետ և ավելի գործույնյա ու հետևողական էր իր նպատակային խնդիրների իրագործման մեջ։ Եթե Ալիևի նախորդները ԼՂԻՄ-

¹⁰ См. Там же, ед. хр., 354, Л-86.

¹¹ Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ» թերթ, 28-ին օգոստոսի, 1933 թ., հ. 190:

¹² Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ» թերթ, 4-ին հոկտեմբերի, 1933 թ., հ. 215:

¹³ Տե՛ս նույն տեղը, 12-ին օգոստոսի, 1933 թ., հ. 180:

¹⁴ См. Госархив НКАО, ф-3, оп. 3, ед. хр. 347, Л-2, 6.

¹⁵ С. Достижения Нагорного Карабаха в девятой пятилетке. Степанакерт, 1976 г., стр. 8.

ում վարում էին հայի բացարձակ բռնահանձան քաղաքականություն, ապա ինքը այն փոխարինեց ԼՂԻՄ-ում «ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության» քաղաքականությամբ, որը մարզում իրագործվում էր հայազգի ամուր բռունցքի օգնությամբ: Այդ բռունցքը Բորիս Կևորկովն էր, որի առաջ դրված ստրատեգիական խնդիրը կարճ ժամանակաընթացքում ԼՂԻՄ-ում բնակվող հայերի և ադրբեջանցիների բնական կազմի հավասարեցումն էր: Ստրատեգիական այս խնդրի իրականացման նպատակով Ղարաբաղում Կևորկովի անմիջական ղեկավարությամբ մշակվեց նաև տակտիկական քաղաքականություն: Այդ քաղաքականության սկզբունքներից էին, օրինակ.

ա) կուսակցական, պետական և հասարակական հիմնարկներում աշխատանքի էին ընդունվում Բաքվից ժամանած ադրբեջանցի կադրեր ու մասնագետներ,

բ) մասնագիտական բոլոր ուսումնական հաստատություններում ստեղծվում էին ադրբեջանական բաժանմունքներ,

գ) կոլտնտեսություններում ու սովխոզներում սնկերի պես աճում էին հարևան շրջաններից եկած ադրբեջանցիները,

դ) ավերված և անմարդաբնակ մախիկն հայկական գյուղերում վերաբնակեցվում էին հարևան շրջաններից տեղափոխված ադրբեջանցիներ,

ե) նախատեսվում էր Ստեփանակերտում բացել պրոֆտեխուսումնադրան մի քանի հազար սովորողներով, որտեղ պետք է սովորեին հիմնականում հարևան ադրբեջանական շրջաններից եկած երիտասարդներ,

զ) Ստեփանակերտում և շրջկենտրոններում հաճախակի տարբեր առիթներով կազմակերպվում էին հանդիսավոր միջոցառումներ, որոնց շատ դեպքում մասնակցում էր ինքը Հ. Ալիևը: Պատահում էին դեպքեր, երբ ստեփանակերտցիները ժամերով Կևորկովի կարգադրությամբ սպասում էին փողոցում Ալիևին դիմավորելու համար: Որպես կանոն, այս հանդիսավոր միջոցառումներին ավելի շատ մարդիկ ժամանում էին հարևան ադրբեջանական շրջաններից և փաստորեն ստեղծում ադրբեջանական միջավայր:

Այսպիսով, Ղարաբաղյան հիմնահարցի լուծման ալիևյան ստրատեգիան ու տակտիկան շոշափելի արդյունքներ տվեցին: Նրա իշխանության շրջանում, 10 տարիների ընթացքում առնվազն 10 հազարով աճեց ադրբեջանցի բնակիչների թիվը: Ի դեպ, այս 10 հազար թիվը 90-ական թվականների սկզբներին Հ. Ալիևի համար իր հակառակորդների դեմ զենք ճոճելու միջոց դարձավ: Այն ժամանակ, երբ Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանում պատգամավորներից մի քանիսը հարձակում գործեցին Ալիևի վրա 70-ական թվականներին ԼՂԻՄ-ի նկատմամբ նրա վարած լիբերալ քաղաքականության համար, Հ. Ալիևը իր պատասխան ելույթում ասաց, որ Ադրբեջանի համար կատարած իր լուրջ ծառայություններից մեկը հենց այն էր, որ այդ տարիներին ԼՂԻՄ-ում ադրբեջանցիների թիվը աճեց 10 հազարով: Ահա այն նույն Ալիևն է, որ 20-րդ դարի վերջին որպես ադրբեջանա-ղարաբաղյան կոնֆլիկտի լուծման միջոց, առաջադրում է «այն ինքնավարության» վարկածը:

Ելնելով վերո շարադրվածից, իրավացիորեն կարող ենք կատարել եզրահանգում: *Խորհրդային իշխանության ավելի քան 70 տարիների ընթացքում* Ադրբեջանի իշխանությունների կողմից իրապարակավ կոխկրտվել են Ղարաբաղյան հայ մարդու իրավունքները: Մարդու իրավագրվությունը հասել է այն աստիճանի, երբ իշխանությունները նրա հետ վարվել են իբրև որոշակի ապրանքի: Ազատությունը և անձեռնմխելիությունը Ղարաբաղում դարաբաղցու համար եղել են միայն պատրանքներ: Սա է մեր կարծիքով վերոխիշյալ կոնֆլիկտի հիմնական պատճառը: Ղարաբաղցին պայքարով ձեռք է բերել ազատ, հավասար իրաւունքներով և անձեռնմխելի կյանքով ապրելու իրավունք, որը ոչ միայն չի հակասում, այլև համապատասխանում է ՄԱԿ-ի 1948 թ. ընդունած մարդու իրավունքների դեկլարացիայի ոգուն: Հետևաբար, ներկա կոնֆլիկտի լուծման մեջ միմյանց դեմ հառնում են երկու հակադիր կողմեր՝

ա) մարդու իրավունքը՝ իբրև դարաբաղցու պահանջ,

բ) տերիտորիալ ամբողջականությունը՝ իբրև աղբյուրական իշխանությունների պահանջ (հիշենք, որ Աղբյուրականի տերիտորիալ ամբողջականության պահանջը ելնում է 1921 թվականի Կովկասյան բյուրոյի որոշումից, որը իրավական կարգավիճակ չունի):

Հետևաբար, նշված հակադրության կողմերի մեջ եթե առաջնությունը տրվի մարդու իրավունքին, քան թե իրավական կայուն կարգավիճակ չունեցող տերիտորիալ ամբողջականությանը, ապա պարզ է, որ կոնֆլիկտի խաղաղ լուծումը պետք է հանգեցնի ԼՂՀ-ի ինքնորոշմանը, մանավանդ, եթե նկատի ունենանք նաև հետևյալ երկու հանգամանքները ևս՝

ա) 20-րդ դարավերջը և 21-րդ դարասկիզբը անշուշտ կնշանավորվեն մարդու իրավունքների գերապատվությամբ,

բ) Աղբյուրանը կընտրի ժողովրդավարության ուղին:

III. М. АБРАМЯН

КАРАБАХСКАЯ ПРОБЛЕМА С ТОЧКИ ЗРЕНИЯ ПРАВ ЧЕЛОВЕКА

Резюме

Автор на основе архивных документов доказывает, что в течение более 70 лет азербайджанскими властями попирались права карабахцев армянской национальности, что и явилось главной причиной азербайджано-карабахского конфликта. Карабахцы в борьбе завоевали право на свободное проживание на родной земле, что соответствует известной Декларации ООН. Следовательно: единственным средством (путем) вышеуказанной проблемы может быть право на свободное самоуправление НКР.

SH. M. ABRAHAMIAN

KARABAKH PROBLEM FROM THE POINT OF VIEW OF HUMAN RIGHTS

Summary

The author, according to archive documents states that for more than 70 (seventy) years the Azeri Government trampled on the Rights of Karabakhs with Armenian Nationality, which became the main reason of Azeri-Karabakh conflict.

In the struggle the Karabakhi people gained the Right for independent life and existence on their homeland which corresponds to the famous Declaration of the United Nations Organization.

Consequently the only means of the above mentioned problem could be the Right for Independent Self determination of Nagorno Karabakh Republic.

Կ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱՒԻ ԻՆՔՆԱՎԱՅՈՒՄՆԵՐԻ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

ԼՂՀ պաշտպանության բանակն անցել է կազմավորման համեմատաբար երկար ու դժվարին ճանապարհ: Ստորև, ժամանակագրական ու կառուցվածքային առումներով, սահմանազատված են այդ ճանապարհի հիմնական հանգրվանները...

Արցախի ինքնապաշտպանության ուժերի կազմավորումը ազգային ազատագրական պայքարի կարևոր նվաճումներից էր: Լայնածավալ մարտական գործողությունների պայմաններում և ռազմաքաղաքական բարդ իրադրությունում ինքնապաշտպանական առանձին ջոկատների վերակազմումը ու համախմբումը կանոնավոր ստորաբաժանումների մեջ անխուսափելի էին և թելադրված զինված ուժերի կենտրոնացված կառավարումը կազմակերպելու, մարտական գործողությունների գոտում կարգուկանոն հաստատելու անհրաժեշտությամբ: Այդ հույժ կարևոր ձեռնարկումը բարենպաստ նախադրյալներ ստեղծեց առաձգական դարձած ռազմաճակատի* կայունացման, ռազմական նախաձեռնությունը հակառակորդից խլելու, ապա նաև զավթված բնակավայրերն ազատագրելու և Արցախի շուրջ անվտանգության գոտի ստեղծելու համար:

Արցախի ինքնապաշտպանության ուժերի (այսուհետև՝ ԻՊՈՒ) կազմավորման գործընթացն առանձին ուսումնասիրության առարկա չի եղել:

Խնդրո առարկա թեմայի ուսումնասիրությունը հրատապ է ոչ հեռու անցյալի իրադարձությունների վերաիմաստավորման, մինչև հիմա զաղտնի մնացած կամ աղավաղված փաստերը գիտական շրջանառության մեջ դնելու, այդ իսկ ճանապարհով նորօրյա պատմագրությանը նպաստելու առումներով: Մյուս կողմից անհրաժեշտ է լուսաբանել այն դժվարին, բայց և հաղթական ուղին, որ Արցախի պաշտպանության բանակն է հարթել, փայլուն, մոր էջեր ավելացնելով հայ ռազմարվեստի տարեգրությանը:

Նախկին ԽՍՀՄ ղեկավար մարմինների թողտվությամբ, Ադրբեջանական ԽՍՀ կողմից իրականացվող բռնությունների, կողոպուտի և տեղահանությունների քաղաքականությունը, խորհրդային ներքին գործերի և ադրբեջանական միլիցիայի հատուկ նշանակության ջոկատների (ՄՀՆԶ**) կամայականությունները ԼՂԻՄ-ում, շրջափակումը և նախապատրաստվող ագրեսիայի ահագնացող վտանգը ար-

* 1992 թ. հունիսի 12-ին սկսված ադրբեջանական լայնածավալ ագրեսիայի հետևանքով, ի դեպ, որին մասնակցել են նաև ԱՊՀ 4-րդ բանակի՝ Գանձակում տեղակայված 23-րդ դիվիզիայի զինծառայողներն ու ռազմական տեխնիկան, անկայուն ու առաձգական էր դարձրել հատկապես Մարտակերտի ռազմաճակատը:

** Տարածում գտած «ՕՄՕՆ» և «օմնական» արտահայտչաձևերը ռուսերեն տառադարձությամբ են:

ցախահայությամբ կանգնեցրել էին զինված ինքնապաշտպանության դիմելու անհրաժեշտության առաջ: Աղբրեջանի մի շարք քաղաքներում հայերի ջարդերից և ԼՂԻՄ բնակավայրերի վրա ավազակային հարձակումներից հետո այլևս հապաղել չէր կարելի:

Զինված կազմավորումներ ունենալու համար անհրաժեշտ էին զենք, զինամթերք, համապատասխան նյութատեխնիկական միջոցներ, հարկ էր լուծել բազմաթիվ կազմակերպական-նախապատրաստական խնդիրներ, ինչը, խորհրդային գործերի ու աղբրեջանական ՄՀՆՁ-ի համապարփակ օդակման և դաժան վերահսկողության պայմաններում տեսականորեն անհնար էր: Սակայն, հայ ժողովրդի լավագույն զավակների ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ խոր ընդհատակում ձեռնարկել զենքի ու զինամթերքի հայթայթումը, կամավորական ջոկատների ստեղծումը և ինքնապաշտպանության գործի կազմակերպումն ու ղեկավարումը: Ինքնապաշտպանական խմբերը տարերայնորեն սկսեցին ձևավորվել նախ սահմանամերձ կամ աղբրեջանական գյուղերի հետ սահմանակից բնակավայրերում: Խոջաուլի և Կրկմանի 1988 թ. սեպտեմբերի 18-ի ընդհարումներից, Շուշիի հայության տեղահանությունից հետո, երբ վտանգն ամմիջապես սպառնում էր մարզկենտրոնին, այստեղ ևս սկսեցին կազմավորվել զինված ջոկատներ: Ամենուր տարվում էր գիշերային և կրթնապահություն: Ինքնապաշտպանության գործի, ժողովրդի մարտունակ մասի զինման և արագ հակազդման ջոկատների ստեղծումը հիմնականում իրականացնում էին ընդհատակյա կազմակերպությունները, հատկապես՝ ՀՀ դաշնակցությունը [1]: Աղբրեջանական ավազակախմբերն արդեն արժանի հակահարված էին ստանում: Աղբրեջանի ղեկավարությունը, որ ձգտում էր հայաթափել նաև ԼՂ ինքնավար մարզը, սարսափեց կազմակերպվող ժողովրդից և Կրեմլի միջոցով ավելի սաստկացրեց խաղաղ բնակչության ահաբեկումները, հալածանքներն ու հետապնդումները:

Ապահովեց նաև կենտրոնական իշխանությունների անվերապահ աջակցությունը, ինչն իր արտահայտությունը գտավ ԽՍՀՄ ղեկավար Մ. Գորբաչովի 1990 թ. հուլիսի 25-ի հրամանագրում: Այդ հրամանագրով ԽՍՀՄ ՆԳ նախարարին իրավունք էր վերապահվում օրենսդրությամբ չնախատեսված սպառազեն կազմավորումները ցրելու, առկա զենքն ու զինամթերքն առգրավելու համար օգտագործել ներքին զորքեր, իսկ առանձին գործողություններում թույլատրվում էր նաև ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ստորաբաժանումների մասնակցությունը [2]: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ այդ ամենը նախատեսված էր հատկապես իր օջախն ու տունը պաշտպանող հայերի համար: Բնականաբար, Աղբրեջանական ԽՍՀ իրավասության տակ գտնվող տարածքներում «օրենսդրությամբ նախատեսված» հայկական զինված կազմավորումներ ստեղծելն անհնար էր, իսկ ժողովրդի ինքնապաշտպանության փորձերը օրենքից դուրս էին դիտվում:

Այդուհանդերձ, գաղտնի գործող փոքրաթիվ կամավորականները, ոգևորված ֆիդայական շարժման գաղափարներով, բազմաթիվ մանր ու մեծ ընդհարումներում սխրագործությունների ու անձնվիրության հրաշալի օրինակներ էին տալիս: Սակայն, «Օդակ» (Կոլցո) ռազմագործողությունը, որի հետևանքով հայաթափվեցին Հյուսիսային Արցախի Գետաշեն, Մարտունաշեն, ինչպես նաև Հաղուրսի շրջանի սահմանամերձ ու Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը և Հայաստանի սահմաններում իրադրության կտրուկ բարդացումը ցույց տվեցին, որ ինքնապաշտպանության գործն ինքնառիսի մատնելը կարող է ճակատագրական լինել: Խանդավառությունը, նախաձեռնողականությունը, նվիրումը բավարար չէին ժողովրդի պաշտպանության գործը հիմնավորապես կազմակերպելու համար: Պետական, համազգային վերաբերմունք ու ջանքեր էին անհրաժեշտ: Այս առումով, կայսեր քայլ էր 1991 թ. մայիսի 4-ին ստեղծված Պաշտպանության կոմիտեն, որն իբրև համակարգող, կազմակերպող ու ղեկավարող մարմին ամմիջապես ձեռնամուխ եղավ ինքնապաշտպանության ոլորտում ծառայած բազմաթիվ ու տարաբնույթ, հաճախ՝ բարդ

խնդիրների լուծմանը: Կոմիտեի առաջնահերթ խնդիրներից էին նաև Հատուկ շրջանի պաշտպանության կազմակերպման, այնտեղ Շահեն Մեղրյանի ընդհանուր հրամանատարությամբ գործող կամավորական ջոկատների ղեկավարման աշխատանքներին օժանդակելը, ինչպես նաև վտանգված սահմանային շրջանների անվտանգության ապահովումը [3]:

Գործնական քայլեր կատարվեցին նաև Արցախում: 1991 թ. հունիսի առաջին օրերին ԼՂԻՄ գործկոմի շենքում հավաքվեցին ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի գործկոմի մի խումբ անդամներ ու մարզի ղեկավար աշխատողներ և պայմանավորվեցին համախմբել բոլոր ուժերն ու միջոցները մարզի խաղաղ բնակչության անվտանգության խնդիրը լուծելու համար: Այնուհետև մարզգործկոմում հավաքված ձեռնարկությունների ու կազմակերպությունների՝ Ստեփանակերտում և շրջաններում հայտնի աշխատողներն ու ղեկավարները քննարկեցին մարզում ստեղծված աղետալի իրավիճակը: Քննարկումների ընթացքում ակտիվը հանգեց այն եզրակացության, որ ստեղծված պայմաններում անհրաժեշտ է ձեռնարկել կազմակերպական շտապ միջոցներ և ամրապնդել մարզի ղեկավարության դիրքերը: 1991 թ. հունիսի 11-ին ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի գործկոմի ընդլայնված նիստը նախագահի պարտականությունները դրեց նրա առաջին տեղակալ Լեոնարդ Պետրոսյանի վրա, որը Գործկոմի անդամների հետ անհապաղ ձեռնամուխ եղավ ռազմական ու տնտեսական ծանր քաոսից մարզը դուրս բերելու միջոցների մշակմանն ու կազմակերպմանը [4]:

Հունիսի 19-ին Լեոնային Ղարաբաղի ժողպատգամավորների ընդլայնված նիստում մշակվեց արցախահայության գոյատևման ծրագիր: Դա անհրաժեշտություն էր և շատ կարևոր նախաձեռնություն, քանզի 1991 թ. ապրիլ-մայիսյան իրադարձությունները ցույց տվեցին, որ անիշխանության, մարզային և տեղական իշխանությունների կազմալուծման պատճառով ժողովուրդը սիանգամայն պատրաստ չէր գինված դիմադրություն ցույց տալ ԽՍՀՄ ՁՈՒ և ՆԳՆ զորքերի աջակցությամբ իրականացվող լայնածավալ ագրեսիային: Ծրագրում նախատեսված էին մարզում քաղաքական ու տնտեսական վիճակի կարգավորման միջոցներ և ուղղվածվել էին տխրահռչակ «Օղակ» ռազմագործողության կանխման ուղիները: Դրա համար նախևառաջ անհրաժեշտ էր ԽՍՀՄ ղեկավարության միջոցով հասնել մարզգործկոմի և ժողպատգամավորների մարզխորհրդի վերականգնմանը, անցկացնել մարզխորհրդի ժողպատգամավորների ընտրություն, ժողովրդի ցանկությունների հաշվառմամբ, մարզի նորընտիր ղեկավարության ուժերով մշակել Արցախի գոյատևման իրատեսական ծրագիր, հավուր պատշաճի նախապատրաստվել գինված դիմադրության [5]:

Հուլիսի վերջին ԼՂԻՄ Ազգային խորհրդի «Պ» (այսինքն՝ պաշտպանություն) ժամանակավոր խմբի հիման վրա ստեղծվեց ինքնապաշտպանության ընդհատակայն կոմիտե, ինչը բխում էր աղբյուրանական գինված կազմավորումների ճնշմանն ու հարձակումներին դիմագրավելու համար մարզի պաշտպանությունը նոր մակարդակով կազմակերպելու անհրաժեշտությունից: Այդ իսկ նպատակով ստեղծվեց նաև ինքնապաշտպանության ուժերի շտաբ, որի կազմում ընդգրկվեցին Ռ. Քոչարյանը, Ս. Սարգսյանը, Գ. Պետրոսյանը, Վ. Բալայանը, Մ. Պետրոսյանը և այլք: Նորաստեղծ շտաբը սկզբում կազմակերպում ու գինում էր արագ հակադրման փորձերով ջոկատներ մարզի բոլոր շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում: Մարտիկների քանակն օրըստօրե աճում էր: Մարզի գրեթե բոլոր հասում տղամարդիկ կամավոր խանդավառությամբ ցանկանում էին կանգնել իրենց հայրենիքի, ընտանիքների, հարազատության պաշտպանության դիրքերում...

Աղբյուրանական գինված կազմավորումների չդադարող հարձակումների պայմաններում ռազմաքաղաքական լարված իրավիճակում ձեռնարկվող քայլերը բխում էին ժողովրդի գոյապահպանման կենսական շահերից և կարևոր նախադրյալներ էին ստեղծում ԻՊՈՒ կազմավորման համար:

Շահույթների շրջանի էրբեք, Բուզլուխ և Մամաշիղ գյուղերի զավթումը խորհրդա-աղբերջանական գործերի կողմից, Հաղորդի շրջանի Խծաբերդ ու Հին Թաղեր բնակավայրերի վրա չդադարող հարձակումները կամավորական ջոկատներին ստիպեցին անցնել պարտիզանական պատերազմի: Հատմի էին «Գետաշենցի վրիժառուները», որոնք անսպասելի հակահարվածներ էին հասցնում զավթիչներին: 1991 թ. հուլիսի 29-ին արժանի պատիժ կրեցին էրբեք գյուղի զավթիչները. մարտում ոչնչացվեցին 7 և հոսպիտալացվեցին ավելի քան 10 աղբերջանցի ՄՀՆ ջոկատայիններ: Իսկ հուլիսի 30-ին մի այլ պարտիզանական խումբ Հաղորդի շրջանում գրոհեց Ցոր գյուղը, ոչնչացնելով 2 և գերելով 5 զավթիչ [6]: Ընդհատակյա պայքարի դասական օրինակ կարելի է համարել նույն թվականի օգոստոսի 13-ի խիզախ ձեռնարկումը Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում, ուր ձերբակալված հայ երիտասարդների դիմաց պատանդ վերցվեցին ԽՄՀՄ ՆԳՆ գործերի 33 սպա ու զինվոր, առգրավվեցին 1 գրահավիտսարկիչ, 1 նռնականետ և 29 ավտոմատ [7]: Թերևս, հեղաշրջման օգոստոսի 19-ի փորձը և Արտակարգ իրավիճակի պետական կոմիտեի (տխրառնչակ՝ ԳԿԳՊ-ի) ստեղծումը խանգարեցին Հաթերքի ինքնապաշտպանների բուն նպատակների իրագործմանը: Այդուհանդերձ, հաջորդ օրերին կատարված պատանդների փոխանակությունը և գյուղի պաշարման վերացումը ևս հաջողություն էին: Նշված գործողությունները ինքնահաստատման ու սեփական ուժերի նկատմամբ հավաստի վերականգնման, կազմակերպվող ինքնապաշտպանական ուժերի առնականացման վկայությունն էին: Հայերի վրիժառու բազուկը, որի հատու ուժը թշնամին դեռ շատ պիտի զգար, կորով ու ավյուն էր ստանում...

Սակայն ԻՊՈՒ կազմավորման ու անհրաժեշտ սպառազինություն հայթայթելու համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին, երբ ԽՄՀՄ ՆԳՆ գործերը սկսեցին թողնել Արցախի տարածքը: 1991 թ. դեկտեմբերի 25-ին և 26-ին դուրս բերվեց ԽՄՀՄ ներքին գործերի «ԴՈՆ» դիվիզիան (հրամանատար՝ գեներալ-մայոր Լորուհեյ), այդ թվում՝ Ստեփանակերտից՝ փոխգնդապետ Տյուրվիչի, Մարտունուց՝ Բատակովի, Մարտակերտից՝ Կալիբերդեցկոյի գնդերը [8]:

Դրա հետևանքով Արցախում լրիվ անպաշտպան մնացին բազմաթիվ բնակավայրեր և ժողովուրդական կարևոր օբյեկտներ, իսկ սահմանագծի ողջ երկայնքով սկսվեցին աղբերջանական զինված խմբերի խժոժությունները: Մարտերը ծավալվեցին հատկապես Մարտակերտի շրջանի Զափար և Հաղորդի շրջանի Հին Թաղեր ու Խծաբերդ գյուղերի մատույցներում: Սպասվում էր մարտական գործողությունների նոր աստիճանում, կապված Բաքվից ու Ադրբայժանի յուրաքանչյուր 300 ասկյար ընդգրկող 18 գումարտակների [9], ինչպես նաև ռազմական տեխնիկայի փոխադրման ու Արցախի աղբերջանական բնակավայրերում դրանց տեղաբաշխման հետ: Դրանից բացի հակառակորդն ուժերի ու միջոցների կուտակումներ էր կատարում նաև սահմանագծի ողջ երկայնքով:

Ստեղծված բարդ իրադրությունում Արցախի ինքնապաշտպանության պատասխանատուները խնդիր ունեին ուժեղացնել ժողովուրդական կարևոր օբյեկտների պաշտպանությունը՝ խաղաղ բնակչության ներգրավմամբ, ինչպես նաև կազմավորել առանձին մարտական ջոկատներ՝ հակառակորդի հետախուզական խմբերի ոչնչացման նպատակով: Տազնապալից իրավիճակի թելադրանքով Պաշտպանության կոմիտեից Արցախ գործուղված Արկադի Տեր-Թադևոսյանին հանձնարարվեց անհապաղ ավարտել զինված խմբավորումների կազմավորումը. Հաղորդի և Մարտունու շրջաններում ներգրավելով 400-ական, իսկ Ասկերանում, Մարտակերտում և Ստեփանակերտում՝ 500-ական մարտիկ: Միաժամանակ, խորհուրդ տրվեց առաջարկել տեղական ղեկավարներին՝ անցկացնել մասնակի զորահավաք [10]:

Հոկտեմբեր ամսից պլանավորվում ու անց էին կացվում նաև ազատագրական մարտեր ու տեղայնական ռազմագործողություններ: Արցախի ինքնապաշտպանական ջոկատները և կամավորական խմբերը մարտական փորձ, իսկ հրամանա-

տարները մարտավարական հմտություններ ձեռք բերեցին Հաղորդի շրջանի Տող (31. 10. 1991 թ.), Սարիճենն ու Ծամձոր (15. 11. 1991 թ.), Քարազուլս (20. 11. 1991 թ.), Մարտունու խոջավենդ արվարձանի (19. 11. 1991 թ.), Ասկերանի շրջանի Ջամիլու (15. 12. 1991 թ.), Լեսնոյ (23. 12. 1991 թ.*) և Կրկժան (28—30. 12. 1991 թ.**) գյուղերի ազատագրման ռազմագործողություններում: Դրանց նշանակությունը կայանում էր նաև նրանում, որ մարդիկ հնարավորություն էին ստանում ձեռքագտնել հոգեբանական ընկճվածությունից, բարձրանում էր նրանց ու հատկապես կոմիտեի մարտական ոգին: Եթե այդ ամենին ավելացնենք նաև ռազմավարական կետերի ու բարձունքների վրա վերահսկողություն սահմանելն ու սեփական զինանոցը հակառակորդի հաշվին (այսինքն՝ նրանից առգրաված սպառազինություն) համալրելու առիթը, թերևս պատկերը կամբողջանա:

Նախկին ԽՍՀՄ ԿԳՆ զորքերի հեռանալը նաև դրական կողմեր ուներ: Ջորժիմակ, հնարավորություն էր ստեղծվում նրանց սպառազինությանը տեր կազմել, դրանով իսկ լուծել ինքնապաշտպանության հարցերից մեկը: 1917—1918 թթ. դասերն օգնեցին Արցախի ինքնապաշտպանության պատասխանատուներին ու բնակչության շահագրգիռ մասին միշտ կողմնորոշվել ստեղծված իրադրությունում և բաց չթողնել առիթը... Սակայն, Ադրբեջանն այդ առումով ավելի նպաստավոր պայմաններում էր և ավելի լայն հնարավորություններ ուներ, ուստի ձեռք բերեց զենքի, զինամթերքի, մարտական տեխնիկայի ու այլ սպառազինության անհամեմատ շատ պաշարներ: Իսկ Արցախի պաշտպանների առավելությունն էլ այն էր, որ նրանք պաշտպանում էին հայրենի հողը, տունը, կանանց ու երեխաներին, հետևաբար, բարձր էր յուրաքանչյուրի մարտական ոգին, տիրապետող էին հաղթելու վրճարակներունը և ժողովրդի հավաքական կամքն ու միաբանությունը... Հենց այս հատկանիշների շնորհիվ հնարավոր դարձավ ոչ միայն կասեցնել ադրբեջանական զինված կազմավորումներին հարձակումները, այլև ազատագրել Արցախի ներսում գտնվող, բայց թշնամական ռազմակայանների վերածված գյուղերը: 1992 թ. հունվարի 20-ին ազատագրվեցին Ստեփանակերտի արվարձան Կրկժանը, փետրվարի 9—11-ին՝ Մալիբեկլու և Դուշուլար, մույն ամսվա 17-ին և 22-ին՝ Մարտունու շրջանի Դարադաղլու և Վերին Վեյսալու գյուղերը, իսկ 26-ին՝ Խոջալուն և օդանավակայանը [1]:

Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը այլ բնույթ ու ծավալ էր ստանում: Հակառակորդի ագրեսիվ պլանների ու ձեռնարկումների վտանգավորությունը հրամայաբար պահանջում էր դիմել վճռական քայլերի և կանխել հակառակորդին: Այդ խնդիրը լավագույնս լուծած ինքնապաշտպանական ջոկատները պետական ու օրենսդրական աջակցության և խրախուսանքի կարիք էին զգում: Անաթե ինչու, դեռևս Խոջալուի ազատագրման մախօրյակին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը հատուկ որոշում ընդունեց ԼՂՀ ԻՊՈՒ-ի մասին: 1992 թ. փետրվարի 24-ին ընդունված այդ որոշման մեջ մասնավորապես արձանագրված էր. «Ելնելով նրանից, որ հայ բնակչության նկատմամբ իրականացվող ցեղասպանության, կոդուպտի, բռնությունների և հայկական գյուղերի բնակիչների բռնատեղահանության հետևանքով ստեղծվել են Լեռնային Դարաբաղի շահերը պաշտպանելու կոչված կամավորական ջոկատներ, աչքի առաջ ունենալով Ադրբեջանի անթաքույց զավթողական գործողությունները ԼՂՀ-ի դեմ, զորահավաքի միջոցների հաշվառման և հանրապետության պաշտպանության ապահովման նպատակով, կազմակերպված զինված ջոկատները դիտել որպես ԼՂՀ ինքնապաշտպանության ուժեր

* ՀՅԴ մարտական ուժերի կողմից մույն ժամանակամիջոցում (22—23. 12. 1991 թ.) անց է կացվել ևս երկու գործողություն Մարտակերտի շրջանում՝ Ումուրլու և Խմերեք-Ջերեմկենդ ադրբեջանական գյուղերի վնասագրեծման նպատակով: Իսկ Լեսնոյի նկատմամբ լիակատար վերահսկողություն հաստատվեց 1992 թ. մայիսի սկզբներին:

** Կրկժանի վերջնական ազատագրումը հաջողվեց 1992 թ. հունվարի 20-ին:

և դրանք ենթարկել միասնական հրամանատարության: Հանձնարարել շրջգործկոմներին և զինկոմիսարիատներին՝ ամսվա ընթացքում անցկացնել հանրապետության բոլոր զինապարտների վերահաշվառում և զորակոչային տարիքի քաղաքացիների հաշվառում: ԻՊՈՒ-ում գտնվող զինապարտներին համարել զինվորական ծառայության զորակոչվածներ: Հանձնարարել ԼՂՀ զինկոմիսարիատներին ԻՊՈՒ շրջանային ստորաբաժանումների շտաբների հետ անցկացնել ԼՂՀ շահերի համար պայքարում զոհված, անհետ կորած և հաշմություն ստացած անձանց վերահաշվառում» [12]:

ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. մարտի 4-ի որոշմամբ գնդապետ Ա. Ի. Տեր-Թադևոսյանը նշանակվեց Արցախի ԻՊՈՒ հրամանատար [13]: Նույն օրը հաստատվեց նաև ԼՂՀ պաշտպանության խորհրդի կազմը, որը ներկայացրել էր ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Սկրտչյանը: Պաշտպանության խորհրդում ընդգրկվեցին Ա. Սկրտչյանը (նախագահ), Օ. Եսայանը, Վ. Բալայանը, Մ. Սարգսյանը, Ա. Տեր-Թադևոսյանը, Դ. Քոչարյանը և Ա. Կարապետյանը [14]:

Ելնելով ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրությունից և ղեկավարվելով ԼՂՀ Նախարարների խորհրդի մասին ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածով, հանրապետության անվտանգության և պաշտպանության ապահովման մպատակով անհետաձգելի միջոցառումների մշակման ու իրագործման շրջանակներում, մինչև ԼՂՀ պաշտպանության նախարարության կազմավորումը, 1992 թ. մարտի 26-ին ԼՂՀ Նախարարների խորհրդին առընթեր ստեղծվեց Պաշտպանության կոմիտե: Պաշտպանության կոմիտեի նախագահ նշանակվեց Սեդո Ազատի Սարգսյանը, որին հանձնարարվեց 10-օրյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել Պաշտպանության կոմիտեի կառուցվածքի, կառուցադրության և անվանակազմի մասին: Կոմիտեն իր ողջ գործունեությունը պետք է կազմակերպեր ԼՂՀ ԳԽ և ՆԽ որոշումների ու կարգադրությունների հիման վրա: ԼՂՀ Պաշտպանության կոմիտեի, հետագայում՝ ԼՂՀ Ինքնապաշտպանության կոմիտեի (ԻՊԿ) նախաձեռնությամբ ու անմիջական ղեկավարությամբ կարևոր ու անհետաձգելի միջոցառումներ իրագործվեցին ինքնապաշտպանական ջոկատների միավորման, նյութատեխնիկական հիմքի, սպառազինության ու տեխնիկայի հայթայթման ու մատակարարման, ԻՊՈՒ վարչության ձևավորման ուղղությամբ [15]:

Արցախի ԻՊՈՒ-ի կազմավորման ուղին անցավ պաշտպանական ծանր մարտերի և ռազմական հաղթանակների ևս մի քանի կարևոր հանգրվան: Ազատագրական մարտերի շարքը, սկսած Մարտակերտի շրջանի Սրիսավենդ ու հարակից այլ գյուղերի ռազմագործողությունից (12. 03. 1992 թ.) և վերջացրած Շուշիի, ապա և Լաչինի վրայով Հայաստանի հետ ցամաքային կապի վերականգնման փայլուն ռազմագործողություններով [16], ոչ միայն որակական մոր մակարդակի հասցրեց ԻՊՈՒ կազմավորումը*, այլև արմատապես փոխեց դարարադա-աղորեջանական զինված հակամարտության բնույթը: Փաստորեն պատերազմը «նահանջեց» դեպի Արցախի սահմանները, մահացու վտանգը դադարեց սպառնալ ներսից: Իսկ դա հնարավորություն ընձեռեց լուծել մարդկային, նյութատեխնիկական ու այլ պաշարների ավելի արդյունավետ հայթայթման ու օգտագործման, բնակչության կենսամակարդակի բարելավման և այլ հրատապ խնդիրներ:

Սակայն Շուշիի ազատագրումից և շրջափակման օղակի ճեղքումից հետո ծայր առավ մի վտանգավոր տեղավորություն: Կամավորականների ու ազատամարտիկների մի մասը, Հայաստանի հետ ցամաքային կապի վերականգնումը համարելով վերջնական հաղթանակ ու արցախյան շարժման գլխավոր կարգախոսի

* Պատահական չէ, որ հաճախ Շուշիի ազատագրման հետ է կապվում ԼՂՀ ՊԲ ստեղծումը (կառավարական որոշմամբ Շուշիի ազատագրման օրը՝ մայիսի 9-ը հայտարարված է ՊԲ օր): Սակայն պաշտպանության բանակը կազմավորվել է շատ ավելի ուշ՝ 1993 թ. նոյեմբերի 10-ին՝ ԼՂՀ ՊՊԿ նախագահի թիվ 323 որոշմամբ (Արձանագրություն N 33):

իրականացում, ուստի ե պատերազմը՝ վերջացած, իր առաքելությունը գտավ ավարտված և հանձնեց զենքը*։ Ինքնապաշտպանական կառույցներից հակառակ հոսքը սկսվեց, ինչը ծանր անդրադարձավ նվաճված հաղթանակը պաշտպանելու և ամբարտնալու գործի կազմակերպման մաս։ Մասամբ, սրանով էին պայմանավորված նաև այն բոլոր դժվարությունները, որ ծառացել էին հակառակորդի՝ հունիսի 12-ի ագրեսիայի ժամանակ։ Մյուս կողմից այդ անցանկալի երևույթը ցույց տվեց, որ ինքնապաշտպանության համակարգում դեռ աշխատելու տեղ կա։ Այն առավել կատարելագործելու, կենտրոնացված ու միասնական հրամանատարություն և կառավարման արդյունավետ գործող օղակներ ստեղծելու, նյութատեխնիկական միջոցների մատակարարման, մարտական գործողությունների շրջանում կարգապահության, կարգ ու կանոնի հաստատման հրատապությունն ու անհրաժեշտությունը ամենայն սրությամբ զգացվեցին 1992 թ. ամառային պատերազմաշրջանի ավարտին։ Տակավին մարտական գործողությունների ամենաեռուն շրջանում՝ 1992 թ. հուլիսի կեսերին, նախատեսված էր Արցախում ստեղծել պաշտպանության գոտիներ, ինչը թույլ կտար լուծել հիշյալ խնդիրները։ Այդ իսկ նպատակով նախատեսվում էր Արցախի տարածքը բաժանել վեց մարտական գոտիների, հիմնականում Հաղորթի, Մարտունու, Ասկերանի, Մալտակերտի, Ստեփանակերտի և Շուշիի շրջանների սահմաններում։

Մարտական գոտիների տարածքներում տեղակայված ստորաբաժանումները, մարտական ջոկատները, կազմավորումներն անկախ իրենց պատկանելիությունից անվերապահորեն պետք է անցնեին մարտական գոտիների հրամանատարների լրիվ ենթակայության տակ և մարտական գործողություններ վարեին համաձայն միասնական պլանի ու մարտական խնդիրների։

Զենքարկվող կազմավորումներն անհապաղ պետք է զինաթափվեին ու կազմացվեին։ Հաղորթի, Մարտունու, Ասկերանի, Մարտակերտի, Ստեփանակերտի մարտական գոտիների հրամանատարներ էին նշանակվելու համապատասխանաբար Արթուր Աղաբեկյանը, Մոնթե Մելքոնյանը, Վիտալի Բալասանյանը, Հայկազ Բաղմանյանը և Սեյրան Օհանյանը։

Հրամանագրով սահմանված էին նաև հրամանատարների լիազորությունները։ Նրանց էր անցնում ենթակաների ու ՄԳ-ում գտնվող ստորաբաժանումների և կազմավորումների նկատմամբ ամբողջ իշխանությունը։ ՄԳ-ների հրամանատարները պետք է ԻՊԿ որոշումների համաձայն պլանավորեին, կազմակերպեին և անցկացնեին մարտական գործողություններ, ինչպես նաև մասնակի մարտեր պատասխանատվության գոտիներում։ Հրամանատարների իրավասության տակ էին դրվում մարտական տեխնիկայի և նյութատեխնիկական միջոցների բաշխումը, ինչպես նաև ՄԳ-ում գտնվող կազմավորումներում կարգուկանոնի, պահանջվող կարգապահության հսկողությունը և պահպանումը, չենթարկվելու և դիրքերի ինքնական լքման փորձերի կանխումը։ Այդ ամենի համար հրամանատարները պատասխանատու էին նաև համար պետության կառավարության առաջ [17]։

Սակայն, մարտական գործողությունների սաստկացումը Մարտակերտի ռազմաճակատում, ադրբեջանական բանակի օգոստոսյան հարձակման կասեցման ուղղությամբ ձեռնարկված միջոցներն ու ջանքերը խլեցին այդ հրամանագրի կենսագործման համար անհրաժեշտ ժամանակի և հնարավորությունների մեծ մասը։ Մյուս կողմից, հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու և ռազմաճակատը կայունացնելու կենսական խնդիրը պահանջում էր արագացնել ԻՊՈՒ-ում սկսված կառուցվածքային բարեփոխումները։ Դա թելադրված էր նաև նրանով, որ Արցախի

* Շահումյանի և Մարտակերտի շրջանների ինքնապաշտպանական ջոկատների մարտիկները, մտահոգված իրենց տեղահանված ընտանիքների ճակատագրով, գնում էր նրանց հետևից, հաճախ տանելով նաև զենքերը։ Հեռացածների մի մասը վերադարձավ և ընդգրկվեց Շահումյանի շրջանում ծավալված պարտիզանական պայքարի մեջ։

տարածքում ընթացող մարտական գործողությունները թևակոխել էին լայնածավալ ռազմագործողությունների փուլը՝ պայքարի ժամանակակից միջոցների կիրառմամբ, ինչը կտրուկ փոփոխում էր իրավիճակը, պահանջում մարդկային ու նյութական մեծ պաշարների վատնում: ԻՊՈՒ-ի ամառային պատերազմաշրջանի գործողությունների վերլուծությունը ցույց է տալիս մարտում և ամենօրյա գործունեության ժամանակ զինված ուժերի կենտրոնացված կառավարման միասնական համակարգի ստեղծման, խնդիրների լուծմանը հաստատունություն և նպատակաուղղվածություն հաղորդելու, ԻՊՈՒ-ն պաշտպանական շրջանների, գումարտակների, դիվիզիոնների, վաշտերի կազմակերպական-հաստիքային կառուցվածքի փոխադրելու, դրանով իսկ այդ ուժերին օպերատիվ ու մարտավարական ինքնուրույնություն տալու անհրաժեշտությունը:

«Պաշտպանական շրջանների և շրջանային լրակազմի ուժերի ու միջոցների կազմակերպական-հաստիքային կառուցվածքի մասին» ԻՊԿ նախագահի 1992 թ. օգոստոսի 14-ի հրամանագրով ստեղծվում են 6 պաշտպանական շրջաններ: Հրամանատարներին հանձնարարվում է վերակազմել ջոկատները և անցնել գումարտակների (դիվիզիոնների), վաշտերի (մարտկոցների), դասակների ու ջոկերի կազմավորմանը: Մինչև նույն թվականի սեպտեմբերի 15-ը պետք է նշանակվեին պաշտպանական շրջանների հրամանատարներ: Դեռևս մարտական գոտիների հրամանատարների պաշտոնների համար առաջադրված զինվորական պետերը նույնությամբ ու համապատասխանաբար ստանձնեցին Արցախի հիմք շրջանների ու Ստեփանակերտի հիման վրա կազմավորվող ՊՇ-ների հրամանատարությունը*:

ՊՇ հրամանատարները մինչև սեպտեմբերի 25-ը պարտավոր էին ԻՊՈՒ շտաբ՝ ԻՊԿ նախագահի հաստատմանը բերել տեղակայվելի, զորատեսակների, բաժանմունքների, ծառայությունների պետերի և գումարտակների հրամանատարների պաշտոններում նշանակումների մասին ներկայացումներ:

Վաշտերի (մարտկոցների) և դասակների հրամանատարների նշանակումները բողոքում էին ՊՇ հրամանատարների, իսկ կրտսեր հրամանատարական կազմի նշանակումները՝ գումարտակների հրամանատարների իրավասությանը: Նաև սահմանվում էին հրամանատարական կազմին սպայական կոչումների շնորհման, կազմակերպական այլ հարցերի լուծման կարգն ու ժամկետները [18]:

Այդ հրամանագրի իրագործումն առաջընթաց, կարելու բայլ էր Արցախում կանոնավոր ու ժամանակակից բանակ ստեղծելու ճանապարհին: Անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկվեցին նոր հաստիքակազմակերպական կառուցվածքի անցնելու, կանոնավոր ստորաբաժանումներ վերակազմավորելու ուղղությամբ:

Արցախի ԻՊՈՒ շինարարության նոր կազմակերպական-հաստիքային կառուցվածքի հետ կապված, ԼՂՀ ԻՊԿ նախագահի հրամանագրով, նախկին 1-ին, 4-րդ և 6-րդ վաշտերի հիման վրա սկսեցին կազմավորվել մատուցողական գումարտակներ՝ ՊՇ ՄՀԳ հաստիքացուցակի համաձայն: Վերակազմավորվող գումարտակներն անձնակազմով, սպառազինությամբ ու տեխնիկայով համալրվելու էին Ստեփանակերտի կայազորի ստորաբաժանումների, զորահավաքային ռեզերվի և Կենտրոնական ՊՇ ստորաբաժանումների հենքի վրա: Կազմակերպական-զորահավաքային բաժնի պետին հանձնարարվեց կազմավորվող գումարտակների հրամանատարների հետ համատեղ ապահովել զինանձնակազմերի կազմակերպական վերաբաշխումը և զորակոչել պահեստի զինապարտների անհրաժեշտ քանակություն, մինչև ըստ հաստիքացուցակի գումարտակները լրիվ համալրվել: Սպայական պաշտոնների կազմալրումը կատարվում էր ավելի պատրաստված, դրական կողմերով իրենց ցուցաբերած, կրտսեր հրամանատարների թվից, հետագայում ներկայացնելով սկզբնական սպայական կոչումների շնորհման: Անհրաժեշտ էր գործնական օգնություն ցուցաբերել անձնակազմի, սպառազինության ու տեխնի-

* Շուշիի ՊՇ հրամանատար նշանակվեց Մարտին Գասպարյանը:

կայի հաշվառման գործընթացը կարգավորելուն: ԻՊԿ նախագահի տեղակալին, գորատեսակների ու վարչության ծառայության պետերին հանձնարարվում էր մինչև սեպտեմբերի 2-ը ավարտել բոլոր նյութատեխնիկական պաշարների, սպառազինության և տեխնիկայի վերաբաշխումը ըստ վերակազմավորվող գումարտակների և ապահովել դրանց լրիվ համալրումը ՄՀԳ-ի հաստիքացուցակի համաձայն:

1-ին մոտոհրաձգային գումարտակը կազմավորվեց 1-ին վաշտի, Ա. Կարապետյանի դասակի, Ֆ. Գաբրիելյանի վաշտի, Ա. Հարությունյանի դասակի հիման վրա: 2-րդ և 3-րդ ՄՀԳ-ները կազմավորվեցին «Տիգր»-ի վաշտի, «Ամարաս», «Վրեժ» խմբերի, «Վաղյո», «Շահեն», «Բոբյա» դասակների, ինչպես նաև 6-րդ, 2-րդ, 3-րդ, 7-րդ վաշտերի հիման վրա: 1-ին, 2-րդ և 3-րդ ՄՀ գումարտակների հրամանատարները նշանակվեցին համապատասխանաբար Հենրիխ Շահենի Հակոբյանը, Գագիկ Նիկողայի Մարգարյանը և Սամվել Վլադիմիրի Հարությունյանը:

Գումարտակների կազմավորումը սկսվեց 1992 թ. օգոստոսի 30-ին: Անցումը նոր հաստիքների պետք է ավարտվեր 1992 թ. սեպտեմբերի 5-ին: Կատարման մասին պիտի գեկուցվեր ԼՂՀ ինքնապաշտպանության շտաբին:

Բոլոր աստիճանների հրամանատարների ուշադրությունն էր հրավիրվում վերակազմվող ստորաբաժանումներին մշտական մարտական պատրաստության և հանկարծակի առաջացող խնդիրների անհապաղ կատարման ունակության վրա [19]: Այս և արական սեռի բնակչության գորակոչը կենսականորեն անհրաժեշտ քայլեր էին: Ձինվորական կանոնավոր կառույցների ստեղծման դրական արդյունքները երկար սպասեցնել չտվին՝ թե՛ պաշտպանության բանակի նախահիմքերը ստեղծելու և թե՛ ռազմաճակատում արմատական բեկում մտցնելու առումով: Հաղթանակի արևը սկսում էր թեքվել դեպի Արցախի ինքնապաշտպանության ուժերի կողմը...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տես ՀՀ Դաշնակցութիւնը եւ արցախեան պահանջատիրութիւնը (1988—1998), «Ազդակ» բացառիկ, 20 փետրուար, 1998, էջ 7—8:
2. Նվաղ Սողոմոնյան, 1991. «Կոլոս» (Մարդոտություն), Ա մաս, Ստեփանակերտ, 1994, էջ 27—28:
3. Տես «Հայ զինվոր», ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ, թիվ 19, 1999 թ.:
4. В. Б. Арутюнян, События в Нагорном Карабахе, Хроника, Часть 4-ая, январь 1991 г. - январь 1993 г., Ереван, «Гитутюн», 1994, стр. 25-26.
5. Նույն տեղում, էջ 32—33:
6. Նույն տեղում, էջ 60—61:
7. «Արցախ» հանդես, N 1, 1992, էջ 17:
8. Аппаратный журнал радиостанции, начат 25 декабря 1991 г. - окончено 5 марта 1992 г., л. 4а.
9. Նույն տեղում, թ. 7թ:
10. Նույն տեղում, թ. 7ա:
11. Հիշյալ մարտերի մասին մեր կողմից պարբերական մամուլում հրապարակվել են բազմաթիվ հեղինակային հոդվածներ. տես «Մարտիկ», ԼՂՀ ՊՆ պաշտոնաթերթ, թթ. 2, 3, 7, 9, 10, 15 1996 թ., թիվ 46 1998 թ., թթ. 2, 41, 44, 45 1999 թ., «Խաչեն», Ասկերանի շրջանի վարչակազմի պաշտոնաթերթ, թիվ 3, 1993 թ. և այլն:
12. ԼՂՀ պետական արխիվ (ՊԱ), ֆ. 1, ց. 5, պ. մ. 13, կ. 1, թ. 24:
13. Նույն տեղում, թ. 26:
14. Նույն տեղում, թ. 29:
15. ԼՂՀ Նախարարների խորհրդի 1992 թ. մարտի 26-ի նիստի արձանագրություն N 3, թ. 2:
16. Տես մեր հեղինակած նյութերը՝ «Մարտիկ» թ. 15, 1996 թ., թթ. 9, 14, 19, 1999 թ., «Ազատ Արցախ»,

հանրապետական թերթ, N 53, 1999 թ., և այլն:

17. Պաշտպանության բանակի կենտրոնական արխիվ (ՊԲԱԱ), ԼՂՀ ԻՊԿ ճախագահի հրամանագրեր, գործ N 31, թ. 1:
18. Նույն տեղում, հրաման N 2, թ. 3—4:
19. Նույն տեղում, հրաման N 3, թ. 6—7:

М. А. АРУГЮНЯН

ФОРМИРОВАНИЕ СИЛ СОМОБОРОНЫ АРЦАХА

Резюме

Формирование и становление Сил Самообороны прошло сравнительно долгий и трудный путь. Параллельно с тяжелыми оборонительными и освободительными боями, многочисленные отряды добровольцев сплотились в регулярные военные подразделения. На базе этих подразделений создавались структуры Сил Самообороны НКР, тем самым были заложены основы формирования Армии Обороны НКР, соответствующей современным требованиям и жизненным, национальным интересам, в целях безопасности граждан республики.

М. А. HAROUTUNIAN

FORMATION OF SELF-DEFENSE FORCES OF ARTSAKH

Summary

The formation and establishment of Self-defense Forces had a comparatively long and hard way. Parallel with heavy defensive and liberating fighting, numerous detachments on a voluntary base gathered into a regular military units. On the base of these units the structures of the NKR Self-defense Forces were being built, by this were laid the foundations for creating the NKR Defense Army, corresponding to the modern demands vital, national interests and security of the citizens of the republic.

Վ. ԲԱՆԱՅԱՆ

ՄԵՏԱՔԱՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱԴՈՒՄ 19-ԻՂ ԴԱՐԻ
ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՑ ՄԻՆԶԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Լեոնային Ղարաքադում շերամապահության և մետաքսագործության զարգացման մասին վերջին հարյուրամյակում կատարվել են որոշ ուսումնասիրություններ: 19-րդ դարի 80-ական թվականներին Ղարաքադում մետաքսամշակման «գործարանների» մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել Ա. Արասխանյանի աշխատության մեջ¹:

Լեոնային Ղարաքադում շերամապահության զարգացման առանձին դրվագներ քննարկվել են Գ. Մեյրամի, Ար. Առաքելյանի և Ա. Ջաքարյանի ուսումնասիրություններում²:

Առանձնապես հետաքրքրություն է ներկայացնում Ա. Պետրոսյանի մենագրությունը³: Հեղինակը անդրադարձել է Լեոնային Ղարաքադում շերամապահության տնտեսական օգտավետությանը, որդերի կերակրման նոր մեթոդների կիրառմանը, դրանց հետ կապված ազգագրական բնույթի բազմաթիվ հարցերի: Ա. Պետրոսյանը Լեոնային Ղարաքադում շերամապահության և մետաքսագործության հետ կապված հարցերը հասցրել է մինչև 1914 թ. իրողությունները:

Սույն հոդվածի նպատակն է հրապարակի վրա եղած, մանավանդ ԼՂՀ պետական արխիվում և պատմաերկրագիտական թանգարանում պահպանված և չհրատարակված նյութերի հիման վրա բացահայտել Լեոնային Ղարաքադում 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը մետաքսագործության զարգացման փուլերը, դրանց առանձնահատկությունները, վեր հանել Լեոնային Ղարաքադի մետաքսագործության տեսակարար կշիռը, ինչպես ռուսական կայսրության, այնպես էլ ԽՍՀՄ-ի տարածքում, ցույց տալ նրա տեղն ու դերը Լեոնային Ղարաքադի ժողովրդական տնտեսության մեջ, համգամանորեն քննարկել մետաքսի մեծ ճանապարհի հետ Արցախի ունեցած կապերը և դրա վերականգնման, մետաքսագործության հետագա զարգացման անհրաժեշտությունը:

19-րդ դարի երկրորդ կեսին Ռուսական կայսրությունում կապիտալիստական հարաբերությունների ձևավորման և տնտեսության բոլոր վերելքի պայմաններում հայկական գյուղը իր նահապետական սովորություններով հանդերձ, ներքաշվեց ընդհանուր համառուսական շուկայի մեջ: Անձրևից հետո աճող սնկերի նման, Արցախի բնակավայրերում, մեկը մյուսի հետևից, երևան էին գալիս առաջին մասնավոր ձեռնարկությունները, որոնք երբեմն աղբյուրներում հիշատակվում են «ֆաբրի-

¹ А. Арасхянян, Закавказские шелкоматальные заводы, Тифлис, 1883.

² Գ. Մեյրամ, Ղարաքադի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները, Թիֆլիս, 1928, Ար. Առաքելյան, Շերամապահությունը Լեոնային Ղարաքադի ավտոնոմ մարզում, Ստեփ., 1939, А. Захарян, Шелковая промышленность Нагорного Карабаха, Баку, 1970.

³ Ա. Պետրոսյան, Հայոց շերամապահական մշակույթը, Եր., 1987:

կաններ», «գործարաններ» անուններով: Դրանք հիմնվում էին գլխավորապես առավել մարդաշատ բնակավայրերում: Այդ գործարանների զգալի մասը զբաղվում էր մետաքսի արտադրությամբ: Մետաքսի մեծ ճանապարհին մոտ լինելով, Ղարաբաղի հայությունը հնուց ի վեր զբաղվում էր շերամապահությամբ: Այն նոր ընթացք ու թափ ստացավ 19-րդ դարի 80—90-ական թվականներին: Հունդը Ղարաբաղ է հասել մի շարք երկրներից, տարբեր ճանապարհներով: Այսպես, օրինակ, խորասան (դեղին ցեղի), խանջան (սպիտակ ցեղի) հունդը բերվել է Կոստանդնուպոլսից, զառիֆյան սպիտակ և դեղին ցեղի հունդը Թբիլիսիից, պասխաղի սպիտակ և դեղին ցեղի հունդերը Կոստանդնուպոլսից և Իտալիայից: Մինչև 1890 թվականը Ղարաբաղում լայն տարածված էր ճապոնական դեղին ցեղի մանր բոժոժ ունեցող հունդը, որին տեղացիները յապոն էին անվանում: Այն ծովային ճանապարհով Չինաստանից տեղափոխվել է Հունաստան, իսկ այնտեղից Ղարաբաղ⁴: Հարկ է նշել, որ 1870-ական թվականներին Ղարաբաղում շերամի հունդը հիմնականում տարածում էին ֆրանսիացիները⁵: Ներմուծվող հունդի քանակը չէր բավարարում տեղական պահանջները: Դրա հետևանքով շերամապահները տեղում սկսեցին հունդ անեցնել: 19-րդ վարի վերջերին Անդրկովկասում հունդի անեցման և տարածման գործը կենտրոնացված էր երեք ընտանիքների ձեռքում, որոնցից մեկը՝ Տեր-Գրիգորյանները ղարաբաղցի էին:

Սկզբնական շրջանում շերամապահ գյուղացիները ոչ միայն բոժոժ էին արտադրում, այլ տանը պարզունակ եղանակով ուղևաչարխով մանում էին թելը: Տեղացի վաճառականները արտադրանքը արտահանում էին արտասահմանյան քաղաքներ:

Արցախի բնական մետաքսը բարձր է գնահատվել միջազգային մի շարք տոնավաճառներում: 1882 թ. Մոսկվայում կազմակերպված տոնավաճառում Հունաշեն-Հադրութի մետաքսն արժանացել է բրոնզե մեդալի, իսկ մեկ տարի անց՝ 1883 թ. ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքում՝ ոսկե մեդալի: Տեղին է հիշել, որ 19-րդ դարի վերջերին Արցախի մետաքսից են պատրաստվել Փարիզի Ելիսեյան պալատի վարագույրները⁶:

19-րդ դարի 50-ական թվականներին Արցախում գտնվող մետաքսագործարանները տնայնագործական տիպի մանր ձեռնարկություններ էին՝ խարսխված բացառապես ձեռքի աշխատանքի վրա: Արդյունաբերական եղանակով մետաքսաթելի արտադրության առաջին փորձերը Ղարաբաղում կատարել են 19-րդ դարի կեսերին՝ ղարաբաղցի Աղաբաբա և Գրիգոր Խաչատրյանները ու Կարապետ Շահմուրադյանը:

1856—1857 թվականներին Ստեփանակերտում հիմնադրեցին մետաքսի ֆաբրիկա, որտեղ աշխատում էին Նուխուց եկած 25—30 հայ բանվորներ: Այդ կիսատնայնագործական բնույթի ֆաբրիկայի բոլոր հաստոցները պատրաստել էին ղարաբաղցի հմուտ վարպետները: Նույն դարի 60-ական թվականներին շուշեցի վաճառականները լինելով Մարսեկ, Լիոն, Միլան, Վենետիկ, Ջենովա քաղաքներում արտասահմանից օրինակում են մանրաբույր, մետաքս ոլորող մեքենան և միաժամանակ «ցելլիվսի» եղանակով սկսում են ստանալ առողջ սերմ: Առաջին անգամ Ղարաբաղի մետաքսագործի կիսանախապետական աշխատանքին փոխարինելու եկավ շոգու աշխատանքը: Այս համգամանքը նպաստում է, որպեսզի երկրամասում զարգանա շերամապահությունը: Այսպես, եթե Վարանդայի գավառում 1890 թ. արտադրվում էր 2,138 փուք բոժոժ, ապա 1895 թ. այն հասցվեց 9000 փուքի, որից 4300 փուքը արտահանվել է եվրոպական երկրներ⁷:

⁴ Ար. Առաքելյան, Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում, Ստեփ., 1939, էջ 12:

⁵ Ազգագրական հանդես, գիրք Բ, Թիֆլիս, 1987, էջ 91:

⁶ Շ. Սևրադյան, Արցախ, Երևան, 1991, էջ 46:

⁷ Ազգագրական հանդես, գիրք Բ, Թիֆլիս, 1987, էջ 91—92:

Նման պայմաններում անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկվեցին Ղարաբաղում նոր մետաքսագործարանների կառուցման ուղղությամբ: Ժամանակակցի վկայությամբ 1888 թ. Արցախում կար 18 մետաքսագործարան, որոնք բոլորը պատկանում էին հայերին: Դրանք տեղակայված էին Շուշի քաղաքում, Ստեփանակերտում, Կրկժան, Քարին-տակ, Սղնախ, Չանախչի, Ղարաբուլաղ, Ղշլաղ, Թաղուտ, Տող, Հաղորթ, Շուշիքենդ, Բալուջա, Խանածախ, Գիշի գյուղերում:

Արդեն 1896 թ. Լեռնային Ղարաբաղում 26 մետաքսակարծական ֆաբրիկա կար⁸, իսկ առաջին համաշխարհային պատերազմի մախոթյակին դրանց թիվը հասավ 36-ի, 1900 հաստոցներով, միաժամանակ կառուցվեց 10 նոր թել ոլորող գործարաններ⁹, որտեղ տարեկան արտադրվում է մինչև 8000 փութ մետաքս¹⁰: Միայն Վարանդայի գավառում 1895 թ. արտադրվում էր 1100 փութ մետաքս և 280 փութ ֆրիզոն¹¹: Շուշին հանդիսանում էր բոժոժի խոշոր շուկա Անդրկովկասում: 1894 թ. Շուշիում հիմնադրվեց կովկասյան մետաքսագործական կայան: Այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի 85 բնակավայրերում շերամապահությամբ զբաղվում էին մոտ 12000 տնտեսություն, որը կազմում էր բոլոր տնտեսությունների 45 տոկոսը: Բոժոժի արտադրության համար անբարենպաստ տարիների դեպքում գործարանների համար հույս չեն դրել Ղարաբաղ է ներմուծվել ներկայիս Ադրբեջանի շրջաններից, Վրաստանից, հատկապես Քութաիսի գավառից, ինչպես նաև Միջին Ասիայից և Պարսկաստանից:

Վերոհիշյալ ժամանակահատվածում լեռնային Ղարաբաղում բնական մետաքսի արտադրության բուռն վերելքը պայմանավորված է մի շարք բարենպաստ գործոնների առկայությամբ.

1. Տարանցիկ առևտրական ճանապարհների հանգուցակետում գտնվելը:
2. Լեռնային Ղարաբաղի վաճառականների և գործարանատերերի սերտ կապերը Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի երկրների գործարար շրջանների հետ:
3. Այս բնագավառում հնուց եկած ավանդույթները, որին գումարվեց նաև դարբաղցիների աշխատասիրությունը և հակումը դեպի արհեստը:
4. Էժան և որակյալ աշխատուժի գոյությունը:
5. Վառելանյութի՝ անտառների մոտ լինելու հանգամանքը:

Լեռնային Ղարաբաղի մետաքսաթել մեծ համարում ունեն Եվրոպայի և Ասիայի երկրներում: Մինչև 1883 թիվը երկրամասում արտադրված թելը ուղարկվում էր Մարսել, հետագա տարիներին առավել շատ Մոսկվա, իսկ ֆրիզոնը՝ Ֆրանսիա¹²:

Մետաքսի արտադրությամբ Ռուսաստանի երկրամասերի մեջ Ղարաբաղը բռնում էր 2-րդ տեղը և տալիս էր Անդրկովկասի մետաքսի արտադրության 35 տոկոսը¹³:

Ժամանակի ընթացքում Լեռնային Ղարաբաղի մի շարք ֆաբրիկաներ հազեցվեցին նոր տեխնիկայով: Ռուսաստանում առաջին անգամ Շուշիում գտնվող Գ. Հարությունյանցի ֆաբրիկայում կիրառվեց բոժոժը չորացնելու հատուկ մեխանիկական սարքավորում:

20-րդ դարի սկզբին ստեղծվեց Գ. Հարությունյանցի Կովկասի մետաքսագործական և մետաքսաղորման արդյունաբերական ընկերություն, որը միավորեց 6 մետաքսագործարան, 2 մետաքսաղորման և 3 բոժոժաչորացման ֆաբրիկաներ:

Քաղաքական գործընթացները, սակայն, շուտով ընդհատեցին շերամապա-

⁸ Ազգագրական հանդես, գիրք Բ, Թիֆլիս, 1987, էջ 99:

⁹ Ար. Առաքելյան, Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում, Ստեփ., 1939, էջ 15:

¹⁰ ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 401, ց. 1, գ. 23, ք. 3:

¹¹ Ազգագրական հանդես, էջ 99:

¹² «Մշակ», 1888, N 100:

¹³ Заря Востока, 1927, N 1527.

հուրյան և մետաքսագործության զարգացման բնականոն ընթացքը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ազգամիջյան ընդհանրումների հետևանքով ավերվեցին Լեռնային Ղարաբաղի մետաքսագործարանները: Խաթարվեցին եվրոպական և ասիական երկրների հետ տնտեսական կապերը: Ծանապարհների անապահովությունը դժվարացրին գործարանների արտադրած թելի սպառումը: Անտառներից փայտ բերելու խնդիրը կապված էր կյանքի վտանգի հետ և որպես վառելափայտ օգտագործում էին թոխմաչարի տունկը:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգերի հաստատումը ինչ-որ չափով համընկավ խորհրդային Ռուսաստանում վարվող ՆԵՊ-ի ժամանակաշրջանին: Երկրամասի արդյունաբերությունը, հատկապես մետաքսի արտադրությունը վերջնական կործանումից փրկելու նպատակով ազգայնացված ձեռնարկությունները վարձակալման կարգով հանձնվեցին մասնավոր մարդկանց:

Անցումը ՆԵՊ-ի նպատեց, որպեսզի Լեռնային Ղարաբաղում մետաքսագործությունը նոր թափ ու զարգացում ունենա: Համառ աշխատանքի շնորհիվ արդեն 1922 թ. գործի որվեցին հինգ ֆաբրիկա, որոնցից մեկը պետական էր, չորսը՝ վարձակալված¹⁴: Մեկական մանածագործարան գտնվում էր Սեյդիշեն, Խնձրիստան, Բադարա, Ղչաղ գյուղերում, իսկ Քարին-տակ գյուղում գործում էր թել ոլորող մեկ գործարան, որը ժամանակի ընթացքում կառուցվել էր Ֆրանսիայի մասնագետների կողմից¹⁵: Գործարանների պարապուրդը կանխելու նպատակով բոժոժը ներմուծվում էր Ադրբեջանի և Վրաստանի շրջաններից¹⁶: Ֆաբրիկաները որակյալ բոժոժով ապահովելու նպատակով 1924 թ. Հաղուրթում հիմնադրվեց իտալական Չիչե հում-դային ընկերությունը¹⁷:

1925 թ. շերամապահության զարգացումը, մարզի գյուղացիական տնտեսությունների ավելի քան 45 տոկոսին հնարավորություն էր տալի ստանալ մեծ քանակությամբ շահույթ:

ԼՂԻՄ մետաքսակարծական ֆաբրիկաների պետական տրեստը՝ Ղարմետաքսարդյունաբերությունը, ստեղծվեց 1925 թ. օգոստոսին: Այն նոր հնարավորություններ տալով մարզի մետաքսարդյունաբերության հետագա զարգացման համար: Նորաստեղծ տրեստը նյութական մեծ օժանդակություն ստացավ մետաքսի միութենական տրեստից: Մարզային ժողտնտխորհի 1925—1926 թթ. տնտեսական տարվա զեկուցագրերից մեկում ասված է, որ այս տարի, շնորհիվ Մոսկվայի մետաքսատրեստի ֆինանսական օգնության, հաջողվեց գործի գցել երեք ֆաբրիկա ևս¹⁸: Ղարմետաքստրեստը ամեն կերպ ձգտում է վերացնել աշխատանքի պրոցեսում գոյություն ունեցող տնայնագործությունը, արմատավորել աշխատանքի առաջավոր ձևերը, պլանավորել արտադրանքի իրացումը և Ստեփանակերտում կառուցել նոր ֆաբրիկա:

Տարեցտարի ավելանում էին մետաքսարդյունաբերության մեջ կապիտալ ներդրումները: Եթե 1926 թ. այն կազմում էր 296 հազար ռուբլի, ապա 1928 թ. հասավ 500 հազար ռուբլու: 1927 թ. օգոստոսի 11-ին Ստեփանակերտում սկսվեցին մետաքսագործական նոր ֆաբրիկայի աշխատանքները, որի համար նոր սարքավորումներ պատվիրվեցին իտալական «Բատալիա» ֆիրմային: Ֆաբրիկայի առաջին մասնաշենքը շահագործման հանձնվեց 1929 թ. սեպտեմբերի 20-ին: Ենթամապահության զարգացման նպատակով նախատեսվում էր ունենալ 4000 հեկտար թոխմաչար: Դրա համար դեռևս 1926 թ. մարզում ստեղծվել էր փորձնական տնտեսու-

¹⁴ Г. А. Кочарян, Нагорный Карабах, Баку, 1925, с. 92.

¹⁵ Ար. Առաքելյան, Ենթամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում, Ստեփ. 1939, էջ 32:

¹⁶ Կոմունիստ, 1967, N 126:

¹⁷ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 23, ց. 1, գ. 68, ք. 20—21:

¹⁸ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 18, ք. 6:

¹⁹ Заря Востока, 1927, N 1407.

թյուն, որի ջերմոցներում աճում էր 600 հազար թթենի¹⁹։ Այստեղ աճեցվել է հունգարական, իտալական և ֆրանսիական տեսակի թթենու սերմեր։

Լեռնային Ղարաբաղի մետաքսագործները սերտ կապեր ունեին Վրաստանի՝ Մամուրեղի և Աղրեջանի՝ Նուխու մետաքսագործների հետ։ Բավականաչափ բարելավվեց մետաքսագործարանների բանվորների սոցիալական վիճակը։ Նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ 1931 թ. բանվորների աշխատավարձն աճեց 17 անգամ²⁰։ Ստեփանակերտի ֆաբրիկային կից գործում էր մսուր մանկապարտեզ, 5 յիկկայան²¹։

Ղարմետաքսկոմբինատը որակյալ կադրերով ապահովելու նպատակով տասնյակ երիտասարդներ ուղարկվեցին Խորհրդային Միության տարբեր ֆաբրիկաներ՝ մասնագիտական կարողությունները կատարելագործելու։ Երկրի տարբեր վայրերից՝ Մոսկվայից, Թբիլիսիից Լեռնային Ղարաբաղ եկան բարձր որակի ինժեներներ։

Լեռնային Ղարաբաղում գտնվող մետաքսի ֆաբրիկաների աշխատանքի արդյունավետության բարձրացման և նրանց ինքնուրույնությունը մեծացնելու նպատակով 1934 թ. ապրիլին Ղարաբաղի մետաքսի տրեստը վերակազմվեց Ղարաբաղի մետաքսի արդյունաբերության վարչության։

Լուրջ ուղադրություն էր դարձվում շերամապահ մասնագետների պատրաստման գործին։ Եթե 1934 թ. կար 3 խմբակ, որտեղ սովորում էին 220 աշակերտներ, ապա 1936 թ. դրանց թիվը համապատասխանաբար հասավ 47-ի, և 1870²²։ Շերամի բերքի բարձրացման նպատակով կիրառվում էին ագրոմիջոցառումներ։

Լեռնային Ղարաբաղում շերամապահությունն ու մետաքսի արտադրությունը նոր թափ ստացավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Եթե 1940 թ. մարզում արտադրվել էր 98 տոննա մետաքսի հումք և 120 հազար գծամետր մետաքսի գործվածք, ապա 1973 թ. համապատասխանաբար 135 տոննա և 11508 հազար գծամետր²³։ 1987 թ. Ղարմետաքսկոմբինատը՝ Խորհրդային Միությունում բնական մետաքս արտադրող երեք խոշորագույն ձեռնարկություններից մեկը, արտադրում էր տարեկան շուրջ 16 մլն. մետր մետաքսեղեն։ Մակայն ստացված եկամուտը լրիվ չէր մնում մարզում, որովհետև մետաքսաթելի ներկրումը կատարվում էր Շաքիի մետաքսագործարանում և հիմնական շահույթը մնում էր Աղրեջանում։

ԽՍՀՄ փլուզման, Աղրեջանի կողմից ԼՂՀ շրջափակման հետևանքով ինչպես տնտեսական մի շարք ոլորտներ, այնպես էլ բնական մետաքսի արտադրությունը անկում ապրեց։ Մակայն մետաքսի մեծ ճանապարհը կյանքի կոչելը ոչ միայն կնպաստի ԼՂՀ-ում մետաքսագործության զարգացմանը, այլ նոր թափ կհաղորդի աշխարհի մի շարք երկրների հետ տնտեսական, մշակութային և քաղաքական բազմապիսի կապերի ստեղծմանը։ Լիարյուն կգործեն համագործակցության նախկին ձևերը։

²⁰ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 3, ց. I, գ. 62, ք. 47։

²¹ Նույն տեղում։

²² Մ. Առաքելյան, նույն տեղում, էջ 42։

²³ ԼՂԽՄ-ը 50 տարում, Ստեփանակերտ, 1974, էջ 28։

С. В. ДАДАЯН

АНТИВОЕННОЕ ДВИЖЕНИЕ ДЕМОКРАТИЧЕСКОЙ МОЛОДЕЖИ МИРА ВО II ПОЛОВИНЕ 40-х ГОДОВ XX В.

Движение за мир - важнейшее направление борьбы народов за социальный прогресс. Значительное место в этом движении принадлежит демократическому молодежному движению. Яркие страницы этой борьбы вписаны во второй половине 40-х годов прошлого столетия, опыт которой имеет непреходящее значение для всех времен.

Изучение данной проблемы актуально главным образом потому, что человечество всегда стоит перед дилеммой: мир, демократия, социальный прогресс или реакционные и тоталитарные режимы, войны.

Исключить военную силу, как фактор при решении политических проблем - задача номер один всех времен, всех миролюбивых сил. Данная проблема в историографии новейшего периода изучена односторонне и не глубоко. Историки запада стараются принизить место демократической молодежи мира в решении мировых проблем, придать этому движению характер аналитичности, не связанное с общечеловеческими проблемами, а Советские историки выпячивают роль советской молодежи в послевоенном демократическом молодежном движении, связывая все важнейшие события этого периода с именем советского комсомола.

Анализ документов и материалов касающихся месту и роли демократических сил молодежи в антивоенном движении дает новые представления о том, что борьба за мир и социальный прогресс после второй мировой войны, в условиях начавшейся "холодной войны" была главной целью демократической молодежи независимо от их политической ориентации.

Это стремление молодежи было отражено в резолюции учредительной конференции Всемирной федерации демократической молодежи мира (ВФДМ, Лондон, ноябрь 1945 г.), в которой подчеркивается: "Молодежь желает, чтобы военные победы прошедших лет привели к длительному миру и безопасности"¹.

Активным борцом за мир после второй мировой войны выступило также демократическое студенчество в лице Международного Союза Студентов (МСС), созданный в августе 1946 года.

На протяжении всей послевоенной истории ВФДМ, совместно с

¹ Всемирная конференция молодежи. Лондон, 1945 г. Сб. документов и материалов. М., 1945, с. 33.

Международным Союзом Студентов (МСС), выступили организатором борьбы прогрессивной молодежи за безядерный мир и сотрудничество между народами. Одной из приоритетных направлений этой деятельности было проведение Всемирных фестивалей молодежи и студентов. Особое место в истории фестивального движения принадлежит первому фестивалю. Фестивальное движение - это результат совместной борьбы демократической молодежи мира против фашизма в 30-40-е гг. "Сколько было споров, сколько исписали бумаги, разрабатывая различные проекты. В этих спорах родилась идея фестиваля - праздника, в котором может участвовать делегация демократической молодежи любой страны"² - вспоминал руководитель советской молодежи 40-х годов Н. Михайлов.

Идея фестиваля получила дальнейшее развитие на майском (1946 г.) пленуме Исполкома ВФДМ и на первой сессии Совета ВФДМ (июль, 1946 г.)³. Важное значение имел вопрос о месте проведения фестиваля. Вначале предполагалось провести его в Париже, однако французское правительство опасалось прибытию столь большого отряда молодых людей и отказало. Совет ВФДМ, учитывая пожелания молодежных организаций Чехословакии, решил провести фестиваль в Праге. Молодежь Чехословакии находилась в первых рядах борцов против фашизма. Один из памятных дней молодежи мира - Международный день студентов - отмечается в память событий 17 ноября 1939 г. в Праге, когда чешские студенты открыто выступили против оккупационного режима гитлеровского фашизма.

Для проведения организационной работы секретариат ВФДМ создал Международный Подготовительный Комитет (МПК), во многих странах мира были созданы национальные подготовительные комитеты. На заседаниях МПК серьезное разногласие выявилось по вопросу о программе фестиваля. Представители молодежи СССР, США, Чехословакии считали, что на фестивале наряду с демонстрацией достижений в области науки, искусства и спорта должны проводиться массовые политические мероприятия. Однако были и другие мнения, придать фестивалю чисто развлекательный характер⁴. Было очень много пререкатствий со стороны властей выезде молодежных организаций, особенно из колониальных стран. Правительства некоторых стран считало, что этот фестиваль чисто "коммунистическое мероприятие". По признанию голландского историка Р. Лузы, правящие круги многих стран боялись, что "участие молодежи в мероприятиях ВФДМ или в фестивалях будет означать практическую поддержку политической линии коммунистов"⁵.

Подготовка к фестивалю проходила так же в борьбе раскольников внутри молодежных движений. Лидеры католической молодежи скандинавских стран, Италии и Франции вели активную работу и против единства молодежи, что поездка на фестиваль приведет их "в Москву"⁶. В антифестивальном походе важную роль сыграли социал-демократические лидеры молодежи Австрии, Дании, Италии, Голландии и др. Они пытались создать прозападные молодежные организации в Венгрии, Польши,

² Н. Михайлов, В Берлине 51-м. "Молодой коммунист", 1973, N 6, с. 87.

³ "Комсомольская правда", 1946, 1 августа.

⁴ "Комсомольская правда", 1947, 15 января.

⁵ R. Lutz. History of the International Socialist Yonth Movement. Leiden, 1970, p. 225.

⁶ "Молодежь мира", 1948, N 2(8), с. 32.

Чехословакии и Румынии, чтобы отвлечь их от фестиваля. Причина та же, они считали, что фестиваль это затея коммунистов.

Первый фестиваль молодежи и студентов проходил с 20 июля по 17 августа 1947 г. В нем приняли участие 17 тыс. юношей и девушек из 71 стран. На фестиваль прибыли большие делегации: из Франции - 1000 чел., Англии - 400 чел., Китая - 120 чел., Канады - 70 чел. Широкое представительство имела молодежь колониальных стран⁷. Фестиваль был насыщен разного рода политическими мероприятиями: митингов-32, дискуссии по актуальным проблемам-7. В числе этих мероприятий особое место принадлежит митингам солидарности с борющейся молодежью Испании, Греции и Индонезии. Первым политическим событием фестиваля стал митинг в чешской деревне Лидице, дотла сожженной фашистами. Здесь завершались три эстафетных маршрута, начавшиеся в трех районах Европы: Скандинавии, Франции и на Балканах. Разнообразной была спортивная и культурная программа. На фестивале участвовало 1598 спортсменов. За время фестиваля состоялись 12 футбольных, 17 волейбольных, 8 шахматных и т. д. состязаний, было показано 174 фильма из 22 стран, конкурсы пианистов, скрипачей, вокалистов и т. д.⁸

Пражский фестиваль способствовал мобилизации молодежи по решению актуальных задач демократического молодежного движения послевоенного периода. Он сыграл большую роль в дальнейшем сплочении сил прогрессивной молодежи, в укреплении Всемирной федерации демократической молодежи, расширении ее влияния. Так, с января по ноябрь 1947 года в федерацию вступила 25 новых организаций, объединивших 5 млн. человек. Особую популярность федерация завоевала у молодежи колониальных стран. Если в январе 1946 г. членами ВФДМ были 15 организаций из 14 колониальных стран, насчитывающие 3 млн. человек, то к октябрю 1948 года членами федерации состояло 34 организаций из 20 стран с общим числом 10 млн. человек⁹.

Идея борьбы за мир была главной целью второго Всемирного фестиваля молодежи и студентов. Он занимает особое место в ряду событий в международном демократическом молодежном движении второй половины 40-х годов XX века и выходит из рамок чисто молодежных мероприятий.

В декабре 1948 г. в Париже состоялось очередное заседание ИК ВФДМ, в январе 1949 г. в Праге - заседание исполкома Международного Союза студентов (ИК МСС). На них была одобрена идея созыва второго фестиваля молодежи в 1949 г. в Будапеште¹⁰.

В процессе подготовки к фестивалю прогрессивная молодежь подняла голос протеста против колониальных войн. В Голландии молодые социалисты выступили за вывод из Индонезии голландских войск, в Англии разворачивалось движение протеста против колониальной авантюры английского правительства в Малайе¹¹.

В канун фестиваля через многие европейские государства прошли "Караваны мира". Один из маршрутов начался на британских островах. Он пересек Ла-Манш, прошел по территории Голландии, Бельгии, Фран-

⁷ "Комсомольская правда", 1947, 25 июля.

⁸ "Смена", 1947, N 18, с. 5.

⁹ "Молодежь мира", 1948, N 1(7), с. 3.

¹⁰ "Молодежь мира", 1949, N 1(11), с. 4.

¹¹ "Молодой коммунист", 1984, N 9, с. 83.

ции. Факел мира был пронесен через Италию, Австрию и доведен до Будапешта¹².

Второй фестиваль молодежи и студентов был представительнее первого. В столицу Венгрии съехались 20 тыс. юношей и девушек из 82 стран. Он проходил под лозунгом "Молодежь объединяйся! За прочный мир, демократию, национальную независимость народов и лучшее будущее". Программа фестиваля была насыщена многочисленными политическими, спортивными и другими мероприятиями. Это митинг солидарности и шествия в честь молодежи Вьетнама, Испании, Греции, десятки вечеров дружбы и т. д. В художественных конкурсах приняли участие 2303 человек из 34 стран. Советская молодежь завоевала 59 премий из 112 учрежденных по всем видам искусства. Советские спортсмены завоевали 115 золотых, 42 серебрянных и 30 бронзовых медалей. Советской делегации был присужден "Кубок мира и демократии". Таким образом первые фестивали молодежи и студентов значительно консолидировали силы демократической молодежи в борьбе за мир, против "холодной войны".

Во второй половине 40-х годов Всемирная федерация демократической молодежи и Международный Союз Студентов развернули мощную кампанию в защиту мира, против террора и насилий по всему миру в связи с событиями в Греции и Испании.

Весной 1946 года греческая реакция при активной помощи англо-американских властей восстановила фашистский режим. Десятки тысяч бойцов томились в тюрьмах. Только с 1 по 3 мая 1948 г. были казнены 238 человек¹³. По этому случаю газета "Кристианс сайенс монитор" (США) писала: "Американцы, конечно, жалеют об этих казнях, но они считают, что другого выхода нет. В виду неустойчивого положения в стране, в настоящее время необходимы эффективные меры, чтобы остаться хозяевами положения"¹⁴. Так открыто признала газета ответственность властей США за террор и насилие царящиеся в Греции. В Испании в фашистских застенках томились десятки тысяч молодых патриотов, проходили массовые казни.

Политические мероприятия ВФДМ и МСС охватили миллионы молодых людей в различных странах. Антифашистский комитет советской молодежи (АКСМ) в своем заявлении адресованном греческим властям "присоединила свой голос протеста в волне народного возмущения против казни и расстрела в Греции..."¹⁵. Молодежь Англии приняла декларацию "Молодежь в борьбе за мир", и направила в ООН. Юноши и девушки Канады проводили кампанию ВФДМ под девизом "Молодежь требует направить 250 млн. долларов военного бюджета Канады на цели мира, а не на войну"¹⁶.

Значительно активизировалось движение за мир молодежи США. В 1948 году в США была создана прогрессивная организация "Американская молодежь за демократию". В феврале 1948 года лидеры 19 молодежных организаций, в т. ч. "Американская молодежь за демократию", "Молодые прогрессивные граждане Америки" и др. собрались в Вашингтоне на национальный молодежный слет против всеобщей военной

¹² "Вестник фестиваля", М., 1948 N 2, с. 30.

¹³ "Молодежь мира", 1948, N 4(10), с. 28.

¹⁴ Там же.

¹⁵ "Комсомольская правда", 1948, 15 мая.

¹⁶ В. П. Мошняга, ВФДМ. М., 1976, с. 23.

подготовки молодежи США. Слет предложил развернуть широкую кампанию, чтобы средства, предназначенные на военное обучение были использованы для улучшения условий жизни американской молодежи¹⁷.

Во второй половине 40-х годов возникло глобальное соперничество СССР и США, которое вошло в историю под названием "холодная война". Она втянула в себя всю планету. "Холодная война" расколола мир на две части, две военно-политические группировки. "Холодная война" довела до невиданных размеров милитаризации в политике и мышлении. "Ядерное устрашение" стало главным орудием политики.

Соперничество между СССР и США породило мощное антивоенное движение. Оно прошло по всем континентам и странам. Важным событием в этом направлении стал Первый Всемирный конгресс сторонников мира (Париж-Прага, 1949 г., апрель). В его работе принимали участие 2787 делегатов из 72 стран. На конгресс приехали 194 делегата от 190 молодежных организаций 35 стран, представляющих 53 млн. юношей и девушек¹⁸. На конгрессе выступил Президент ВФДМ Ги де Буассон. В своем выступлении он заявил: "Мы, представители молодежи мира, считаем своим долгом... вступить в ряды сторонников мира потому, что хранили верность обязательству, принятому на Лондонском съезде молодежи"¹⁹.

Участники конгресса - представители международных демократических организаций, видные общественные деятели, представители культуры, духовенства решительно осудили поджигателей войны. Был создан Комитет Всемирного конгресса сторонников мира, в состав которого вошли так же и представители ВФДМ и МСС. Во многих странах были созданы национальные комитеты сторонников мира, куда вошли и молодежные организации этих стран. Отныне борьба демократической молодежи мира была тесно связана с движением сторонников мира, которое стало оказывать серьезное влияние на развитие международных отношений.

Задачи демократического молодежного движения по выполнению решений комитета сторонников мира были рассмотрены на ИК ВФДМ (28 мая - 2 июня 1949 г.). Исполком федерации принял обращение "Молодежь - на защиту мира", в котором подчеркнута важность вовлечения широких слоев молодого поколения на борьбу против войн и запрещения атомного оружия²⁰.

Выступления молодежи приняло самый широкий размах. Молодежь английского города Ливерпуль в ответ на присвоение У. Черчиллю почетной степени доктора права, послала ему письмо, в котором дана характеристика одному из вдохновителей политики "холодной войны". "Мы присваиваем вам степень доктора войны, министра угнетения и члена ученого общества мировой реакции" - говорилось в письме²¹.

Молодежные организации Франции: Союз республиканской молодежи, союз девушек Франции, католические студенческие и спортивные молодежные организации опубликовали совместное воззвание осуждающее войну, требующее, чтобы труд и материальные средства служили культур-

¹⁷ К. П. Вощенко, Молодые борцы за мир. М., 1984, с. 17.

¹⁸ Первый Всемирный конгресс сторонников мира. Париж-Прага. 20-25 апреля, 1949. М., 1950, с. 529.

¹⁹ Первый Всемирный конгресс сторонников мира. С. 124.

²⁰ "Молодежь мира", 1949, № 3(13), с. 5.

²¹ К. П. Вощенко, Молодые борцы за мир. М., 1974, с. 21.

ному, физическому и профессиональному воспитанию молодежи. Они собрали 7 млн. голосов²².

Движение молодежи за мир проходило также в СССР и в странах восточной Европы. Только в октябре 1949 года в 60 странах мира прошли массовые митинги и демонстрации против войн, за мир.

Итоги борьбы демократической молодежи мира и вопросы ее дальнейшей активизации были в центре внимания второго Всемирного конгресса молодежи (Будапешт, 1949, сентябрь). На конгрессе присутствовало 637 делегатов от 188 молодежных организаций 71 стран. ВФДМ насчитывала в своих рядах 60 млн. юношей и девушек из 70 стран мира. Делегаты конгресса заявили о своей полной солидарности с целями и задачами всемирного движения сторонников мира. Конгресс выразил свою решимость бороться за прочный мир во всем мире, против угрозы новой войны²³.

Антивоенное движение демократической молодежи мира нашло свое логическое продолжение по сбору подписей под Стокгольмским воззванием (воззвание Всемирного Совета Мира, Стокгольм, март 1950 г.) о запрещении атомного оружия и заключения Пакта Мира между пятью державами (Всемирный Совет Мира, февраль 1951 г.).

Стокгольмское воззвание о запрещении ядерного оружия и заключение Пакта Мира вызвали широкий резонанс в мире среди демократической молодежи.

В обращении от 300 тыс. молодежи проживающих в районах реки По (Италия) к молодежи столиц пяти держав говорится: "Мы обращаемся к Вам, молодые друзья, с призывом присоединить ваш голос протеста к нашему, чтобы совместными усилиями, путем организации встреч между представителями пяти великих держав заключить Пакт Мира, чтобы... открыть путь в лучшее будущее"²⁴. В июне 1950 г. Исполком ВФДМ и МСС призвали молодежь и студентов развернуть соревнование по сбору подписей под Стокгольмское воззвание.

В Советском Союзе свыше 115 млн. человек, т. е. все взрослое население страны поставило свои подписи под Стокгольмским воззванием. Во Франции было собрано 14 млн. подписей, в ГДР - 8 млн., в Бразилии - 4,5 млн., в Италии - 4 млн. и т. д. Австрийская молодежь вступила в соревнование с финской, а бразильская с аргентинской. Финская молодежь собрала 117 тыс., австрийская 105 тыс., бразильская 600 тыс., аргентинская 400 тыс. подписей²⁵.

Вступили в соревнование по сбору подписей молодежные организации столиц европейских государств: Рима, Парижа и Берлина. Победителем вышел Союз свободной немецкой молодежи (ССНМ), собравшей 500 тыс. подписей. ВФДМ вручила ССНМ Берлина почетный флаг Мира. Убеждение миллионов молодых людей, что их голос будет услышан и тем самым не допустят ядерную войну, подняло общественность мира на сбор подписей по заключению Пакта Мира и Стокгольмским воззванием. Более 500 млн. подписей было собрано для Стокгольмского воззвания и 612 млн. для Пакта Мира. Все миролюбивое население планеты сказало свое решительное "нет" атомной войне.

²² К. П. Вошенков, Молодые борцы за мир, М., 1984, с. 21.

²³ Второй конгресс ВФДМ. Будапешт, 2-8 сентября 1949. М., 1950, с. 198.

²⁴ "Молодежь мира", 1951, N 7, с. 5.

²⁵ "Молодежь мира", 1951, N 4, 5, 7, 10, 11.

Таким образом, во второй половине 40-х годов демократическая молодежь мира совместно со всеми миролюбивыми силами мира активно боролась против новой, ядерной войны, и значительно способствовало укреплению мира и безопасности, развитию добрых отношений между странами и народами. Борьба демократической молодежи мира в этот период показывает, что ВФДМ и МСС в своей практической деятельности остались верны клятве данной на Всемирной конференции молодежи в Лондоне 1945 г., и на Международном конгрессе студентов в Праге 1946 года.

ԳՐԱԾԱՆԻԹՅՈՒՆ

1. Всемирная конференция молодежи. Лондон, 1945 г. Сб. документов и материалов. М., 1945 г.
2. Первый Всемирный конгресс сторонников мира. Париж-Прага 20-25 апреля, 1949 г. М., 1950 г.
3. «Молодежь мира» орган ВФДМ, 1948-1951 гг.
4. Мы-интернационалисты- Сб. документов... М., 1972 г.
5. Н. Михайлов - В Берлине- 51-м. - «Молодой коммунист», 1973 г. N 6.
6. К. П. Вошенков - Молодые борцы за мир. М., 1974 г.
7. В. П. Мошняга - ВФДМ, М., 1976 г.

Ս. Վ. ԴԱԴԱՅԱՆ

ԱՆԽԱՐՀԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՌԱՋՄԱԿԱՆ ԸՄՐԺՈՒՄԸ
XX դարի 40-ական թվականների II կեսին

Ամփոփում

Աշխարհի երիտասարդական հակառազմական շարժումը 40-ական թվականների II կեսին ընթանում էր ղեկավարական երիտասարդության համաշխարհային ֆեդերացիայի և միջազգային ուսանողության միության ղեկավարությամբ: Դեմոկրատական երիտասարդությունը հավատարիմ մնաց 1945 թվականին Լոնդոնում տված իր երդմանը: Նրանց և աշխարհի հակառազմական մյուս ուժերի համագործակցությամբ մարդկությանը փրկեց միջուկային զենքի շարիքից:

S. V. DADAYAN

ANTIMILITARY MOVEMENT OF THE WORLD DEMOCRATIC YOUTH IN THE
SECOND HALF OF THE 40 TH OF THE 20 TH CENTURY

Summary

World youth antimilitary movement in the second half of the 40 th was going under the leadership of democratic youth world federation and international students union. Democratic youth remained faithful to the oath given in 1945 in London. With the cooperation of the abovementioned organizations and other world antimilitary forces humanity was saved from the evil of nuclear arms.

Ը. ՍԱՂՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ
ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿ ԽԱՇԱՏԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐՈՒՄ

Հայկ Խաչատրյանի պատմավեպերում կիրառված բազմաբաղադրիչ հեղինակային նորակազմությունների մի մասն ունի պատմական բովանդակություն, ուր պատմական ու ռեալական փոխհարաբերությունները կազմում են պատմաբան, հնարառ, տեքստային (կապակցական) և միաժամանակ պատմական իրողություն ու խոսողի վերաբերմունք արտահայտող նորակազմություններ, որոնք պայմանավորվում են համատեքստի բառային միջավայրով ու ներքին իրադրությամբ:

Տաղանդավոր վիպասան Հայկ Խաչատրյանի հիմնական գրական երկերը պատմավեպեր են, որոնց լեզվառական հարստության ու ինքնատիպության գործում ուրույն տեղ ունեն հեղինակային նորաբանությունները և հատկապես նորակազմությունները: Վերջիններիս քննությանն է նվիրված սույն հոդվածը: Նորաբանության հիմնահարցը վաղուց է զբաղեցնում մասնագետներին: Որոշակի բարդություն և դժվարություն է ներկայացնում հեղինակային նորաբանությունների և հատկապես նրանց որոշման հարցը: Մեզանում այս բարդությունն ունի որոշակի առարկայական պատճառ. չկա հայերեն այնպիսի լիակատար բառարան, որի համեմատությամբ հնարավոր լիներ որոշել այս կամ այն հեղինակի կազմած նոր բառերը: Միակ ելքն այն է, որ համեմատության եզր դարձվեն հայերենի առավել ընդարձակ բառարանները: Այսպիսի համեմատությունը, ցավոք, չի կարող հարցի անառարկելի լուծման հիմք դառնալ, բայց գոնե մոտավոր գաղափար կարող է տալ սույն հարցում: Որոշ դեպքերի է հատկացնել ուսումնասիրողի լեզվագագացությանը, որն ըստ հնարավորին պետք է ստուգվի լրացուցիչ միջոցներով, աղբյուրներով (համաբարբառներ և այլն):

Պատմավեպի պարագայում առաջ է գալիս լրացուցիչ դժվարություն, երբ մանավանդ նորակազմությունը վերաբերում է պատմական անցյալը ներկայացնող երևույթներին, իրողություններին, ըմբռնումներին: Այսպիսի դժվարությունների հետ է կապված մեր սույն հոդվածի նյութի ուսումնասիրությունը: Ժգտել ենք մեր ուժերի ներածին չափ հաղթահարել այս դժվարությունները: Նշենք, որ նորաբանություններն առավելապես արտահայտվում են նորակազմության¹ միջոցով:

¹ Համեմատված են հետևյալ բառարանների հետ՝ ա) Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836—37 թթ., 2 հատոր, վերահրատարակված է 1979—81 թթ., Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, ք) Հ. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, Եր., 1927—35 թթ., 7 հ., վերահրատարակված 1971—80 թթ., 4 հ., Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, գ) Էջ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, 2 հ., Եր., 1976, դ) Հայկական ԽՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ժամանակակից հայերենի բացատրական բառարան, 4 հ., Եր., 1969—81, ՚) Հ. Բաղսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Եր., 1973:

Գեղարվեստական խոսքում հեղինակային նորակազմությունները տվյալ լեզվի ներքին միջոցներով կերտված բառեր են, որոնք ունեն ստեղծագործական ու գեղարվեստական նպատակադրում: Հեղինակը նորակազմություններին դիմում է այն դեպքում, երբ եղած բառերը չեն բավարարում արտահայտելու իր գաղափարները, զգացմունքները, հույզերը և այլն, երբ կարիք է գգում արտահայտելու իմաստային նրբերանգները:

Նոր բառեր կազմելը, անշուշտ, ստեղծագործական բարդ աշխատանք է, դրա հաջողության համար անհրաժեշտ է լեզվի խոր իմացություն և կազմած բառի նպատակային, դիպուկ կիրառություն:

Պ. Սևակի ճշգրիտ բնութագրությամբ «... նոր բառերի ստեղծման ուղին կարող է բացվել միայն նրա առջև, ով գիտի թնամ բառերին հարություն տալ, լրածներին խոսեցնել և մշակածներին վերաթարմացնել» [1,400]²:

Հ. Խաչատրյանի պատմավեպերում առկա հեղինակային նորակազմությունները զգալի քանակ են կազմում, որոնց մի մասն ունի պատմական բովանդակություն:

Հեղինակային նորակազմությունները բաժանվում են երկու խմբի [2,208—224]՝
1) համատեքստի բառային միջավայրով պայմանավորված նորակազմություններ,
2) համատեքստի ներքին իրադրությամբ պայմանավորված նորակազմություններ:

1. Համատեքստի բառային միջավայրով պայմանավորված նորակազմություններ, որոնց ծագումը բխում է համատեքստի որևէ բաղադրյալ բառի բաղադրիչներից մեկի արտաքին հնչյունական կողմի հետ ունեցած մմանությունից: Հ. Խաչատրյանի կերտած այս տիպի պատմական արտահայտություն ունեցող նորակազմությունները սահմանափակ են և ունեն հետևյալ ենթատեսակները.

1. Չուտ պատմաբառ-նորակազմություններ (սրանք արտահայտում են հասարակական, քաղաքական կյանքում, կենցաղում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով այլևս չգործածվող առարկա, երևույթ և գուրկ են արտահայտչական գունավորումից)՝ *սպասախումբ* [3,165], որը կերտված է *ասպախումբ* բառի համաբանությամբ և նշանակում է *տարաբնույթ աստիճանի սպասավորների խումբ*՝ «Երբ օր անց, երբ դեռ Աժդահակը չէր արթնացել քնից, արքայազն Տիգրանը հավաքեց հայկական ասպախումբը, Տիգրանուհու *սպասախումբը*՝ մաժիշտ Ավագուհին, գուսան Վարդգես, սպասավոր Գնիթը»:

Պատմաբառ-նորակազմություն է նաև *վահանաժուլարան* [3,285] բառը՝ կերտված *պղնձաժուլարանի* համաբանությամբ. «Մտան պղնձաժուլարանը, ապա *վահանաժուլարանը*»:

2. Տեքստային (կապակցական) նորակազմություններ, որոնց պատմական բովանդակությունն ի հայտ է գալիս նրանց հետ կապակցվող պատմաբառի շնորհիվ:

Օրինակ՝ *կեղծահանդես*, որի պատմական երանգը երևան է գալիս *հաղթահանդես* պատմաբառի հետ գործածվելիս (ոչ մի ճակատամարտ չշահած զորավար Պոմպեոսի ռազմավարը խաբեության արդյունք է, ուրեմն և նրա պատվին Հռոմում տեղի ունեցած տոնախմբությունը՝ կեղծիք, և այս իրողությունն է ամփոփում *կեղծահանդես* նորակազմությունը, որը հակադրվելով հաղթահանդեսին՝ ներկայացնում է ստորության և քաջության հակառակից հարաբերություն):

«— Մի՞թե Պոմպեոսի հաղթահանդեսը կեղծիք է, Արիստոբոլ:

— Հաղթահանդես՞ս, սա ոչ թե հաղթահանդես է, Կելեր, այլ *կեղծահանդես*» [4,526]:

Գուշակարան բառի համաբանությամբ ստեղծված *պատրանքարան* նորակազմությունը խորհրդանշում է մարդկային աշխարհայացքի պատմության մի փուլը, երբ փորձ էր արվում բնության երևույթների, պատմության ընթացքի մեջ տեսնել բնական օրինաչափություն և ոչ թե աստվածների քմահաճ խաղ:

² Թվագրված գրականությունը տե՛ս վերջում:

«— Աշխարհի բոլոր գուշակարաններն էլ *պատրանքարաններ* են: Քուրմ գուշակներին պիտի հավատալ միայն այն ժամանակ, երբ նրանք խոսում են այն մասին, թե երբ պիտի երաշտ լինի, երբ պիտի անձրև կամ կարկուտ գա: Այստեղ նրանք ճշմարտախոս են, որովհետև նրանց օգնում են հաշվումները, մախրդ տարիների փոքրը» [3,282]:

Ճայնատուն նորակազմությունը խորհրդանշում է հին հայերի առասպելական պատկերացումներն արձագանքի մասին: Երվանդ Ժպտացողի անունը կրող ժողովում մարդկային ձայնի արձագանքները նման են քրքջոցի: Այստեղից էլ առասպելն այն մասին, թե քրմապետը ձորի բոլոր անձավները լցրել է իր ծիծաղով:

«Սա Երվանդ Ժպտացողի տիրույթն է, նրա *ձայնատունը*: Դե, ինչ, արքաները գանձատուն են ունենում, այս քրմապետն էլ *ձայնատուն* է ունեցել» [5,447]:

3) *Նորակազմություններ*, որոնք միաժամանակ արտացոլում են պատմական իրողություն և խոսողի վերաբերմունք:

Գուսամավետ նորակազմությունը կերտվել է *գինեվետ* բառի համաբանությամբ և վերջինիս հետ տեքստում ծառայում է Գողթն գավառի՝ իբրև արվեստի բնօրրանի, բնութագրությանը:

«Այդպես էլ գինեվետ Գողթնը դարձավ *գուսամավետ* գավառ, գուսամների օրրան» [3,43]:

Ցածրագահ նորակազմությունը կերտվել է *նախագահ* բառի՝ բարձր գահ ունեցող հնացած իմաստի հակադրությամբ և նշանակում է իշխանությամբ ցածր դիրքում գտնվող:

«Ես պետք է իշխեմ Պարսից աշխարհի, դու՝ Հայոց աշխարհի վրա, մեզնից ոչ մեկը նախագահ ու ցածրագահ չէ» [3,337]:

Բառախաղի արհամարհական երանգներով հատկանշվող *Եվայլունի* նորակազմությունը կերտվել է *Երվանդունի* բառի համաբանությամբ՝ խորհրդանշելով իրենց հիմնադրի անունը կրող այն հայկական արքայական տներն ու դրանց ներկայացուցիչներին, որոնք մոռանում են Հայկից սերված լինելը:

«— Դու Հայկազունի ես և ոչ թե Երվանդունի: Եվ ընդհանրապես բոլոր հայ արքաներն էլ Հայկազունի են, ինձնից եք սերել ամենքդ, ես եմ ձեր բունը: Ոչ Երվանդունի կա, ոչ էլ *Եվայլունի*, կա միայն Հայկազունի, Հայկազյան զարմ» [3,385]:

Նշված տիպի նորակազմություն է նաև *հայրասիրություն* բառի համաբանությամբ կերտված *թագասիրություն* [5,286] բառը, որով պատճառաբանվում է արքայազն Արտավազդի՝ մշտապես հոր կողքին գտնվելը:

II. Համատեքստի ներքին իրադրությամբ պայմանավորված *նորակազմություններ*, որոնց համար էականը տեքստի ներքին պահանջն է: Հ. Խաչատրյանի կերտած այս տիպի նորակազմությունները պատմական բովանդակություն ունեցող հեղինակային նորակազմությունների 90 % են կազմում:

1) *Զուտ պատմաբառ, հնարառ-նորակազմություններ*՝

Ա) Հ. Խաչատրյանի կերտած պատմաբառ-նորակազմությունները զգալի քանակ են կազմում և առնչվում են կյանքի զանազան կողմերին՝

ա) *արքունական, իշխանական ոլորտներին հարաբերակցվող*՝ արքայաշար [3,31], արքայականչ, արքաընծա (դրամ) [3,243], որսագահ (արքայական որսի համար հատկացվող ընտիր տեղ) [3,402], արքայազալուստ [3,411], արքայազնամայր [4,15], արքայաղախիւն [4,91], որսապուրակ [4,223], թագաբանդակ [4,603], մատնակնքել [5,100], արքայախուց [5,246], դահլիճասրահ [5,265], ինքնաթագադրում [6,262],

բ) *ռազմական գործին առնչվող* ուղտագորք [3,186], երկաթանետ [3,216], մարտանվագ [4,36], հաղթանվագ [4,202], բերդօղակ [4,277], հեծելաջուկատ [5,88], աղեղնազորք [5,91], բերդակառույց [5,99], զորական-կառնապան [5,182], կապարճաման [6,178], ցուկահարել [6,251], միզակազերծ ամել [8,221],

գ) *կրոնին, հավատալիքներին, մշակույթին հարաբերակցվող*՝ մոմաբանդակ

[3,6], քրմախումբ [3,16], սալիկաշար [3,87], նավասարդալոր [3,207], սոսահմա [3,219], տաճարաշար [3,242], գուշակատերև [3,247], մեհենասենյակ [4,109], բարկայապաշտ (Բարկա աստծուն պաշտող) [5,43], ջրագուշակ [7,35], Մասիսատոն (ամեն ամսվա 18-րդ օրը՝ Մասիսին նվիրված տոն), գուսամախմբություն [8,152], գուշակածառ [8,168],

դ) *կյանքի այլևայլ կողմերին առնչվող՝* հայելաքար [3,10], կառքածածկոց [3,124], կրեսոսապատկեր (դրամ) [3,193], հովտագավառ [4,152], մուրճգարկան [4,282], գուսամահանդերձ [5,193], պարսպահիմն [7,86], ստրկալոյծ լինել [8,74]:

Հ. *Խաչատրյանի կերտած պատմաբան-նորակազմություններում* կան այնպիսիները, որոնք ստեղծվել են բառարաններում արդեն առկա բաղադրյալ բառերի ածանցմամբ կամ ածանցավոր բառի որևէ ածանցի փոփոխմամբ: Այդպիսիք են՝ *միջբազավորակյան* [3,352] (բառարաններում կա *միջբազավորություն* բառը) և *ստրկավաճառ, մարտակոչ, նետալից, խնոցահար* բառերից ածանցված *ստրկավաճառանոց* (կղզի) [4,26], *մարտակոչել* [4,303], *նետալեցուն* [4,335], *խնոցահարան* [7,60] նորակազմությունները: Մեր կողմից նորակազմություն դիտվող այս բառերի առկայությունը գրականությունում չի բացառվում:

Բ) *Հնարառ-նորակազմություններ* (այս տիպի նորակազմություններում առկա են լեզվական օրինաչափությունների փոփոխության հետևանքով չգործածվող բաղադրիչներ), որոնց գործածությունը սակավ է և մեծ մասամբ օգտագործված է արքաների կամ արքայական տոհմի ներկայացուցիչների ու քրմերի խոսքում կամ նրանց հետ առնչվող իրադրություններում:

Այդ տիպի բառերն իրենց մեջ պարունակում են որևէ հնաբանական ձևույթ կամ իմաստ:

ա) *Նորակազմ հնաբառ, որի մեկ բաղադրիչն է հնաբանություն*՝ զարմանդան [3,6], զարմանուն [3,89], կնասպատ [3,144], զանձախցոնք [3,394], արիագարմ [5,9],

բ) *նորակազմ հնաբառ, որի բաղադրիչներից մեկի իմաստն է հնաբանություն*՝ գինեմավ (նավ՝ ջրատար խողովակ) [4,68], գեղամամակ (նամակ՝ ցուցակ) [6,144]:

2) *Համատեքստի ներքին իրադրությամբ պայմանավորված տեքստային (կապակցական) նորակազմություններ* (սրանք նախորդի համեմատությամբ սակավ են):

Հ. *Խաչատրյանի* պատմավեպերում այս տիպի նորակազմությունների առաջացման ու կիրառման հիմնական ոլորտը աստվածների ու ոգիների, բնության երևույթների մասին ուրույն պատկերացում ունեցող հնագեղ Հայաստանն է:

Աստվածագույտ նորակազմությունը կապվում է սուսի ծառի հետ, որը սրբազան է համարվում, որովհետև բոլոր ծառերից միայն նա շարունակեց աստվածների համձնարարած գործը՝ համոզել մարդկանց ցածր ծայրով խոսել:

«Հայոց ծառերից միայն մեկը շարունակեց *աստվածագույտ* իր գործը... Այդ ծառի թաթանման տերևները սկսեցին սվսվալ և ասել.

— Սո՛ւս, սո՛ւս, սո՛ւս, սո՛ւս, սո՛ւս...» [3,211]:

Նույն տիպի են *ասքահենք* [3,4], *դիցավան* [3,13], *ինքնաներկրպագում* [3,79], *ասքապահ* [3,257] նորակազմությունները:

Հայ ժողովրդին, նրա պատմությունն ու աշխարհընկալումն անհմար է պատկերացնել առանց Մասիսի՝ մեր ժողովրդի հավերժագահ պաշտամունքի: Մասիսը հայերի համար և՛ բարձրության, և՛ սրբության խորհրդանիշ է: Այս են իմաստավորում *մասիսակատար* (սրբություն) [8,32], *մասիսաշախ*³ [8,101] նորակազմությունները:

Աղյուծասաստ [6,128] նորակազմությունը կապված է եռապետ Մարկոս Անտոնիոսի մի հետաքրքիր արարքի հետ՝ Միջերկրայքի քաղաքներով անցնելիս նա առյուծին լծած կառք էր մտառում՝ ի ցույց այն բանի, որ նույն հաջողությամբ մի օր էլ կսանձի իր հակառակորդին:

³ Մասիսաշախ՝ նորակազմությունը կիրառել է նաև Հովհ. Շիրազը:

3) Համատեքստի ներքին իրադրությամբ պայմանավորված նորակազմություններ, որոնք միաժամանակ արտացոլում են պատմական իրողություն և խոսողի վերաբերմունք:

Սրանց մեջ աչքի են ընկնում պատմական նշանավոր անձանց, ազգերի, պետությունների անուններից կերտված բառերը:

Երվանդական նորակազմությունը հատկանշում է այն ամենը, ինչ հատուկ է այդ տոհմի մարդկանց, իսկ *Երվանդ Մակավակյաց* արքայի համար այն հավասարաթիվ է *աստվածային մենաշնորհ* իմաստին.

«— Բայց իմաստությունն ու պերճարվեստը միայն Երվանդունիների մենաշնորհը չեն:

— Ես դա քաջ գիտեմ: Բայց ես պետք է պանծացնեմ իմ տոհմն ու իմ մտերիմներին: Մշտագո է միայն *Երվանդականը*:

— Իսկ եթե *Երվանդականը* թոփչք ու պայթյուն չունի:

— Ինչ անենք՝ չունի, ավելի լավ է ընտրել *Երվանդականի* մի թույլ գործ, քան ոչ Երվանդականի փառահեղ պատումը» [3,87]:

Արհամարհական երանգներով են ներկայացված Պարսից Կյուրոս արքայի կյանքն ու գործունեությունը և դրա հետ կապված *պարսկամարածին* (պարսիկից ու մարից ծնված) (մի այլ տեղ՝ *մարապարսկական խառնուրդ*), *կյուրոսածին* (Կյուրոսի կողմից վտանգ ներկայացնող), *կյուրոսասիրություն* (Կյուրոսին ընկերակցելը) նորակազմությունները:

«Ահա և Երվանդ արքայի ժամանակակից հանճարեղ ավերող *պարսկամարածին* Կյուրոսը» [3,228]:

«Միայն այն ժամանակ *կյուրոսածին* ամայրույնները կճալթեն Հայքի սահմաններից շատ հեռու» [3,238]:

«— Իմ վարքի մեջ ինչն է, որ դուր չի գալիս քեզ:

— *Կյուրոսասիրությունը*:

— Ես իմ կամքով չեմ դարձել նրա որսընկերն ու զորական ընկերը» [3,295]:

Հերոստրատություն նորակազմությունը ստեղծվել է Հերոստրատոսի անունից: Անմահների շարքը դասվելու համար նա հրկիզել է Արտեմիսի տաճարը: *Հերոստրատություն* բառն իմաստափոխվելով՝ ձեռք է բերում *խենթ* իմաստը: Ալեքսանդր Մակեդոնացուն վերագրվող խենթությունն անվանելով հերոստրատություն՝ հեղինակը նշում է և՛ նրանց ժամանակակից լինելը, և՛ այն, որ երկուսն էլ Արտեմիսի տաճարի հետ կապված «խենթ» պատմություն ունեն.

«*Հերոստրատություն* կար նույնիսկ Ալեքսանդր Մակեդոնացու մեջ» [8,25]:

Հռոմեակոյ նորակազմությունն իր մեջ խտացնում է Հռոմի երդվյալ թշնամի զորավար Հաննիբալի կյանքն ու գործունեությունը.

«Սակայն Հաննիբալը հերոսագարն Բարկաներից էր և աշխարհին հրաժեշտ պիտի տար *հռոմեակոյ* ոգով» [5,156]:

Նշված տիպի նորակազմություններ են նաև *հազարասալիկ* [3,239], *գուսանատուն* [3,402], *մագաղաթագող* [8,278], *ասպետաշունչ* [8,342] բառերը:

Լեզվաբանության մեջ անհատական նորակազմությունների շարքն են դասում նաև պոտենցիալ և դիպվածական բառերը [2,184]:

Պոտենցիալ են համարվում այն հնարավոր բառերը, որոնք կարող են կազմվել կամ կազմվել են լեզվի կենսունակ բառակազմական կաղապարներով և դեռևս չեն հասցրել մտնել և ընդունվել լեզվի մեջ: Կազմությամբ լինելով կանոնական՝ պոտենցիալ բառերը ստեղծվելիս իսկույն աչքի չեն ընկնում կամ չեն տարբերակվում կանոնական և համընդհանուր գործածություն ունեցող բառերից:

Հ. Խաչատրյանի կերտած նորակազմություններում պոտենցիալ կարելի է համարել *կյուրոսական* [3,162], *լուկոլլոսական* [4,274], *բագարատական* [4,301], *սեքստիլիոսական* [4,302], *հաննիբալական* [5,57], *հակակեսարական* [6,103] պատմաբառերը, որոնք ընդհանուր պատմական ֆոնի վրա սովորական բառեր են

քվում, քանի որ ռեալ պատմական անձանց ծառայող, հետևող կամ դեմ գնացող մարդկանց են խորհրդանշում:

Դիպվածական բառերը ստեղծվում են խոսքային իրադրության պահանջով, աչքի են ընկնում իրենց գոյացման հապճեպությամբ ու առավելապես կապվում են բանավոր խոսքում հանրատրաստից ստեղծվելու հետ: Այսպիսի հատկությամբ են օժտված նաև վերը նշված *կեղծահանդես*, *Եվայլունի* նորակազմությունները:

Թռոնասպան դիպվածական բառը, որը գործածվում է Կյուրոսի խոսքում, խորհրդանշում է հանուն գահի իր թոռանը սպանել ցանկացող Մարաց արքա Ածդահակին, իսկ *թոռնություն* բառը՝ թոռ և գահաժառանգ լինելը:

«— Դու իմ պապը չես, որովհետև իմ մանկությունը քո ծնկներին չի անցել:

— Լավ է, որ չի անցել:

— Բայց եթե անցներ՝ դու հիմա այստեղ չէիր լինի:

— Անեմ մարդ իր սխալների համար է պատժվում:

— *Թռոնասպան* ոչ մի պապ չի հասել երջանիկ ծերության:

— Գիտեմ, որ ես չեմ հասնի... ինչո՞ւ ես ուզում խնայել ինձ:

— Ես տալիս եմ քեզ այն, ինչ դու ես տվել ինձ: Ձրկեցիր *թոռնությունից*, բայց չսպանեցիր» [3,166]:

Դիպվածական բառեր են նաև *հանճիրալասպան* [5,218], *սերկևիլատյացություն* (Գրիգոր Պահլավունու կողմից սերկևիլ ատելու երևույթը՝ կապված հոր՝ Վասակ Պահլավունու մահվան հետ) [7,295]: Հ. Խաչատրյանի կերտած նորակազմությունները հիմնականում գոյականներ ու ածականներ են (բայերը քիչ քանակ են կազմում):

Ըստ կազմության այս նորակազմություններն առավելապես համադրական բարդություններ են, որոնցում գերիշխում են իսկական (բուն) երկբաղադրիչ կառույցները: Սրանց բաղադրիչներն ունեն հետևյալ ձևաբանական կաղապարները.

1) *գոյական+գոյական*— այս կաղապարում առաջին բաղադրիչն ունի սեռական հոլովածի նշանակություն՝ արքայազալուստ, զարմանդամ (զարմի՝ ցեղի անդամ), կրեսոսապատկեր, վահանաձուլաբան և այլն,

2) *գոյական+բայ (բայահիմք)*՝

ա) ուղղականի կամ հայցականի նշանակությամբ՝ բարկայապաշտ, հանճիրալասպան, հոռմեստյաց, ցուկահարել և այլն,

բ) բացառականի նշանակությամբ՝ կյուրոսածին, պարսկամարածին և այլն,

գ) գործիականի նշանակությամբ՝ կճապատ, մատնակնքել, ջրագուշակ և այլն,

3) *ածական+գոյական*— արիազարմ, ցածրագահ, կեղծահանդես և այլն:

Հ. Խաչատրյանի կերտած հարադրական բարդություններով հանդես եկող նորակազմությունները առավել սակավ են՝ ստրկալույծ լինել, նիզակագերծ անել, պարթևախոս դարձնել:

Մեծ վիպասան Հ. Խաչատրյանի կողմից նոր բառեր կերտելու յուրօրինակ հմտությունը բացատրվում է բառի հանդեպ այն ստեղծագործական հարգանքով, որն իմաստավորված է հեղինակի հետևյալ թևավոր ասությամբ. «Բառի բախտը մարդու ձեռքին է: Դժգոխտ իմաստով օգտագործելու դեպքում բոլոր բառերն արքաներ են դառնում» [8,105]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պ. Սևակ, Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, Երևան, 1974 թ.:

2. Ս. Էդյան, Ժամանակակից հայերենի բառային ճանաչողություն, Երևան, 1989 թ.:

3. Հ. Խաչատրյան, Երվանդ Սակավակյաց, Երևան, 1989 թ.:

4. Հ. Խաչատրյան, Տիգրան Մեծ, Երևան, 1990 թ.:

5. Հ. Խաչատրյան, Արտաշես, Երևան, 1980 թ.:

6. Հ. Խաչատրյան, Արտավազ, Երևան, 1975 թ.:

7. Հ. Խաչատրյան, Խաչիաշ, Երևան, 1987 թ.:

8. Հ. Խաչատրյան, Քերթովահայրը, Երևան, 1985 թ.:

Ш. САГЯН

НОВОВЕДЕНИЯ ИМЕЮЩИЕ ИСТОРИЧЕСКОЕ СОДЕРЖАНИЕ В ИСТОРИЧЕСКИХ РОМАНАХ ГАЙКА ХАЧАТРЯНА

Резюме

Нововедения (новообразования) в исторических романах Г. Хачатряна более 300. Одна часть из них имеет историческое содержание, которые соприкасаются к различным сторонам исторической жизни армянского народа: дворцовой, княжеской, воинской, житейской и т.д. Эти нововедения имеют 2 подвида: историзм-архаизм, текстовый (связочный). Все нововедения с историческим содержанием созданные Г. Хачатряном, являются разнородными, где преобладают структуры, составленные с двумя основными морфемами.

SHUSHAN SAGTYAN

THE INDIVIDUAN NEOLOGISMS WITH HISTORICAL EXPRESSION IN HAİK KHACHATRIANS HISTORIC NOVELS

Summary

There are more than 300 individual neologisms in the historic novels of Haik Khachatrian. Some of them are historically charged and 10 % of them are neologisms stipulated by the verbal context and 90 %-by the contexts interna atmosphere which touches divers aspects of historical life of Armenian people-court, princes, military, everyday life and etc. These individual neologisms are of 3 types: historical-archaisms, textual (connective), mixed ones. All the individual historically charged neologisms employed by H. Khachatrian are heterogeneous ones with the domination of two-morpheme structures.

ՆՈՒՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԵԳԵԼԱՆՔԸ ՀԱՎՈՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հեգեմանքը երգիծանքի դրսևորման կարևորագույն միջոց է: «Հեգեմանք» տեր-մինը առաջացել է հունարեն *eironia* բառից, որը նշանակում է «քողարկված ծաղր»: Հեգեմանքը կիրառվում է առավելապես երգիծական ստեղծագործություննե-րում, ինչպես և այլ գրական ժանրերում:

Հակոբ Պարոնյանի ստեղծագործություններում հեգեմանքը կիրառված է մեծ վարպետությամբ ու նպատակապես: Այն ուղղված է առօրյա կենցաղի մեջ եղած թերությունների, մշակութային, հասարակական-քաղաքական և ազգային այլևայլ արատների դեմ: Առաջին իսկ ստեղծագործություններում երևում է գրողի աշխարհ-ընկալման առանձնահատուկ ակտիվությունը: Գրական ասպարեզ մտնելով քա-ղաքական անբարենպաստ պայմաններում, երբ մոլեգնում էր կեղծիքն ու սուտը, գրողը հավատարիմ մնաց իր անկեղծությանն ու ազնվությանը և հավաստեց ճշմա-րիտ ապրելու և պայքարելու իր դավանանքը:

Հեգեմանքի հիմնական միջոցը ծևի և բովանդակության անհամապատասխա-նության ստեղծումն է, որով առավել ցայտուն են դառնում բնութագրվող առարկան, երևույթը: Առարկաներին, երևույթներին, կերպարներին վերագրվում են այնպիսի հատկանիշներ, որոնցից դրանք զուրկ են: Բնորոշելով առարկան, երևույթը չունե-ցած դրական հատկանիշներով՝ ընդգծվում է դրանց բացակայությունը: Առաջա-նում է ծաղր, որը կարող է լինել և՛ մեղմ, և՛ թունոտ, և՛ արհամարհական: Հակոբ Պարոնյանը Վահան Պարտիզակցուն նկարագրում է հետևյալ կերպ. «1850-ին Պարտիզակ ծնած է Վահան վարդապետ, երեսփոխան, քատերերգակ, առակա-խոս, այցելու և պատվիրակ Բարձր Հայաստանի: Այնչափ բարի զավակ մ' էր, որ իր ծննդեմեն երկու ամիս առաջ հայրը մեռավ, յուր տղուն երեսը չտեսնելու համար. երկու ամիս ետքն ալ մայրը հոգին փչեց՝ յուր զավակին երեսը տեսած ըլլալուն հա-մար»¹: «Պեշիքթաշին այն աստիճան քաջասիրտ է, որ չորս պեշիքթաշցին կարող է մեկ մուկի դեմ կռվելու»²: «Ասկեց ի զատ տնտեսական գիտության այնքան հմուտ է, որ անոթութեն մեռնելու կետն ալ հասնի, դարձյալ իր յոթ ֆուանք ամսականն ստակ մը չվատներ. այո՛, այո՛, պետք է որ իր գովեստը ընեն»³:

Բազում արժանիքներ վերագրելով հերոսին՝ ցույց է տալիս նրա ներքին սնան-կությունը: Նման հակադրությունը հեղինակի համոզարեղ գրչի տակ ստանում է մեծ արտահայտչականություն: Հեղինակի խոսքը հեգեմական բնույթ է ստանում ոչ միայն բառերի, այլև նախադասությունների, ամբողջ պատկերի նկարագրությամբ: «Այս և յուր շինած ուրիշ քանի մը շենքերն այնչափ արհեստով և գիտությամբ կա-

¹ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 149:

² Հ. Պարոնյան, հ. 3, էջ 129:

³ Հ. Պարոնյան, հ. 1, էջ 19:

ուղեված են, որ զանոնք դիտողը կը հիամա և ինքն իրեն կը հարցունե թե՝ արդյոք խորհե՞նք բեռնել տված են այս շենքերը...»⁴։ «Մարտությունն ալմբան կը սիրե, որ ձեռները չաղտոտելու համար ուրիշին մատներովը կը քեր գլուխը, բայց ասնն ատեն ուրիշին ծամծորթյուն չպատճառելու համար՝ յուր թրամատը միայն գործածել սկսած է մերթերս։ Եթե հարկ ըլլա ձեռները լվա՝ ղեղագործներն գտված ցոր ելլուտեն։ Եթե ուղեված մարտությունն մարտը յուր սրտին մեջ ունենար չէր կրնար այս դարուս մեջ ապրիլ, բայց քանի որ ձեռներու մեջ է, վնաս չունի»⁵։

Հեզմանքը դրսևորվում է ինչպես հեղինակային, այնպես էլ հերոսների խոսքում։ «Մեծապատիվ մորացկաններ» փոպկում Աբխողոմ աղան իր հայրենասեր լինելը ցույց տալու համար բնորոշվում է իր ունեցած արտերը, եզները, կովերը. «Շատ լավ, իմ անունն ալ գրեցե՛ք, ես ալ պատվավոր ազգային մ'եմ։ Մեր քաղքին մեջ արտերու, եզերու, կովերու և ազարակներու տեր եմ...»⁶։ Նման բնավորմով, ինչպես և «պատվական» բառով Պարոնյանը հեզմում է հարուստ Աբխողոմ աղայի տգիտությունը, հայրենասիրության նրա ըմբռնման սնանկությունը։ Հեղինակի հեզմանքը հաճախ սուր բնույթ է կրում և վեր է ածվում սարկազմի։ Ինչպես. «Խորեն չուշացալ հայտնել, թե յուր ծնունդովն բանաստեղծ մ'ալ ավելցավ ազգին և ոչ թե փորձանք, ինչպես կը գուշակեին քանի մը հեռատես մարդեր. վասնզի երբ մանկաբարձն անոր ոտներուն վրա դիտողություն կ'ըներ, տասնևվեցոտյան ոտանավորներն միշտ այսպես կը վերջանան, պատասխանեց երեխա բանաստեղծն, որ ազգային քերթող պիտի հորջորջվեր օր մը մեր ազգային համբալ... սափրիչներն»⁷։

Սարկազմի՝ պատկերավոր և դիպուկ օրինակների հանդիպում ենք նաև հերոսների խոսքում, որը երբեմն հանդես է գալիս երկխոսությունների ձևով.

«... Բայց քարոզչությամբ չկրնալով ապրիլ, կսկսի հրաշագործությամբ։ Կաղեր, կույրեր, համբեր, այսահարներ, անդամալույծներ կը բժշկեր։ Ամեն օր հիվանդներ կերթային իրեն։

— Հա՛յր սուրբ, իմացամք, որ դուք ամեն ցավերը կը փարատեք։

— Հեզմունք եղբ, բռնեմանի՛ն։

— Գնա՛յ մը շաբաթն ի վեր գլխու ցավ ունիմ, կ'ուզեմ, որ փարատեք։

— Գլու՛խս, թե ցավդ։

— Գլու՛խս, հայր սուրբ, գլուխս։

— Շատ լավ, ինձի համար երկուքն ալ միևնույն բանն են։ Եկուր խաչահան-գլխա՛տ մը բռնեմ։

Մարդը կը մեկնի և քանի մը ժամեն ետքը անդիի աշխարհքը կ'երթա։ Երկրորդ մը կը ներկայանա.

— Հա՛յր սուրբ, սեմյակին պատուհանը կտրեցալ։

— Պատուհանը ի՞նչ բեր, վրան բժշկության ավետարան մը կարդան։ Երրորդ մը.

— Հա՛յր սուրբ, մագերս կը թափվին։

— Այս ջուրով գլուխդ լվա՛։

Չորրորդ մը կը մտնե.

— Հա՛յր սուրբ, անձրև եկած օրը սեմյակս կվազե, ի՞նչ ընեմ։

— Այս ջուրեն քիչ մը դի՛ր սեմյակիդ վրա»⁸։

Հակոբ Պարոնյանը ծաղրում է իր ժամանակաշրջանի բժշկությունը, սարկաստիկ երանգներով մերկացնում։ Հեզմական մեծ որակ և իմաստային տարողունակ

⁴ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 227։

⁵ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 104։

⁶ Հ. Պարոնյան, հ. 3, էջ 11։

⁷ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 9։

⁸ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 68։

կություն է ստացվում, երբ որոշ մասնագիտություն կամ պաշտոն ունեցող անարժան անձանց հեղինակը օժտում է խիստ փայլուն ու դրական մականուններով՝ դրանով շեշտելով նրանց կոչման ու էության հակասությունը, անհամապատասխանությունը: Այսպես՝ «Պաղտասար առպար» պիեսում հեղինակը դատավորներին անվանում է Սուր, Երկաթ, Փայլակ: Մինչդեռ նրանք չունեն ոչ մտքի սրություն, ոչ կամքի ամրություն, ոչ էլ փայլուն տրամաբանություն: Ընկերությունները կրում են «Օժանդակ», «Համակամ» անունները: «Օժանդակ», որը ոչ թե օժանդակում է ինչ-որ գործի, այլ ընդհակառակը՝ խանգարում, խռչընդոտ է հանդիսանում: «Համակամ» ընկերություններ, որոնք ոչ թե համակամ են եղել, այլ տարամիտ ու անհամերաշխ, որոնց նպատակը եղածը կործանելն է:

Պարոնյանը գործածում է բառեր, որոնք իրենց նպատակային ու դիպուկ կիրառությանը ծիծաղ են շարժում: Կամ բառեր էլ, որոնք տվյալ իմաստը ձեռք են բերում տվյալ համատեքստում, տվյալ բառային շրջապատում:

Օրինակ՝ «Մյուս կողմն Մանգույնն հապճեպով հազվեցավ յուր պատերազմական հագուստները, գզեցավ զրահն՝ ոսկից արևուն ճառագայթները չեն կրնար քափանցիլ, առավ յուր գեներն, որ կը բաղկանային ավանակ, էշ, լիւր, ոճրագործ, անամոք բառերն և հետևյալ ատենաբանություն ըրավ. դողացել ռոտերուս տակ, ով գուպաներս: Այս ատենաբանութենն ետքը վերջին ողջույնը տվավ յուր սենյակին այնպիսի սրտածնիլ խոսքերով, որ լալ սկսան բարձերն ու բազմոցները: Վերջին ողջույնը տալեն ետքը մտրակեց յուր կոշիկները և պատրաստվեցավ յուր ոսոխին դենն ելնելու»⁹: Կամ՝ «Ո՛չ նարտ կը խաղան և ո՛չ թուղթ. գիշերները զբոսանքի կամ մարմնամարզության համար երբեմն իրենց կիները կը ծեծեն»¹⁰:

Հեզմանքը նաև առաջանում է բառերի՝ միտումնավոր կերպով սխալ ռեական կիրառությամբ: Գիտական ոճին բնորոշ բառերը օգտագործվում են խոսակցական առօրյա ոճում կամ՝ ընդհակառակը:

Ինչպես՝ «Գրիգոր Արծրունի, թատրոնապետ, ինդուկտիվ խմբագիր դեդուկտիվ Մշակի...»¹¹: «Սափրիչն ատենական գործողությունները կատարելն ետքը կը սալոնեն յուր նոր հաճախորդն և կը դիմե յուր գեներերուն»¹²: Հերոսների խոսքում. «Ապրանք մ՝ որ հազար անգամ իսկ եթե վաճվի, չփոխեր յուր գաղափարը:

— Սկզբունքի տեր ապրանք մը»¹³:

Հեզմանքն որոշ արտահայտություններ ստեղծվում են մակդիրների միջոցով: Պարոնյանի երգիծանքը ներգործության մեծ ուժ է ստանում շնորհիվ խիստ դիպուկ մակդիրների: Օրինակ՝ «Իբրև երեսփոխան ալ ազգին ծառայած է. երկաթյա ականջ ունենալու է մեկը, որ դիմանա անոր ատենաբանություններուն»¹⁴: «Փողոցի մեջ այնպիսի սիգաճեն քայլվածք մ'ունի, որ մարդս կը վախճա անոր ետևեն երթալու, իրեն սպասավորն չկարծվելու համար»¹⁵:

Նվագափաղաքական նշանակություն արտահայտող բառերի առատ գործածությունը առավել ակնառու է դարձնում իր հեզմական, հաճախ զավեշտի հասնող ծաղրական վերաբերմունքը տվյալ կերպարի նկատմամբ: «Ատամնաբույժն արևելյան» կատակերգության մեջ Թափառնիկոսը արհամարհում ու դավաճանում է իր կնոջը, որի հետ ամուսնացել էր փողի համար: Գիշերային խրախճանքից հետո տուն վերադառնալով՝ կնոջը դիմում է այսպես. «Բարև, անուշիկս» կամ՝ «Ինչո՞ւ համար առանձին նստեր ես, նոռոշիկս»¹⁶:

⁹ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 88:

¹⁰ Հ. Պարոնյան, հ. 3, էջ 210:

¹¹ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 159:

¹² Հ. Պարոնյան, հ. 3, էջ 260:

¹³ Հ. Պարոնյան, հ. 3, էջ 274:

¹⁴ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 204:

¹⁵ Հ. Պարոնյան, հ. 1, էջ 171:

¹⁶ Հ. Պարոնյան, հ. 4, էջ 434:

Գրողի կատակերգությունները հարուստ են այնպիսի բառերով, ինչպես՝ «անուշիկ», «նոնուշիկ», «տոտուշիկ», «աղվորիկ մը», «համբուրիկ մը» և այլն:

Ըստ որում, որքան մեծ է բառերի նրբիմաստների և նրանց կիրառության կեղծության ու գոհկության հակադրությունը, այնքան մեծ է երգիծանքի ներգործության ուժը, այնքան նպատակային է այն: Սա մեծ երգիծաբանի վարպետության միջոցներից է:

Պարոնյան երգիծաբանը տգետ մտավորականներին, անտաղանդ պոետներին ու անարժան պաշտոնյաներին ներկայացնում է չափազանց գովասանքով, վերաբարձ ճճով, որը հաճախ հասնում է ճոռոմաբանության: Այս հնարանքը հանդիպում է և՛ հեղինակի, և՛ հերոսների խոսքում:

«Ինչո՞ւ կը քնանաք, ո՛վ պոետներ, որ երկու հանգ գտնելու համար Պարոնյան կը շրջապատեք...: Ինչո՞ւ կը խորդաք, ո՛վ գրագետներ, որ ձեր հրաշագործ գրիկն երբ մարդու դպցունք՝ կենդանիի կը փոխարկեք զայն և երբ անասունի զարնք՝ մարդու կայլափոխեք: Արթնցե՛ք, ի ծունր իջե՛ք, բացե՛ք ձեր գլուխներն, որպեսզի ամեն մարդ տեսնե անոնց ունայնությունը...»¹⁷:

«Ո՛վ հառաջադիմություն, հայությունդ պոչդ կախած գետնաքարշ ո՞ւր կը տանիս, այդպիսի հապճեպով դեպի ո՞ւր կը դիմես. մի՛, մի՛՝ այնքան շուտ վազեր, վասնզի բեռդ ծանր է, կը հոգնիս և ճամբու վրա կը մնաս, և հայությունդ կռնդի վրա կ'իյնա... պոչ ի ձեռի՞ն»¹⁸:

Հեզմակամ իմաստի դրսևորման միջոց են դառնում նաև հեղինակի կողմից հմտորեն գործածվող հնաբանությունները, գրաբարյան բառերն ու կապակցությունները: Գրողը իր արհամարհական, ծաղրական վերաբերմունքն է արտահայտում ժամանակաշրջանի գրական միջակությունների նկատմամբ, մերկացնում է հանգապաշտների դատարկամտությունը, քննադատում է հայ բանաստեղծության մեջ տեղ գտած ձևամոլությունները: Օրինակ. «Եղբայրն ճախ չուզեր հավատալ. ասանկ գյուտի մը գյուտն անհնար կը քվի իրեն, բայց վերջապես կը համոզվի և եղբորը փաթովելով, Խորեն, կըսե, մեծ ծառայություն ըրիր ազգին այդ գյուտովդ, ազգը պարտավոր է երախտագետ մնալ քեզ համեմայն ավուրս կենաց յուրոց: Արդարև այդ գյուտը մեր ազգին համար ավելի մեծ նշանակություն ունի, քան գյուտն նշխարացը...»¹⁹:

Հակոբ Պարոնյանը մեծապատիվ մուրացկաններից մեկին՝ քահանային, խոսեցնում է գրաբար բառերով և, ստեղծելով կեղծ հանդիսավորություն, ծաղրում է նրան.

— Ողջոյն, Աբիսողոմ աղա:

— Օրհնյա՛, տեր հայր:

— Մեղավորս ձեր բարեպաշտության զալն իմանալով՝ աճապարանք եկա ձեր ջերմեռանդության պատվական որպիսիությունը հարցնելու. ինչպե՞ս եք, Աբիսողոմ աղա:

— Աղել ենք:

— Միշտ աղել ըլլա՞ք, տեր Աստված ձեր մեռելոց արքայություն և կենդանյաց ավուրս երկարս պարգևեսցե:

— Ընորհակալ եմ, դուք ի՞նչպես եք, տեր հայր:

— Մեր աղկությունը մի՛ հարցունեք... ժամանակիս աղկությունը... տեր Աստված զձեզ համեմայն փորձանաց և ի չարե ազատ պահեսցե. ժողովուրդը երբ աղել ըլլա՞ քահանաներուն ալ երեսը կը խնդա...»²⁰:

Բացասական կերպարի խոսքի վերաբարձությունը և ճոռոմությունը, որ բնա-

¹⁷ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 127:

¹⁸ Հ. Պարոնյան, հ. 1, էջ 69:

¹⁹ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 12:

²⁰ Հ. Պարոնյան, հ. 3, էջ 26:

կան խոսքի առումով բնավ պատճառաբանված ու տրամաբանական չէ, վկայում է նրա տգիտությունն ու կեղծությունը:

Պարոնյան երգիծաբանը կախման կետերի, տրոհության նշանների, երբեմն չակերտների օգնությամբ էլ յուրահատուկ հեգնական իմաստ է հաղորդում խոսքին: Օրինակ՝ «Այս թաղին մեջ գինետուն չկա և օղի ծախվիլը արգիված է... ի՞նչ դժբախտություն»²¹:

«Երեսուն աշակերտի համար երկու վարժարան... հառաջադիմության նշան չէ՞՞ այա...»²²:

«Սիրե հայրդ ու մայրդ... եթե հարուստ եմ.

Սիրե թշնամիներդ... երեսանց.

Սուտ մի՛ խոսեր... եթե շահ չունիս»²³:

Հերոսների դիմանկարները կերտելիս Պարոնյանը յուրաքանչյուրին պատկերում է նրա արտաքին և ներքին համարյա բոլոր մանրամասներով:

Հաճախ էլ նրա հզոր գրչի տակ մեկ բառով, մեկ մակդիրով և մեկ համառոտ նախադասությամբ ստեղծվում են խիստ բնութագրական և ամբողջական կերպարներ:

Հակոբ Պարոնյանը լեզվական ուրույն մտածողության և երգիծական մեծ տաղանդի տեր ստեղծագործող է:

Н. ХАЧАТРИАН

ИРОНИЯ В ПРОИЗВЕДЕНИЯХ АКОПА ПАРОНЯНА

Резюме

Представляется ирония, как средство проявления сущности сатиры в произведениях А. Пароняна. Она проявляется приписыванием положительных качеств предметам, явлениям, что не присуще им. Создается несоответствие формы с содержанием, чем и делается ярче описываемый предмет.

NUNE KHACHATRIAN

IRONY IN HACOB PARONIAN'S WORKS

Summary

Heve is introduced the essence of irony as an expressive means of satire.

Irony is characterized according referring the positive characteristics to the things and phenomena which are not characteristic to them.

There creates unconformity between the form and the content according which the described thing becomes more expressive.

²¹ Հ. Պարոնյան, հ. 3, էջ 140:

²² Հ. Պարոնյան, հ. 3, էջ 218:

²³ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 17:

ՎԱՐԱՔԱՂԻ «ՍՈՍ» ՏԵՂԱՆՎԱՆ ՄՏՈՒԳԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վարաքաղյան տեղանունները կամ դրանց բառարմատները գիտական հետազոտման կարիք ունեն։ Հավակնություն չունենալով սույն շարադրանքում մանրամալ դրանցում՝ կանգ առնենք մեկի վրա։

Այսպես, բիայնական արձանագրություններում բազմիցս հիշատակվող *suse* բառը հետազոտողների կողմից տարբեր մեկնաբանությունների է արժանանում։ Ն. Ադոնցն այն «դոմախորշ»¹ է անվանում, իսկ Հ. Կարազյոզյանը՝ «տաճար»²։ Վերջին տեսակետն էլ արմատավորված է ժամանակակից բիայնագիտության մեջ։ Հ. Կարազյոզյանի համար հիմնավոր կռվան է դիտվում 1956 թ. Արիմբերդի պեղումների արդյունքում բացված շինությունը (չափերը՝ 5,5x8,8 մ²), որի մուտքի կողմաներին գտնվող զույգ արձանագրություններում հիշատակվում է *suse* շինությունը։

Հարկ է նշել, որ այս արձանագրություններում *suse* բառից առաջ գտնվող գաղափարագիր ՏՈՒՆ-ը բացահայտիչ է ընկալվում, որի հետևանքով էլ *suse*-ն «տաճար» է ընթերցվում, իսկ Իվարշա դիցանվանը հաջորդող *i-ni* սեպախումբը ընկալվում է որպես առանձին բառ՝ բիայներեն *i-ni* «այս» ցուցական դերանուն։ Այստեղից էլ եզրակացվում է, որ հենց այս շինությունն է *suse*-ն։

Մեր կարծիքով, արձանագրության առաջին տողը, որը վերծանված և թարգմանված է հետևյալ.

D I-u-ar-sa-a i-ni E su-u-si-e

(Աստված) Իվարշային այս տաճարը... տարբերակով՝ կարելի է կարդալ այլ.

D I-u-ar-sa-a-i-ni E su-si-e

(Աստված) Իվարշայան ՏԱՆ (տաճարի) *suse*... ձևով։

Մատնանշվող արձանագրության մեջ ներկայացված Իվարշա աստծուն, որը հայտնի չէ բիայնական պանթեոնում, մասնավորապես այս դիցանունը չկա «Միների դռան» ցուցակում, կարծում ենք պետք է դասել «ուրիշ լեզուների» աստվածների շարքին։

Հայտնի է, որ Արիմբերդ-Էրեբունիում բիայնական գերագույն աստծո տաճարը տեղադրված է պալատական շենքից դուրս, և ըստ այդմ էլ պալատական շենքի վերևում մատնանշվող շինության «տաճար» լինելը կնստեացներ Խալդիի հեզեմոն նշանակությունը։ Այսինքն, եթե այդ շինությունը իրականում լիներ *suse*-ն, ապա կստացվի, որ Արգիշտի արքան, ապա նաև բերդ-քաղաքի վարչակազմը պաշտամունքում առաջնակարգ նշանակությունը տվել են ոչ թե Խալդիին, այսպիսով նրա

¹ Տես Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 226։

² Տես Զ. Կարազոզյան, Սեպագիր տեղանուններ, Երևան, 1998, էջ 117։

տաճարը կառուցելով պալատական շենքից դուրս, այլ օտար Իվարչա աստծուն՝ տվյալ դեպքում սրա տաճարը կառուցելով պալատական շենքի ներսում:

Բացի դրանից Անձավի³, Վանի⁴ արձանագրություններում նշվում են, որ suse-ն Խալդիին է (ձոնված), իսկ Կոխպանցի⁵, Աշրուտ-Դարգայի⁶ արձանագրություններում suse-ն կրոնական երանգավորում չունի: Դեռ ավելին, Աշրուտ-Դարգայի արձանագրության մեջ հստակորեն երևում է, որ ի տարբերություն սահմանված կանոնադրության մյուս անդամների՝ suse-ի համար զոհաբերություն չի պահանջվում, ինչպես «Մեերի դռան»⁷ կանոնադրության մեջ: Այստեղից հետևում է, որ suse-ն կրոնական լինելուց բացի, կարող է լինել նաև աշխարհիկ կառույց: Դրանով իսկ պարզվում է suse-ի երկակի էությունը:

Ի լրումն ասվածի նկատենք, որ «Մեերի դռան» կանոնադրության մեջ բազմաթիվ աստվածներ ունեն Խալդյան suse-ները: Սա կարևոր հանգամանք է: Եթե suse-ն լիներ «տաճար», ապա դրանից կբխի, որ կանոնադրությամբ զոհեր են սահմանվում Խալդյան տաճարների աստվածներին, որը և անընդունելի է:

Երևույթի պարզաբանման համար տեղին է հիշատակել նաև «Մեերի դռան» կանոնադրության մյուս բազմաստված օբյեկտները: Դրանք են.

ա) Որոշ քաղաքներ:

բ) Խալդյան (Խալդիի անունով կառուցած) քաղաքները:

գ) Ուրիշ լեզուները⁸, որոնք ըստ Ադոնցի նվաճված և պետությանը միացված երկրներն են⁹:

Սակայն, մեզ թվում է, որ բիայներենի կրողների համար «ուրիշ (բայց ոչ բշնամի*) լեզուներ» կարող էին համարվել Բիայնիլիում բնակվող (տեղաբնիկ և գաղթեցված), բայց ոչ բիայնալեզու ցեղերն ու ժողովուրդները, որոնց համար որպես իրավական կարգավիճակի ցուցիչ կարող է հանդիսանալ նրանց աստվածներին սահմանվող զոհաբանակի չափը՝ 4 եգ և 18 ոչխար: Նկատենք, որ կանոնադրության համաձայն Խալդին ստանում է 17 եգ և 34 ոչխար, Թեյշեբան՝ 6 եգ և 12 ոչխար, Արդիին՝ 4 եգ և 8 ոչխար¹⁰:

դ) Խալդյան bedisani¹¹ («գավառի» (?))** ուրիշ լեզուները: Նշված օրինակներից պարզ է դառնում, որ բազմաստված կարող են լինել միայն վարչատարածքային և հասարակական (հանրային) միավորները, որտեղից և եզրակացնում ենք, որ հենց հասարակական գործոնի՝ բնակչության առկայությունն է ենթադրում բազմաթիվ աստվածներ ունենալու պայմանը: Այսինքն, suse-ն բնակչություն ունեցող կառույց է՝ բնակավայրի որևէ տեսակ՝ «ավան» կամ «գյուղ» իմաստով: Ավելացնենք նաև այն, որ մի շարք արձանագրություններում օգտագործվում են «հողը ամայի էր, ոչինչ չկար այնտեղ կառուցած» արտահայտությունը: Սա ասվում է այն դեպքում, երբ կառուցվում է քաղաք կամ ամրոց: Արիմբերդի փոքրածավալ շինության (5,5x8,8 մ)¹² արձանագրությունները ևս պարունակում է այս միտքը: Կարծում ենք, որ այդպիսի մի շինվածքի համար հարկ չկա ասելու, որ «հողը ամայի էր», ի տարբերություն լայնածավալ կառույցների, ինչպիսիք են քաղաքը, ամրոցը և այլն:

Մատնանշվող բիայնական suse-ն պահպանվել է Սոս գյուղանված մեջ: Այստեղ բառամիջի «ս»-ի դիմաց «օ»-ի առկայությունը բացատրվում է.

³ Տես Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 64—65:

⁴ Նույն տեղում, էջ 150:

⁵ Նույն տեղում, էջ 161:

⁶ Նույն տեղում, էջ 151:

⁷ Նույն տեղում, էջ 153:

⁸ Նույն տեղում, էջ 153—154:

⁹ Նույն տեղում, էջ 227:

* Ոչ խնս «բշնամի»:

¹⁰ Տես Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 152:

¹¹ Նույն տեղում, էջ 154, 226:

** Մեր թարգմանությունն է:

ա) Ու-Օ բառառային հնչյունափոխությամբ
բ) սեպագրային «օ» հնչյունի բացակայությամբ, որը և փոխարինված է «ս»-ով:

Ինչ վերաբերում է suse-ի բառավերջի e/i նշանին, ապա ընդունված է, որ այն դրվում է կիսաձայն «ծ»-ի փոխարեն, որը քիայնորենում քերևս չի հնչել¹²:

Л. ПЕТРОСЯН

ЭТИМОЛОГИЯ КАРАБАХСКОГО ТОПОНИМА «СОС»

Резюме

В статье определяется сущность бианийского строения "suse". Учитывая обстоятельство посвященности "suse" многим божествам, обширность территории, а также в некоторых случаях его нерелигиозное значение, выводится, что "suse" - поселение.

L. PETROSIAN

THE ETYMOLOGY OF KARABAKH TOPONYM «SOS»

Summary

The article reveals the essence of Biainian «SUSE». Taking into consideration the facts of SUSE's having a pantheon of deities, its spatial extension as well as non-religious nature, it can be concluded that SUSE is a settlement.

¹² Տե՛ս Զ. Կարազեղեան, Սեպագիր տեղանուններ, Երևան, 1998, էջ 46:

Ո. Զ. ԱՐԱՔԵԿՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՓՈՐՁՈՒՄՈՒՑՈՒՄԸ ԱՊԱԳԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Մանկավարժական կրթությունը ԲՈՒՀ-ում անհրաժեշտաբար ենթադրում է տեսության և պրակտիկայի կապի մեթոդաբանական սկզբունքի իրագործում ապագա ուսուցչի լինելիության բոլոր փուլերում՝ մինչքուհական, քուհական, ետքուհական: Այդ սկզբունքը ներառում է մանկավարժական փորձուսուցումը որպես ապագա ուսուցչի-դաստիարակի պատրաստման կարևորագույն բաղադրիչ:

Մանկավարժական փորձուսուցման զանազան կողմերի և առանձնահատկությունների հետազոտությամբ զբաղվել են բազմաթիվ մանկավարժներ, մեթոդիստներ, կատարվել են մի շարք հետազոտություններ նվիրված մանկավարժական փորձուսուցման կազմակերպման զանազան հիմնախնդիրներին՝ կապված ապագա ուսուցչի պրոֆեսիոնալ լինելիության, կազմակերպման բովանդակության ձևերի և մեթոդների տեսական հիմնավորմանը, որպես ուսուցչի պրոֆեսիայի նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու միջոց, ուսուցչի-դաստիարակի անձի ձևավորման գործում: Սակայն այդ բոլորը գերազանցապես վերաբերվում են մանկավարժական ինստիտուտների փորձուսուցման գծով տարվող աշխատանքների քննադատմանը: Հրապարակյալ վրա չկա հատուկ հետազոտություն, որը նվիրված լինի մանկավարժական փորձուսուցման կազմակերպման հիմնահարցին համալսարանական կրթության պայմաններում:

Մինչդեռ համալսարանի ուսանողների մանկավարժական փորձուսուցումն ինքնուրույն հետազոտության հիմնահարց է, քանի որ այն ունի իր յուրահատկությունը, առանձնահատկությունները՝ կապված նրան հատկացվող սուղ ժամկետների հետ մանկավարժական ինստիտուտի համեմատությամբ:

Մենք կփորձենք բացահայտել համալսարանի ուսանողների մանկավարժական փորձուսուցման նախապատրաստման, վարման, նրա արդյունքների քննարկման ու գնահատման ուժեղ և թույլ կողմերը և գտնել մանկավարժական փորձուսուցման արդյունավետությունը բարձրացնելու հնարավոր ուղիները և միջոցները:

Այդ հիմնահարցի հետազոտության ընթացքում մենք օգտագործել ենք հետևյալ մեթոդները՝ հոգեբանական, մանկավարժական, ուսումնա-մեթոդական գրականության վերլուծություն, մանկավարժական փորձուսուցման կազմակերպման և անցկացման առաջավոր փորձի ուսումնասիրություն և ընդհանրացում (յուզ-պես գրավոր աղբյուրների, այնպես էլ բուն փորձուսուցման), ուսանողների մանկավարժական գործունեության նախապատրաստում, երկարատև և նպատակատուղված դիտումներ բուն փորձուսուցման ընթացքում, զրույցներ և հարցումներ (անկետավորում, ինտերվյու), բուհական փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն, ուսանողների փորձուսուցման հաշվետվություններ, դասերի և դաստիարակչական միջոցառումների մշակումների, օրագրերի և այլնի համեմատական վերլուծություն, հոգեբանա-մանկավարժական առաջադրանքների կազմում և

դրանց արդյունքների վերլուծություն, փորձնական-փորձառական աշխատանք: Նշված մեթոդների օպտիմալ կիրառմանը նպաստել է մեզ՝ որպես համալսարանական փորձուսուցման տեսչի, ուսումնա-մեթոդական գործունեությունը:

Նախ, հարկ է նշել, որ պրակտիկանտ-ուսանողների մոտ բավականին սահմանափակ է մանկավարժական գործունեության բազմազան տեսակների կիրառման դիսպազիցիոն՝ ուսուցչի համեմատությամբ: Այն ավելի սահմանափակ է համալսարանի ուսանողների մոտ՝ կարճատև փորձուսուցման հաշվին: Դա առանձնապես նկատելի է աշակերտների և ծնողների հետ տարվող դաստիարակչական աշխատանքում: Իր առարկայի գծով 10-15 դասերի ընթացքում ուսանողը հնարավորություն ունի ստուգելու ուսուցչի գործունեության որոշ տեսակներ և ունի իր թույլ տված սխալները վերլուծելու և հաղթահարելու ժամանակ: Միանգամայն այլ է նրա, որպես դասղեկի, աշխատանքի պատկերը: Հնարավոր չէ շատ բան անել երկու դասընթացային ժամի ընթացքում, իսկ մանկավարժական աշխատանքի որոշ դժվարի տեսակներ, ինչպես աշխատանքը ծնողների, հասարակության, «դժվար» երեխաների հետ, փորձուսուցումից հետո էլ մնում է որպես տեսական գիտելիքների մակարդակի (լավագույն դեպքում) վերացական բնագավառ:

Նման անհամաչափությունը նկատվում է նաև ապագա ուսուցչի պատրաստման բնագավառում: Ժամանակակից մանկավարժական գրականության և մանկավարժական փորձուսուցման վերլուծությունը ցույց է տալիս, որ դիպակոտիկային և մասնագիտական առարկայի ուսուցմանը բաժին է ընկնում ժամանակի 80 %-ը, դաստիարակության հարցերին՝ 10 %, դպրոցավարությանը՝ 8 % և այլն: Եվ դա այն դեպքում, երբ դաստիարակության գործը դժվար է ուսուցման գործի համեմատությամբ:

Դա իր անմիջական արտացոլումն է գտնում ուսանողների մանկավարժական գործունեության տեսական պատրաստման գործընթացում: Ուսուցչի և դասղեկի աշխատանքը այդ գործընթացում ներկայացվում են ոչ հավասարաբաժին ձևով: Բայց այս հանգամանքը բնավ էլ չի խոսում այն մասին, որ վիճակը բարվոք է պրակտիկանտ-ուսանողի ուսումնական աշխատանքում: Այդ առումով կարևորվում է փորձուսուցման ընթացքում ուսանողների դժվարացումների, թույլ տված տիպիկ սխալների բացահայտմանը և բնութագրմանը:

Մանկավարժական փորձուսուցմանն ուսանողների պատրաստվածության աստիճանը պարզելու և այն կատարելագործելու հիմնական ուղիները հայտնաբերելու նպատակով մենք օգտագործել ենք մեր որպես համալսարանական փորձուսուցման տեսուչի սխտեմատիկ դիտումների արդյունքները Ստեփանակերտ քաղաքի մի շարք միջնակարգ դպրոցներում: Դիտումները կատարել ենք մաս տարբեր ֆակուլտետների ուսանողների 6 տարբեր դպրոցներում վարած դասերի (թվով՝ 135) և կազմակերպած դաստիարակչական միջոցառումների (թվով՝ 58) գործընթացի վրա:

Այսպիսով, ապագա ուսուցչի մանկավարժական գործունեության գնահատման նկատմամբ ամբողջական, կոմպլեքսային (համալիր) մոտեցումները, ընդհանուր մանկավարժական, դիպակոտիկական մեթոդական և հոգեբանական պարամետրերի համակարգը դարձնում են հուսալի հիմք պրակտիկանտ-ուսանողների մանկավարժական աշխատանքի (փորձուսուցման ընթացքում) գնահատման, նրանց հաջողությունների, դժվարացումների ու թերությունների բացահայտման և դրանց հաղթահարման ուղիների ու միջոցների հայտնաբերման համար:

Ինչպես մանկավարժական համախառն գրականության ուսումնասիրությունը, այնպես էլ պրակտիկանտ-ուսանողների, մեթոդիստ-դեկավարների, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոսների, դպրոցների ուսուցիչների պատասխանների վերլուծությունը հնարավորություն տվեցին մեզ պարզելու, թե ինչու են դժվարանում ուսանողները փորձուսուցման ընթացքում, որոնք են նրանց աշխատանքում նկատվող տիպական թերությունները: Ուսանողները սովորաբար

դժվարանում են.

1. Դասի ընթացքում ուշադրության բաշխման մեջ:
 2. Պակասում է ստեղծագործական մոտեցումը մանկավարժական խնդիրների որոշման, առաջադրման և լուծման նկատմամբ:
 3. Չեն կարողանում գտնել վերաբերմունքի ճիշտ տոն աշակերտների հետ ունեցած հարաբերություններում:
 4. Հակիրճ ունակության պակաս: Շատ խոսելու և ասելու ցանկություն, առանց հաշվի առնելու, թե որքանով է այն դառնում սովորողների իմաստավորման առարկա:
 5. Փոփոխվող պայմաններին համապատասխան վերափոխվելու և կարողության պակաս:
 6. Անբավարար ուշադրություն աշակերտների ինքնուրույն աշխատանքի կազմակերպմանը՝ նոր մյուսի շարադրման ժամանակ:
 7. Աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունների զարգացման մակարդակի ճանաչման և հաշվառման կարողության պակասը:
 8. Խոսքի արտահայտչական, գեղեցիկ խոսելու ընդունակության պակասը (հատկապես բնագիտական ֆակուլտետի ուսանող-պրակտիկանտների մոտ):
 9. Աշակերտական կոլեկտիվի վրա անբավարար հենվելը և նրա ուժը, հնարավորությունները չօգտագործելը:
 10. Անբավարար ուշադրություն սովորողների տնային առաջադրանքների հանձնարարմանը և տնային աշխատանքների կատարման հրահանգավորմանը:
 11. Լավ չգիտեն իրենց թույլ և ուժեղ կողմերը:
 12. Չեն կարողանում կանխատեսել այն դժվարությունները, որոնց կարող են հանդիպել աշակերտները:
 13. Դժվարանում են դասաժամի (45 րոպեի) ռացիոնալ օգտագործման մեջ:
 14. Դժվարանում են իրենց դասի ինքնավերլուծության մեջ:
 15. Չեն տիրապետում մանկավարժական ներգործության հարուստ զինանոցին:
 16. Չեն կարողանում պատճառաբանել նշանակալից գնահատականը և ստեղծել հասարակական կարծիք:
 17. Չեն կարողանում մոդելավորել աշակերտների ուսումնական գործունեությունը:
 18. Չեն կարողանում ապահովել դասի կրթական, դաստիարակչական և զարգացողական խնդիրների միասնությունը և այլն:
- Մանկավարժական փորձուսուցման ընթացքում պրակտիկանտ-ուսանողների կողմից վերը նշված դժվարացումների, թույլ տված սխալների, թերությունների համակողմանի վերլուծությունը մեզ թույլ է տալիս բացահայտել մանկավարժական փորձուսուցման օպտիմալացման ուղիներն ու միջոցները համապատասխանակալ կրթության պայմաններում: Մեր կարծիքով, այդ նպատակով կատարելիք առաջին քայլը մանկավարժական փորձուսուցման կազմակերպման և վարման գիտական հիմնավորումն է: Դա հնարավոր է այն դեպքում, եթե որոշվի այն տեղն ու դերը, որ մանկավարժական փորձուսուցումը գրավում է ապագա մանկավարժի պատրաստման բարդ համակարգում, հաշվի առնելով, որ մանկավարժական փորձուսուցման ընթացքում ամրակայվում են ուսանողի ձեռք բերած գիտելիքները, կարողությունները, մանկավարժական համոզմունքները: Այն հնարավորություն է տալիս ուսանողին իմաստավորելու իր գիտելիքները, ճանաչելու դրանց բովանդակությունը և ծավալը, կայունությունն ու գործունեությունը, առաջանում է պակասող թերի գիտելիքները լրացնելու անհրաժեշտություն, ինքնակրթությամբ զբաղվելու պահանջումը: Ստեղծվում են իրական հնարավորություններ մասնագիտական, հոգեբանա-մանկավարժական առարկաներից և մասնավոր մեթոդիկայից ստացած ինֆորմացիան օգտագործելու փորձուսուցման ընթացքում առաջացող ուսումնադաս-

տիարակչական բնույթի այլազան խնդիրները պրոֆեսիոնալ մակարդակով լուծելու համար: Մանկավարժական փորձուսուցումն անփոխարինելի միջոց է ուսանողի համար: Նա հնարավորություն է ստանում ավելի մոտիկից ծանոթանալու մանկավարժական գիտահետազոտական մեթոդներին, իմաստավորելու և կիրառելու դրանք, աստիճանաբար ընտելանալու ստեղծագործական բնույթի աշխատանքներին, որոնք ներհատուկ են ուսուցիչ-դաստիարակի գործունեությանը: Այդ բոլորի հիման վրա զարգանում է ապագա ուսուցչի մանկավարժական դիտունակությունը, դրվում են գործունեության անհատական ոճի հիմքերը: Մանկավարժորեն ճիշտ կազմակերպված և վարվող ուսուցչի գիտական աշխարհայացքի, համգտնունքների, ակտիվ կենսախնդիրքի ձևավորմանը, նրա մեջ մանկավարժին բնորոշող որակների՝ պրոֆեսիոնալ պարտքի և գիտակցության արդարացիության, մանկավարժի խղճի, մանկավարժական լավատեսության, տակալի, անկեղծության, վստահության, աշակերտների նկատմամբ հոգատար և զգալու վերաբերմունքի, հաղորդակցման կուլտուրայի և այլնի դաստիարակությունը:

Մանկավարժական փորձուսուցման գիտական հիմնավորման մյուս կարևոր պայմանը, մեր կարծիքով, այն տիպական թերությունների և դժվարությունների բացահայտումն է, որոնք բնորոշ են մանկավարժական կադրեր պատրաստող ԲՈՒՀ-երի և առանձնապես համալսարանի պրակտիկանտ-ուսանողների աշխատանքին: Մեր կարծիքով, նշված և չնշված թերությունների հաղթահարման ուղիներինց մենք անընդունելի մանկավարժական փորձուսուցման արմատավորումն է համալսարանում՝ ուսանողի ուսումնառության բոլոր տարիների (1-ին կուրսից ընդհուպ 5-րդ կուրս) ընդգրկմամբ:

Նման մոտեցումը պայմանավորված է մանկավարժական աշխատանքի բնույթով: Սակայն ապագա ուսուցիչ-դաստիարակի պատրաստման փորձուսուցումը դեռևս չի հասել այդ մակարդակին, ինչն առանձնապես նկատելի է համալսարանում մանկավարժական փորձուսուցման կազմակերպման գործում, որտեղ շեշտը դրվում է ուսանողին տեսական պատրաստություն տալու հիմնախնդիրների վրա: Այդ տեսակետի կողմնակիցները թերագնահատում են մանկավարժական փորձուսուցման հնարավորությունները, որը համապատասխան նախապատրաստման և կառավարման դեպքում նպաստում է թե հիմնավորվածությանը, և թե գործունեությանը: Մեր կարծիքով, ճիշտ չէ ուսուցչի պատրաստման գործընթացում գործնական կամ տեսական պատրաստմանը նախապատվություն տալը: Ապագա մանկավարժի ձևավորման գործում գործնական և տեսական պատրաստությունը պետք է իրագործվի օրգանական միասնության մեջ, որը, իհարկե, չի բացառում մեկի կամ մյուսի տիրապետող լինելը ուսանողի ԲՈՒՀ-ական ուսումնառության տարբեր շրջաններում: Խոսքը վերաբերվում է տեսության և պրակտիկայի օրգանական դիալեկտիկական միասնությանը ապագա ուսուցչի - դաստիարակի պատրաստման ամբողջական համակարգում: Ուստի անընդմեջ մանկավարժական փորձուսուցման գաղափարը լավագույնս համապատասխանում է ապագա ուսուցչի պրոֆեսիոնալ դաստիարակության, նրա անձի լինելության, նման մոտեցման պահանջի կատարմանը:

Համալսարանի շատ դասախոսներ ճիշտ չեն համարում անընդմեջ մանկավարժական փորձուսուցման վարումը ուսանողի ուսումնառության բոլոր տարիներին: Նրանք գտնում են, որ քանի ուսանողը չի լսել տեսական դասընթացներ դպրոցի ուսումնա-դաստիարակչական գործընթացների վերաբերյալ, քանի դեռ չի ապահովվել նրա գիտատեսական պատրաստությունը, ապա նպատակահարմար չէ, անզան վճռասկար է ուսանողին դպրոց ուղարկելը: Նա պատրաստ չէ դրան:

Մեր ընդդիմախոսները մոռանում են, որ մանկավարժության, հոգեբանության, մեթոդիկաների, մասնագիտական և հասարակագիտական առարկաների տեսական դասընթացները անհրաժեշտաբար զգում են զննական նյութի, դպրոցական կյանքի «կենդանի հայեցողության» կարիքը, քանի որ փորձուսուցումն ուղեկցում է

ինացության պրոցեսին սկզբից մինչև վերջ, որ փորձուսուցումը «կյանք է տալիս տեսությանը»։ Եթե ուսանողը՝ ապագա մանկավարժը առաջին կուրսից հաղորդակից է լինում դպրոցական մանկավարժական փորձուսուցմանն, ինչպես և ապագա բժիշկը, ապա դա չի նշանակում, թե նրանից պահանջվում է դաս վարել, կատարել դասողեկական աշխատանք, կազմակերպել միջոցառումներ ծնողների հետ, մա-կանատես է լինում այդ բոլորին, ինչպես բժշկական բաժնի ցածր կուրսեցի ուսանողի ձեռքը չի տրվում վիրահատական գործիքը, նրանից չի պահանջվում ախտորոշել հիվանդին, վիրահատել նրան։ Թե առաջինը, թե երկրորդը դիտում են, իմաստավորում են դիտածը, պատկերացում են կազմում դպրոցում կամ կլինիկայում տար-վող աշխատանքի, կատարվող գործողությունների մասին։ Ուսանողը ստանալով կենդանի տպավորություններ մանկավարժական ամբողջական գործընթացի վե-րաբերյալ, ակնատես լինելով ուսումնա-դաստիարակչական խնդիրների լուծման գործընթացին, այլ, առավել ակտիվ վերաբերմունք է ցուցաբերում կարդացվող տե-սական դասընթացների նկատմամբ։ Նա զգում է թևավոր ասույթ դարձած ճշմար-տությունը, որ «ավելի լավ է մեկ անգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել» մի կող-մից, և համոզվում է նրանում, որ ոչինչ այնքան գործնական չէ, որքան «լավ տեսու-թյունը»՝ մյուս կողմից։

Փորձուսուցման կազմակերպման և ղեկավարման տարիների մեր հետազո-տության արդյունքների վերլուծությունը և ընդհանրացումը թույլ է տալիս անել որոշակի հետևություններ։ Ամենից առաջ հարկ է նշել, որ մանկավարժական փորձու-սուցումն (իր տարատեսակներով համդերձ), որպես պրոֆեսիոնալ-մանկավարժա-կան հետաքրքրության ձևավորման միջոց, օժտված է մեծ հնարավորություններով՝ «ուսուցիչ-աշակերտ», «ուսուցիչ-ծնողներ», «ուսուցիչ-ուսուցիչ» հարաբերություն-ներից պրակտիկանտ-ուսանողներին անմիջականորեն մասնակից դարձնելու ա-ռումով։

Հարկ է նկատի ունենալ, որ մանկավարժական փորձուսուցումը դպրոցում հնարավորություն է տալիս ուսանողին խորապես ուսումնասիրել ուսուցիչ-դաս-տիարակի աշխատանքի համակարգը, ճանաչել կենդանի, բարդ, բազմակողմ ու-սումնադաստիարակչական գործընթացի դիալեկտիկական էությունը, որի հաջո-ղությունը կախված է ոչ միայն առանձին ուսուցչի վարպետությունից, այլև ուսու-ցիչ-դաստիարակների ողջ կոլեկտիվի աշխատանքի հստակությունից, բարձր կուլ-տուրայից։

Անընդմեջ մանկավարժական փորձուսուցման իրագործումը համալսարանա-կան կրթության պայմաններում, մանկավարժական ինստիտուտի համեմատու-թյամբ, կապված է որոշակի դժվարությունների հետ, որոնք պայմանավորված են այն թերություններով, որոնք ներհատուկ են ապագա մանկավարժի պրոֆեսիոնալ պատրաստման ընդհանուր համակարգին համալսարանում։

Անընդմեջ մանկավարժական փորձուսուցումը գիտակցորեն հիմնավորված համակարգի ստեղծումը և նրա իրագործումը կապված է ոչ միայն տեսական, այլև այնպիսի գործնական հիմնախնդիրների լուծման հետ, որոնք առնչվում են համալ-սարանի գրեթե բոլոր օղակների գործունեության հետ։ Պատահական չէ, որ ման-կավարժական փորձուսուցման կազմակերպման կարևոր սկզբունքներից մեկը հա-մալիր մոտեցման պահանջն է։ Մեր կարծիքով, այդ սկզբունքի լիարժեք իրագոր-ծումը հնարավոր կլինի այն դեպքում, եթե ուսանողի մանկավարժական փորձուսու-ցումը դառնա, ինչպս ասացինք, համալսարանի բոլոր օղակների մշտական ուշադ-րության առարկան և մշակվի միասնական մոտեցում փորձուսուցման կառավար-ման և նրա արդյունքների գնահատման նկատմամբ։ Այդ առումով ճշգրտման և համալրման կարիք է զգում մանկավարժական փորձուսուցման գործող, համալսա-րանի տիպային կանոնակարգը։ Դիշտ է, կանոնակարգում պարզորոշ ընդգրկված են փորձուսուցման կազմակերպական-մանկավարժական տեսանկյունները, սա-կայն նրանում անհրաժեշտ լուսաբանում չեն ստացել այն հիմնախնդիրները, ո-

րակչական աշխատանքի հետ: Պրակտիկանտի դաստիարակչական աշխատանքը մղվում է երկրորդ պլան և այն հիմնականում հանգում է դաստիարակչական առանձին միջոցառումներ կազմակերպելուն:

Դաստիարակչական աշխատանքի բովանդակությունն ըստ կուրսերի անհրաժեշտ չափով չի շերտավորված: Ուսանող-պրակտիկանտի աշխատանքը հիմնականում գնահատվում է (մեթոդիստ-ղեկավարի կողմից) նրա վարած մասնագիտական դասերի տեսանկյունով և անբավարար է հաշվի առնվում նրա կատարած դաստիարակչական աշխատանքը: Մշակված փորձուսուցման կանոնակարգից դուրս են մղված այն դիդակտիկական կարողությունները, որոնցով պետք է օժտված լինի ուսանող-պրակտիկանտը, հստակորեն չեն նշվում նրա անհրաժեշտ դաստիարակչական կարողությունները և հմտությունը: Ուսանողը չի ստանում անհրաժեշտ մեթոդական օգնություն փորձուսուցման գնալու մախօրյակին: Այդ թերությունները հաղթահարելու համար կառաջարկելի համալսարանի մասնագիտական ամբիոններին և առաջին հերթին մանկավարժության և հոգեբանության ամբիոնին համապատասխան օղակների հետ միասին համալսարանի ուսանողների համար փորձուսուցման մախօրյակին կազմակերպել երկօրյա մեթոդական սեմինարներ, որոնք կօգնեն ուսանողին դրսևորելու կամային ջանքեր՝ փորձուսուցման ընթացքում առաջադիր նպատակին հասնելու ճանապարհին հանդիպող պրոֆեսիոնալ-մանկավարժական դժվարությունները հաղթահարելու համար:

Резюме

Как известно, педагогическое образование в вузе обязательно предполагает реализацию принципа связи теории с практикой на всех этапах подготовки будущих учителей. Этот принцип вбирает в себя педагогическую практику как составную часть профессиональной подготовки учителя-воспитателя. Поэтому поиски возможных путей и средств повышения эффективности педагогической практики в системе вузовского образования в современных условиях приобретают особо важное значение.

В связи с этим объектом нашего рассмотрения мы избрали вопросы, связанные с педагогической практикой в условиях исключительно университетского образования. Выбор темы объясняется отсутствием специальных исследований в этой области, а также тем, что педагогическая практика в системе университетского образования имеет свою специфику.

В ходе исследования нам удалось выяснить некоторые пути и средства, направленные на оптимизацию педагогической практики в условиях университетского образования. В этом неоценимую услугу оказал нам тщательный анализ всех тех ошибок, упущений и недостатков, которые имеют место в деятельности студента-практиканта.

Summary

As is generally, teacher training in institutions of further education without fail proposes realizing of the principle of connection between theory and practice at all stages of training of intending teachers. This principle implies teaching practice to be a component of professional training of a teacher-educator. Therefore the quests for possible ways and means to improve the effectiveness of teaching practice in the system of higher education under modern conditions acquire special importance.

In this connection, for the object of our consideration we have chosen the questions, related to teaching practice exclusively under university training. The choice of the theme can be accounted for lack of special investigations in this field, and also for special character of teaching practice in university system.

Carrying on investigations we succeeded to ascertain some ways and means directed to optimization of teaching practice under university training. Careful analysis of all made mistakes, omissions and shortcomings which occur in a trainees activity rendered us an invaluable service.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱրդՀ-ն 1999-2000 թվականներին	3
------------------------------------	---

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Ս. Մ. Մարյանյան - Փոքր պարամետրից կախված վեցերորդ կարգի հիպերբոլական տիպի հավասարման խառը խնդրի լուծման ասիմպտոտիկան	5
Ս. Կ. Պետրոսյան (ԱրդՀ) - Երկրորդ կարգի գծային դիֆերենցիալ հավասարումների մի դասի համար ձևափոխության օպերատորի գոյության մասին	13

ՖԻԶԻԿԱ

Գ. Ս. Հարությունյան - Նոսրմալ հեպտիլ սպիրտի իզոբար ջերմունակությունը և ջերմահաղորդականությունը	18
Ս. Գ. Ալեքսանյան - Ալիքային ֆունկցիայի թունելացումը կոլապսի առկայության պայմաններում	22

ՔԻՄԻԱ

Ռ. Խ. Աղամյան, Ս. Գ. Հարությունյան, Ս. Կ. Գրիգորյան, Գ. Գ. Բաբայան, Ս. Զ. Սաղյան - Na_3AlF_6 - KCaF_3 համակարգի հալույթային դիագրաման	26
Ռ. Խ. Աղամյան, Ս. Գ. Հարությունյան, Ս. Կ. Գրիգորյան, Հ. Գ. Բաբայան, Վ. Ս. Միրզոյան - Na_3AlF_6 - KMgF_3 համակարգում նոր պինդ ֆազերի ուսումնասիրությունը	30
Վ. Ս. Միրզոյան - 1-արիլսուլֆոնիլ, 1-բենզիլ - 5-ֆտոր ուրացիլների մաս-սպեկտրները	34

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ս. Ա. Աղասյան - ԼՀՀ ազգաբնակչության արյան խումբը և ռեզուս-գործոնը	39
Ս. Ա. Աղասյան, Ա. Բ. Աղասյան - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 6-20 տարեկան տղաների և աղջիկների ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշները մինչև արցախյան պատերազմը, պատերազմի ժամանակ և դրանից հետո	44
Ա. Հ. Թորոսյան, Գ. Ա. Հակոբյան, Ա. Բ. Աղասյան, Ս. Ա. Աղասյան - Լեռնային Ղարաբաղի բնակչության տարբեր գոտիներում կոլորադյան բզեզի (<i>Leptinotarsa decemlineata</i>) կենսաբանական զարգացման մի քանի առանձնահատկությունները	50
Ս. Ա. Աղասյան, Ա. Բ. Աղասյան, Գ. Վ. Աբրահամյան - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նորածին երեխաների ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունները արտակարգ ժամանակաշրջանում	56

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Յու. Ա. Առաքելյան, Գ. Հ. Բեգլարյան, Ռ. Խ. Գազինյան - Արցախի գետերի երկայնակի կտրվածքների վերլուծությունը տեկտոնական շարժումների բացահայտման նպատակով	63
--	----

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կ. Օ. Եսայան - Սեփականաշնորհման ընդհանուր դրույթները և առանձնահատկությունները մորաստեղծ երկրներում (ԼՂՀ օրինակով)	68
---	----

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Շ. Մ. Աբրահամյան - Ղարաբաղյան հիմնահարցը մարդու իրավունքների տեսանկյունով	73
---	----

ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

Մ. Ա. Հարությունյան - Արցախի ինքնապաշտպանության ուժերի կազմավորումը	78
Վ. Բալայան - Մետաքսագործությունը Լեռնային Ղարաբաղում 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը	88
Ս. Վ. Դադայան - Աշխարհի դեմոկրատական երիտասարդության հակառակմական շարժումը XX դարի 40-ական թվականների II կեսին	93

ԼԵՋՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Շ. Սաղյան - Պատմական բովանդակություն ունեցող հեղինակային մորակազմությունները Հայկ Խաչատրյանի պատմավեպերում	100
Ն. Խաչատրյան - Հեզնանքը Հակոբ Պարոնյանի ստեղծագործություններում ...	107
Լ. Պետրոսյան - Ղարաբաղի «Սոս» տեղանվան ստուգաբանությունը	112

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Ռ. Ջ. Աղաբեկյան - Մանկավարժական փորձությունը ապագա ուսուցչի պատրաստման համակարգում	115
--	-----

СОДЕРЖАНИЕ

АрГУ в 1999-2000 годах	3
------------------------------	---

МАТЕМАТИКА

С. М. Марьянн - Об асимптотике решения смешанной задачи для гиперболического уравнения шестого порядка с малым параметром	5
С. К. Петросян - О существовании оператора преобразования для одного класса линейных дифференциальных уравнений второго порядка	13

ФИЗИКА

Г. С. Арутюнян - Изобарная теплоемкость и теплопроводность н-гептилового спирта	18
Ал. Г. Алексанян - Туннелирование при наличии коллапса волновой функции	22

ХИМИЯ

Р. Х. Адамян, М. Г. Арутюнян, С. К. Григорян, Г. Г. Бабаян, С. З. Сагян - Диаграмма плавкости системы Na_3AlF_6 - KCaF_3	26
Р. Х. Адамян, М. Г. Арутюнян, С. К. Григорян, Г. Г. Бабаян, В. С. Мирзоян - Новые твердые фазы в системе Na_3AlF_6 - KMgF_3	30
В. С. Мирзоян - Масс-спектры 1-арилсульфонил, 1-бензил-5-фтор уроцилов	34

БИОЛОГИЯ

С. А. Агасян - Группы крови и резус-белок у населения Нагорно-Карабахской республики	39
С. А. Агасян, А. Б. Агасян - Показатели мальчиков и девочек Нагорно-Карабахской республики в возрасте 6-20 лет до Арцахской войны, во время войны и после нее	44
А. А. Торосян, Г. А. Акопян, А. Б. Агасян, С. А. Агасян - Некоторые особенности биологического развития колорадского жука (<i>Leptinotarsa desemlineata</i>) в разных природно-климатических зонах Нагорного Карабаха	50
С. А. Агасян, А. Б. Агасян, Г. В. Абраамян - Основные показатели физического развития новорожденных детей НКР в мирное время и их изменения в экстремальных условиях	56

ГЕОГРАФИЯ

Ю. А. Аракелян, К. А. Бегларян, Р. Х. Гагинян - Анализ профилей длин рек Арцаха для проявления тектонических движений	63
---	----

ЭКОНОМИКА

<i>К. О. Есаян</i> - Общие черты и особенности приватизации в новообразованных странах (на примере НКР)	68
---	----

ФИЛОСОФИЯ И ПРАВО

<i>Ш. М. Абраамян</i> - Карабахская проблема с точки зрения прав человека.....	73
--	----

ИСТОРИЯ

<i>М. А. Арутюнян</i> - Формирование сил самообороны Арцаха.....	78
<i>В. Балаян</i> - Шелкопрядство в Нагорном Карабахе со второй половины 19-го века до наших дней	88
<i>С. В. Дадаян</i> - Антивоенное движение демократической молодежи мира во II половине 40-х годов XX в.	93

ЯЗЫК И ЛИТЕРАТУРА

<i>Ш. Сагян</i> - Нововедения имеющие историческое содержание в исторических романах Гайка Хачатряна	100
<i>Н. Хачатрян</i> - Ирония в произведениях Акопа Пароняна	107
<i>Л. Петросян</i> - Этимология карабахского топонима «Сос»	112

ПЕДАГОГИКА

<i>Р. Дж. Агабекян</i> - Обучение педагогической практики в системе подготовки будущего педагога	115
--	-----

ԿԱՆՈՆՆԵՐ ԴԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԴԱՄԱՐ

1. «ԱրՊԴ գիտական տեղեկագիր» պարբերականում հրատարակվում են Արցախի պետական համալսարանում կատարված օրիգինալ հոդվածներ, հաղորդումներ ու մամակներ տեսական և էքսպերիմենտալ բնույթի՝ մաթեմատիկայի, մեխանիկայի, ռադիոֆիզիկայի, քիմիայի, երկրաբանության, կենսաբանության, աշխարհագրության, տնտեսագիտության և հումանիտար գիտությունների բնագավառներից:

2. Ընդունվում են նաև ԱրՊԴ-ի մասնակցությամբ կայացած կոնֆերանսների, գիտաժողովների և գիտական դպրոցների նյութեր:

3. Բնագրերը ներկայացվում են երկու օրինակով, մեքենագրված երկու ինտերվալը մեկ, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփումներով: ՄԴԿ-ից (վերևի ծախս անկյունում), հոդվածի վերնագրից և հեղինակի անվանատառերից ու ազգանունից հետո բերվում է կարճ անոտացիա: Դոդվածի ծավալը աղյուսակներով չպետք է գերազանցի 10 էջը, հաղորդմանը՝ 4, մամակինը՝ 2:

4. Դոդվածի հետ ներկայացվում է արձանագրության քաղվածքը այն ամբիօնից, որտեղ կատարվել և քննարկվել է աշխատանքը:

5. Թույլատրվում է 5-ից ոչ ավելի նկար (հստակ լուսանկար կամ գծագրեր՝ արված առանձին սպիտակ թղթի վրա): Յուրաքանչյուր նկարի հակառակ կողմի վրա գրվում է կարգային համարը: Տեքստի լուսանցքներում նշվում են նկարների և աղյուսակների տեղերը:

6. Միևնույն նյութը աղյուսակի և նկարի ձևով ներկայացնել չի թույլատրվում:

7. Բերվող գրականության մասին հոդվածում նշվում է միայն կարգային համարը քառակուսի փակագծերում [1, 2-5] ըստ հանդիպման հերթականության: Դոդվածի վերջում նույն հաջորդականությամբ բերվում են գրականության ցուցակը, կարգային համարը, հեղինակների ազգանուններն ու անվանատառերը, գրքի կամ հոդվածի վերնագիրը: Պարբերական հրատարակությունների համար այնուհետև հաջորդում է ամսագրի ընդունված կրճատ անվանումը առանց չափերտների, թվականը՝ հատորի ու թողարկման համարները, հերթական համարը և էջը: Գրքերի դեպքում՝ հրատարակման վայրը, հրատարակչությունը, թվականը և էջը: Հիրատարակված աշխատանքի վերաբերյալ (բացի ատենախոսությունից) գրականության մեջ նշել չի թույլատրվում: Արտասահմանյան գրականությունը տեքստում նշվում է հոդվածի լեզվով, իսկ գրականության մեջ՝ օրիգինալով:

8. Դոդվածի տեքստի վերջում ծախս կողմում նշվում է այն ամբիօնը կամ լաբորատորիան, որտեղ կատարվել է աշխատանքը:

9. Դոդվածը ստորագրվում է բոլոր հեղինակների կողմից:

ПРАВИЛА ДЛЯ АВТОРОВ

1. В журнале «Ученые записки» АрГУ публикуются оригинальные статьи, сообщения и письма теоретического и экспериментального характера из области математики, механики, физики, радиофизики, химии, геологии, биологии, географии, экономики и гуманитарных наук, выполненные в Арцахском государственном университете.

2. Принимаются также материалы научных конференций, симпозиумов и научных школ, проведенных при участии АрГУ.

3. Рукописи представляются в двух экземплярах в машинописи через два интервала на русском, армянском или английском языках, с армянским, русским или английским резюме. После указания УДК (вверху слева), инициалов и фамилии автора и названия статьи приводится краткая аннотация. Объем статьи вместе с таблицами не должен превышать 10 страниц, сообщения-4, письма-2.

4. К статье необходимо приложить выписку из протокола заседания кафедры, где выполнена и обсуждена статья.

5. Разрешается не более 5 рисунков (контрастные фотографии или чертежи, выполненные черной тушью на белой бумаге). На оборотной стороне каждого рисунка отмечается его порядковый номер. На полях статьи должны быть помечены места рисунков и таблиц.

6. Представление одного и того же материала в виде рисунков и таблиц не допускается.

7. Цитируемая литература отмечается в тексте поочередно порядковым номером в квадратных скобках ([1, 2-5]). В конце статьи в той же очередности приводится список цитированной литературы: порядковый номер, фамилия и инициалы авторов, названия книги или статьи. В ссылках на периодические издания далее следует общепринятое сокращенное название журнала без кавычек, год, том, выпуск, порядковый номер, страница; на книги-место издания, изд-во, год, страница. Ссылки на неопубликованные работы (кроме диссертаций) не допускаются. Зарубежная литература в тексте дается на языке статьи, а в литературе-на оригинале.

8. В конце статьи слева указывается кафедра или лаборатория, где выполнена работа.

9. Статья подписывается всеми авторами.